

ISSN 2738-277X

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱԾԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԶԱՀՈՒԿՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐԳՈՒՄՆԵՐ

1 (22)

ՃԱՆՍԿՅԱՆ READING
ДЖАУКЯНОВСКИЕ ЧТЕНИЯ

ԵՐԵՎԱՆ-2025



NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF LANGUAGE AFTER H. ACHARYAN

JAHUKYAN READINGS

1 (22)

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА

ДЖАУКЯНОВСКИЕ ЧТЕНИЯ

1 (22)

Yerevan 2025
Ереван 2025

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՋԱՀՈՒԿՅԱՆԱԿԱՆ
ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

1 (22)

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2025

Գլխավոր խմբագիր՝ Վ.Լ. Կատվալյան
Պատասխանատու քարտուղար՝ Ն.Գ. Հովհաննիսյան

Խմբագրական խորհուրդ

Ա.Վ. Գալստյան, Գ.Կ. Խաչատրյան, Վ.Գ. Համբարձումյան, Լ.Շ. Հովհաննիսյան, Հ.Հ. Մեսրոպյան, Գ.Մ. Մխիթարյան, Ն.Ս. Սիմոնյան, Դոնապետյան Անահիտ (Ֆրանսիա), Դում-Թրագուտ Յասմին (Ավստրիա), Վլ. Պլունգյան (Ռուսաստան), Սկալա Անդրեա (Իտալիա), Պ.Ա. Քոչարով (Ռուսաստան)

Editor-in-chief - V.L. Katvalyan
Executive secretary - N.G. Hovhannisyan

Editorial Board

A.V.Galstyan, G.K. Khachatryan, V.G. Hambardzumyan, L.Sh. Hovhannisyan, H.H. Mesropyan, G.M. Mkhitryan, N.M. Simonyan, Donabedian-Demopoulos Anaïd (France), Dum-Tragut Jasmine (Austria), Petr A. Kocharov (Russia), Plungian Vladimir (Russia), Scala Andrea (Italy)

Главный редактор - В.Л. Катвалян
Ответственный секретарь - Н.Г. Оганесян

Редакционная коллегия

А.В. Галстян, Г.К. Хачатрян, В.Г. Амбарцумян, Л.Ш. Оганесян, А.А. Месропян, Г.М. Мхитарян, Н.М. Симонян, Донабедян-Демопулос Анаид (Франция), Дум- Трагут Ясмин (Австрия), Кочаров Петр Александрович (Россия), Плунгян Владимир (Россия), Скалла Андреа (Италия)

DOI: 10.54503/2738-277X

Գևորգ Զահուկյան – 105

ԳԵՎՈՐԳ ԶԱՀՈՒԿՅԱՆԸ՝ ԳԻՏԱԿԱՆԻ ՃՇՄԱՐԻՏ ԿԵՐՊԱՐ

Ակադեմիկոս Գևորգ Զահուկյանը 1962 թ. նշանակվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն: Երկար տարիներ կատարել է նաև լեզվի ինստիտուտի՝ գիտական աստիճաններ շնորհող խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեի փոխնախագահի պարտականությունները, հետագայում՝ ղեկավարել Լեզվի տեսչության հայերենի բարձրագույն խորհուրդը:

Գործուն մասնակցություն է ունեցել կրթական պետական գերատեսչությունների ուսումնամեթոդական խորհուրդների աշխատանքներին: Մեծ գիտնականի վաստակը հայրենական գիտության և կրթության ասպարեզներում գնահատվել է բարձր կոչումներով, կառավարական պարգևներով և մրցանակներով: Նա գիտության վաստակավոր գործիչ էր, Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, ակադեմիկոս:

Գևորգ Զահուկյանը եզակի էր իր առաքելությամբ և թողած հետքով: Նա բացառիկ անհատականություն էր ոչ միայն իր գիտական հարուստ ժառանգությամբ, այլև լեզվի համաշխարհային լեզվաբանական մտքի զարգացման մեջ ունեցած վիթխարի ներդրմամբ:

Նա իր ամբողջ կյանքով ու գործով այն վիճահարույց պատկերացման մերժումն էր, ըստ որի՝ անփոխարինելի մարդիկ չկան: Նա ուներ այն բարձրագույն տեղը, որը դեռ երկար ժամանակ կմնա աննվաճ: Մեզ՝ հայ մասնագետներիս համար հաճելի է գիտակցել,

որ մեծ գիտնականի անունը հավերժացել է խոշորագույն հայագետների և ընդհանուր լեզվաբանների համաշխարհային փառանքում և հպարտության բերկրանքով լցրել իր ժողովրդի սիրտը:

Լեզվական հարցերի խորքային քննության ջահուկյանական սկզբունքը պահանջում էր դասական բանասիրության, բազմաթիվ լեզուների հիմնավոր իմացություն, և այդ ամենը հարկ էր գուգակցել լեզվաբանության նորագույն նվաճումներին: Այս շնորհների մեկտեղման մարմնացումն էր Գևորգ Ջահուկյանը: Եվ պատահական չէ, որ նման գիտական մեծությունը միայն կարող էր հղանալ համընդհանուր լեզվաբանական տեսություն ստեղծելու գաղափարը: Նա այն բացառիկ հայ լեզվաբաններից էր, որը, շարունակելով աճառյանական ավանդույթը, մայրենի լեզուն տեսնում էր ավելի լայն լեզվական համատեքստում՝ ընդհուպ մոտենալով համընդհանուր լեզվաբանական կաղապարի գաղափարին՝ որպես բազում լեզվական խնդիրների լուծման ընդհանրական բանալու:

Գևորգ Ջահուկյանի մասին մտորելիս հիշում եմ ավետարանական այն իմաստությունը՝ «բազումք են կոչեցեալք եւ սակաւք՝ ընտրեալք»: Իսկապես, Գևորգ Ջահուկյանը բազում կանչվածներից չէր, որոնք շատ են. նա ընտրյալ էր:

Գևորգ Ջահուկյանը ծնվել է 1920 թ. ապրիլի 1-ին Կալինինյոյի շրջանի Շահնագար գյուղում (այժմ՝ Մեծավան): Դպրոցն ավարտել է Երևանում, բարձրագույն կրթությունը ստացել Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում, այնուհետև ծառայության անցել խորհրդային բանակում: Ծառայությունից հետո սովորել է ասպիրանտուրայում. նրան բախտ է վիճակվել լինելու մեծն Աճառյանի ասպիրանտը: 1947 թ. բարձր մակարդակով պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում» թեմայով: 1955 թ. նրան շնորհվել է բանասիրական

գիտությունների դոկտորի գիտական աստիճան՝ «18-19-րդ դարերի հայ լեզվաբանական միտքը և աշխարհաբարի հարցերը» ատենախոսության համար: Հընթացս գիտական աշխատանքին՝ շուրջ 60 տարի նա զբաղվել է մանկավարժական աշխատանքով՝ դասավանդելով ժամանակակից հայոց լեզու, գրաբար, լատիներեն, հին հունարեն, գերմաներեն, լեզվաբանության պատմություն, համեմատական քերականություն, ընդհանուր լեզվաբանություն և այլն: Այդ ամենին նա կարողացել է նաև համատեղել վարչական աշխատանքը՝ տարբեր տարիներ ղեկավարելով Երևանի պետական համալսարանի օտար լեզուների և ռոմանագերմանական բանասիրության ամբիոնները: Նրա մուտքով ինստիտուտ և անմիջական ղեկավարությամբ որոշվել են գիտահետազոտական աշխատանքների հիմնական ուղղությունները, արձանագրվել են նշանակալի գիտական արդյունքներ:

Ջահուկյանը որքան մեծ էր՝ որպես գիտնական, այնքան էլ խոնարհ՝ որպես մարդ: Անսահման իմացության ու փիլիսոփայական խոր ներըմբռնման տեր այդ մարդը երբե՛ք իրեն առաջ չէր մղում, առտնին խանդավառ աղմուկներն ու փառքով երջանկանալը թողնում էր ուրիշներին՝ իրեն պահելով լեզվի անխոնջ մշակի՝ ի վերուստ իրեն վերապահված առաքելությունը: Վայելելով ժամանակակիցների սերն ու հարգանքը՝ նա, այնուամենայնիվ, իր ամբողջ կյանքն ապրեց ասկետական մենության մեջ՝ գուցե միայն իրե՛ն հայտնի թախիծն իր մեջ, բայց աշխարհին ու հայրենիքին սիրով նվիրեց իր մտքի գանձերը: Գևորգ Ջահուկյանը գիտնականի ճշմարիտ կերպար էր, և իմ այս խոսքում նրա հենց այդ արժանիքն եմ ուզում ընդգծել:

Մեծ գիտնականը նրանո՛վ է մեծ, որը ոչ թե լոկ գննում է ակնհայտը, ուսումնասիրվածը, այլ բացում առկա փաստերի ընկալման ու գնահատման նոր ճանապարհներ, առաջադրում հե-

տագոտության նոր դիտանկյուններ ու մեթոդներ: Եվ որքան բժախնդիր էր նա լեզվական երևույթների ճշգրիտ նկարագրության ու համադրման հարցում, նույնքան էլ ծայրաստիճան բարեխիղճ՝ նոր մեթոդները հիմնավորելիս ու կիրառելիս: Օրինակ՝ բարբառների դասակարգման բազմահատկանիշ սկզբունքի մշակմամբ ու կիրառմամբ Ջահուկյանը, ըստ էության, սկիզբ դրեց վիճակագրական բարբառագիտությանը. ավելին՝ այդ մեթոդը դարձավ արդյունավետ ու ճշգրիտ մեթոդ նրա հետագա ուսումնասիրությունների, մանավանդ՝ հայերենի և այլ հնդեվրոպական լեզուների ընդհանրությունների խնդիրների քննության համար: Ընդհանրապես, դասակարգումը՝ որպես խնդրո առարկայի ճանաչման ու ամբողջական գնահատման եղանակ, սկզբունքային էր Ջահուկյանի համար: Այսօր շատ մասնագետներ են պնդում, որ նա առավել կմեծացներ, անգամ կբազմապատկեր իր ուսումնասիրությունների ծավալը, եթե ձեռքի տակ ունենար վիճակագրական տվյալներն արագ արձանագրող ու համադրող ներկայիս տեխնոլոգիական հնարավորությունները: Այս առումով լուսահոգի ակադեմիկոսի վաստակն անգնահատելի է և ուղենշային այսօր տարերայնորեն ընթացող լեզվի, այդ թվում՝ հայերենի համակարգչային ծրագրավորման աշխատանքներում:

Շատ քիչ լեզվաբանների աշխատությունների է բախտ վիճակվել, բացի մասնագիտական շրջանակներից, արժանանալու նաև լայն հանրային հետաքրքրության, ինչպիսին, օրինակ, Աճառյանի արմատական և անձնանունների բառարաններն էին: Եվ ահա 1987 թ. ընթերցողի սեղանին դրվեց Գևորգ Ջահուկյանի «Հայոց լեզվի պատմություն: Նախագրային շրջան» գիրքը: Այս կոթողային աշխատանքն առաջինն էր, որ վերջապես պետք է լույս սփռեր հայոց լեզվի վաղնջական վիճակի վրա և ոչ միայն պաշտոնապես արժանանար խրախուսանքի՝ պետական մրցանակի, այլև

ընդհանրապես դառնար քննարկման նյութ հայ մտավորականության շրջանում:

Նրա սաները աճել և գիտական հասակ են առել իր աշխատություններից՝ պատմահամեմատական լեզվաբանություն, ընդհանուր լեզվաբանություն, բարբառագիտություն, հայոց լեզվի պատմություն, համեմատական քերականություն: Այսօր դժվար է գտնել այդպիսի լայն գիտական ընդգրկման հետազոտողի, որն իր կերպարում ներառի խոշոր տեսաբանին, բազում լեզուների բացառիկ տիրապետողին, նորարարական գաղափարներ հղացողին ու կիրառողին: Նրա ստեղծած ջահուկյանական լեզվաբանական դպրոցն ինքնին ոչ միայն գիտական, այլև, եթե կուզեք, մի մեծ մշակութային երևույթ է, որովհետև ընդլայնել է հայոց լեզվի ճանաչողության սահմանները՝ նպաստելով առհասարակ հումանիտար մտքի և մանավանդ գրական հայերենի՝ մինչ այդ անհայտ շերտերի իմացությանը:

Երջանկահիշատակ գիտնականը նաև մեծ մարդ էր և քաղաքացի: Մի ուշագրավ էջ նրա կենսագրությունից: 1947 թ. ավարտելով ասպիրանտուրան և պաշտպանելով թեկնածուական ատենախոսությունը՝ երիտասարդ լեզվաբանը մինչև 1950-ական թվականները ոչինչ չի գրում: Լեզվաբան Ջահինյանի կարծիքով՝ գիտնականի նրա խիղճն ու ազնվությունը իրեն թույլ չեն տալիս տուրք տալու ժամանակի հայտնի արատավոր լեզվաբանական ուսմունքին: Շատերը կհիշեն, թե որքան էր սիրում մտերմիկ հավաքույթների ժամանակ անեկդոտներ ու զվարճալի պատմություններ պատմել: Պատմում էր և ինքն էլ բոլորի հետ լիաթոք ծիծաղում:

Գևորգ Ջահուկյանը սիրով արձագանքում էր նաև հանրալեզվաբանական և մանավանդ լեզվաքաղաքական զանազան խընդիրներին: Մասնավորապես, անգնահատելի է նրա վաստակը հայերենի կանոնարկման և տերմինակերտման սկզբունքների մշակ-

ման հարցերում: 1986 թ. նրա կազմած «Հայերենի տերմինակազմության սկզբունքները» իր նշանակությամբ կարևորագույն գերատեսչական նորմատիվ ակտ է, և հետևաբար օրենքի ուժ ունի լեզվագործածության բոլոր բնագավառներում: Պարզ է, որ նման փաստաթուղթ շրջանառության մեջ դնելու համար պահանջվում էր նախ մասնագիտական անվերապահ բարձրագույն որակ և մեծ պատասխանատվություն, որովհետև այն կիրառվելու էր ոչ միայն կրթության, գիտության, այլև պետք է գործածելի լիներ ամենուր: Մինչ այդ՝ դեռևս 1939 թ., Տերմինաբանական կոմիտեն սահմանել էր գիտական և գիտատեխնիկական տերմինների մշակման սկզբունքները, սակայն, ինչպես Ջահուկյանն է նշել փաստաթղթի ներածական մասում, առկախ էր մնացել այն հարցը, թե ինչ որոշակի սկզբունքներով պետք է առաջնորդվել ժամանակակից լեզվի բառակազմական միջոցներով տերմիններ կազմելիս և հնարավոր բառակազմական տարբերակներից որին պետք է գերադասություն տալ: Եվ Ջահուկյանն առաջադրում է այն սկզբունքը, որ ժամանակակից հայերենի բառակազմական միջոցներով, հատկապես ածանցմամբ և բարդմամբ պետք է տերմիններ կազմել միայն այն դեպքում, երբ պարզվում է, որ տվյալ տերմինային իմաստների համար հայերենում լիովին համապատասխան բառեր չկան: Պատմական ժառանգորդությունը չխախտելու նպատակով գիտնականը պահանջում է նաև լայնորեն գործածվող տերմիններն այլ տերմիններով փոխարինել միայն ամենաանհրաժեշտ դեպքերում: Մեծ լեզվաբանի նշած այս դրույթը այսօր էլ խիստ արդիական է և հրատապ, որովհետև բազմաթիվ են այն դեպքերը, երբ առանց որևէ մասնագիտական քննարկման մեջտեղ են բերվում հնարածին, իմաստաբանորեն տվյալ առարկայի գործառնությունը չարտահայտող և անբարեհունչ բառեր՝ տերմին դարձնելու հավակնությամբ: Ջահուկյանը հայտնի տերմինն այլ տերմինով փոխարինելու ամե-

նաանհրաժեշտ դեպքերից է համարում, երբ եղած տերմինների գործածությունը կարող է առաջ բերել թյուրըմբռնում և խստորեն հակասել դրանց արդի իմաստներին: Նշելի է նաև նրա սահմանած վերջին սկզբունքը, ըստ որի՝ պետք է խուսափել հայոց լեզվի բառակազմական սկզբունքներից շեղվող, բառերի կամայական ստուգաբանության վրա հիմնվող, խիստ արհեստական և անհասկանալի տերմիններ ստեղծելուց և տերմինային տարրերը կամայական կրճատելուց:

Այս կարճ խոսքը այնպիսի մեծ երևույթի մասին, ինչպիսին Գևորգ Ջահուկյանն է, ուզում եմ ավարտել երիտասարդ տարիներին նրա գրած մի փոքրիկ բանաստեղծությամբ, և ահա թե ինչու: Նա բանաստեղծություններ գրել է վաղ տարիքից, երբ մոտ տասնհինգ տարեկան էր: Չի տպագրվել, բայց սիրով պահպանել է իր պատանության օրերի այդ նվիրական մասունքները: Նրա գործընկերներն ու ուսանողները կհիշեն, թե ինչ գործվանքով էր խոսում իր գրական փորձերի, իր բանաստեղծությունների մասին: Այո՛, բանաստեղծական խառնվածք էր նա, որի մեջ միահյուսված էին խոր ու զգայուն մարդու նուրբ քնարականությունն ու հզոր գիտական միտքը: Այս հանգամանքը մի հավելյալ, ուրույն հմայք է տալիս նրա կերպարին և երիցս հաստատում մեծ գիտնականի եզակի լինելը: Ահա այս բանաստեղծությունը, որն ասես նրա մի ամփոփ հայացքն է իրեն ու այս աշխարհին.

«Ինչ որ կար իմ սրտում խնդագին ու բարի,
Ինչ որ կար իմ սրտում և՛ գեղեցիկ, և՛ լավ,
Ես բոլորը տվի մարդկանց ու աշխարհին,
Այնպես անհոգ, ասես չեմ ունեցել բնավ»:

Ահա նաև այսպիսի՛ն է եղել Գևորգ Ջահուկյանը՝ իսկական գիտնականի ճշմարիտ կերպարով:

Ամփոփելով՝ փաստենք, որ Գևորգ Ջահուկյանը գիտնականի ճշմարիտ կերպար էր, և նրա հենց այդ արժանիքն է ընդգծվում: Նա ոչ միայն հայ լեզվաբանական գիտության առաջամարտիկներից էր, այլև համաշխարհային լեզվաբանական մտքի զարգացման արժանավոր ներկայացուցիչ է:

Նրա աշխատությունները հիմք են եղել հետագա լեզվաբանական բազմաթիվ հետազոտությունների համար, իսկ նրա տեսական մոտեցումները՝ որպես նորարարություն, երկար ժամանակ պահպանելու են իրենց արժեքը:

Սուքիասյան Հենրիետա

բանասիրական գիտությունների թեկնածու,

ԵՊԲՀ հայոց լեզվի ամբիոնի վարիչ

ՀՈԴՎԱԾՆԵՐ
ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԿՈԶԵՆԻ ԲԱՐԲԱՌԻ
ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՇՈՒՐԶ*

DOI: 10.54503/2738-277X.2025.1(22)-13

Խաչատրյան Հասմիկ

բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
ավագ գիտաշխատող. Hasmikkhach1960@gmail.com

Բանալի բառեր. Կոզենի բարբառ, բառապաշար, Ղարաբաղ-Շամախիի միջբարբառ, հնչյունափոխություն, բնիկ հայերեն բառ, փոխառություն, բառիմաստային ճյուղավորում, գրաբար:

Ներածություն

Կոզենը պատմական Արցախ նահանգի հյուսիսային բնակավայրերից է: Այն գտնվում է Ադրբեջանի Թովուզի շրջանում (պատմական Ելիզավետպոլի նահանգի Ղազախի գավառում՝ Կուր գետի աջ ափին): Ադրբեջանական մի շարք գյուղերի մեջ կղզիացած միակ հայկական գյուղն է եղել: Հարկ է փաստել, որ մինչև 1960-ական թվականները Կոզենը զուտ հայաբնակ էր, իսկ 1961 թ. տվյալներով Կոզենում հայերի հետ արդեն ապրում էր ադրբեջանցի 30 ընտանիք: 1988 թ. գաղթից առաջ ադրբեջանցիների թիվը կրկնապատկվել էր:

Ըստ տարբեր հեղինակների՝ Կոզենը նախկինում ունեցել է 700 տուն հայ բնակիչ, բայց հետզհետե հայերի թիվը նվազել է:

* Ներկայացվել է 24.06.2025, գրախոսվել՝ 17.07.2025:

Գյուղում եղել է Ս. Հովհաննես եկեղեցի, գերեզմանոց՝ 600 տարվա տապանաքարերով, մատուռ-ուխտատեղիով, իսկ հարևանությամբ՝ հին գյուղատեղի:

Կոզենի բարբառի մասին առաջին տեղեկությունները հանդիպում են 1850-ական թվականներից: Ըստ որոշ հետազոտողների՝ կոզենցիները «հայադավան և հայախոս դարձած ուտիացոց մնացորդներ են»², և որ Կոզենի բարբառը աղերսներ ունի ուտիերենի հետ կամ Ագուլիսի բարբառի ժառանգորդն է: Դ. Կարբելաշվիլին և Վ. Ղուկասովը 1934 թ. գյուղում կատարած ուսումնասիրություններից հետո սակայն, փաստել են, որ Կոզենի բարբառն իրականում որևէ կապ չունի ուդիերենի հետ, և այն Խոյի, Ղարաբաղի, Ագուլիսի բարբառների ու թուրքերենի մի յուրօրինակ խառնուրդ է:

Կոզենի բարբառի հանգամանալից ուսումնասիրություն է կատարել Ռ. Բադրամյանը՝ 1961 թ. հրատարակելով «Կոզենի բարբառը» մենագրությունը:

1998 թ. «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով» (այսուհետև՝ ՀՖԱ) կատարված հարցումներով Կոզենի բարբառը գրանցվել է կոզենցիներ Ենգիբար Դավիթի Հովհաննիսյանից (ծնվ. 1923 թ.), Թազագյուլ Սարգսի Ոսկանյանից (ծնվ. 1925 թ.) և նրանց դուստր Սեդա Դավթյանից (ծնվ. 1958 թ.): Ծնողները ծնվել և Կոզենում ապրել են մինչև 1990 թ., իսկ դուստրը՝ մինչև 1981 թ.):

¹ Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բաբսեդյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 3, Ե., 1991, էջ 242:

² А.Д. Ерицов, *Экономический быт государственных крестьян Казахского уезда Елизаветпольской губерний*, Тифлис, 1886, с. 44.

³ Д. Карбелашвили, *Кирзан и кирзаныцы*, Известия Азерб. филиала АН СССР, N 2, 1937, с. 42.

⁴ Ռ. Բադրամյան, *Կոզենի բարբառը* (այսուհետև՝ ԿԲ), Ե., 1961:

1990-ական թվականներին Դաշտային Ղարաբաղում և Ադրբեջանի այլ վայրերում ապրող հայության հետ տեղահանվեցին նաև կոզենցիները: Նրանց մի մասը բնակություն հաստատեց Արարատի մարզի Մասիսի շրջանի Միս գյուղում, և այսօր էլ այնտեղ բնակվող կոզենցիների ավագ և միջին սերունդը խոսում է Կոզենի բարբառով:

Հոդվածի նպատակն է քննել Կոզենի բարբառի բառապաշարի հինհայերենյան ինքնատիպ դրսևորումները:

Գ. Զահուկյանը, ըստ բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման, Կոզենի բարբառն ընդգրկել է հայերենի բարբառների արևելյան խմբակցության Ղարաբաղ-Շամախիի միջբարբառախմբի կազմում որպես առանձին բարբառ:

Բարբառագիտության խնդիրներից՝ Կոզենի բարբառի բառապաշարային հատկանիշների քննությունը կարևորվում է հատկապես այն պատճառով, որ բնօրրանից կտրված այս բարբառը կորստյան վտանգի առջև է կանգնած: Բարբառային միավորի պահպանված վիճակի ամրագրմամբ և բարբառային նյութի քննությամբ արձանագրվում են հայերենի յուրահատուկ բարբառներից մեկի՝ Կոզենի բառապաշարի ուշագրավ դրսևորումները: Քննությունը կատարվում է տարածամանակյա մեթոդով:

Բառապաշարային առանձնահատկություններ

Բարբառային բառապաշարը բարբառագետները դիտարկել են նախ և առաջ իբրև հին և հնագույն բառերի ու բառաձևերի շտեմարան: Դրանց առավել հանգամանորեն անդրադարձել է Գ. Զահուկյանը՝ ներկայացնելով բարբառների բառային հնաբանությունները⁵: Բարբառների հինհայերենյան բառաշերտում առկա են

⁵ Գ. Զահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 277-330:

գրաբարյան մատենագրության մեջ իրենց զուգահեռներն ունեցող, սակայն արդի գրական հայերենում ոչ գործածական բառեր ու բառաձևեր: Սույն հոդվածում նախ ներկայացվում են Կոզենի բարբառի հինհայերենյան բառաշերտի որոշ բառանուններ:

1. Գէնալ բարբառային բառը ծագումնաբանորեն սերում է *qqենուլ*՝ «հագնել», *qqեցուցանել*՝ «հագցնել» հնդեվրոպական արմատից: Այն բնիկ հայերեն բառ է, որ ծագել է հնիս. ves-ից: Ըստ Հ. Աճառյանի՝ «Հնիս. ves-ը պարզական արմատ չէ, այլ աճած է eu «հագնիլ» արմատից: Հնիս. ves-ը տուած է հայերենի մեջ» և՛ s-ի անկումով՝ *գե, և՛ բայական վերջավորությամբ՝ **qենուլ*, իսկ «ստմասնիկով՝ *գեստ (հմմտ. հագուստ, գալուստ, զգաստ)»։ սրանք այնուհետև *q* նախդրով դարձել են *qqենուլ*, *qqեստ*։ Գ. Զահուկյանը ևս բառը համարում է բնիկ հնդեվրոպական *ues-նու- հիմքից՝ *ues- «հագնել» ձևից՝ համեմատելով հ. հնդկ. vastē, ավ. vaste «հագնվում է», լատ. vestis «զգեստ» բառերի հետ»։ Հարկ է փաստել սակայն, որ Կոզենի բարբառում առկա են *qqենուլ* բայի արմատական, աննախդիր ձևերը՝ *qենալ* «հագնել», և *qեցի* «հագուստ»։ օրինակ՝ Յուռտ էր, թաթնօցը *qեցալ*, նօր գընաց դուռը (Յուրտ էր, ձեռնոցը հագավ, նոր գնաց դուրս)։ Շերթերը *qեցալ* (Շորերը հագավ)։ Պապըս լավ տըրէխ էր *qեցէլ* (հագել)։ *Գեցկը* շատ սըրոն էր (Հագուստը շատ սիրուն էր)։ *Գեցի* լրհինը շատ սըրոն էր (Հագի զգեստը շատ սիրուն էր)»։

Հակված ենք կարծելու, որ Կոզենի բարբառի *qենալ* և *qեցի* բառանուններում պահպանվել են բառի հնագույն ձևերը, այսին-

⁶ Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 2, Ե., 1973, էջ 88:

⁷ Գ. Զահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան* (այսուհետև՝ ՀՍԲ), Ե., 2010, էջ 235:

⁸ Օրինակները՝ բարբառախոս Սեդա Դավթյանի բանավոր հարցումներից:

քըն՝ բարբառային *զենալ*-ը և *զեցկ*-ը գրաբարից ավելի հին կազմություններ են:

Այս հարցին, ի դեպ, անդրադարձել է նաև Ն. Միմոնյանը՝ արձանագրելով, որ հայ բարբառներում առկա առանց *զ* նախդիրի ձևերը՝ *կենալ*, *կեց տալ*, *կեցիլ*, *կեցվիլ*, *զ'եստ*, իմաստային առումով չեն տարբերվում նախդրավոր ձևերից: Ըստ նրա՝ «այդ ձևերը համարվում են ավելի նախնական, հին, քան գրաբարյան զգենուլ-ը, և դիտվում են իբրև հնդեվրոպական հնաբանություն»⁹:

2. Հաք: Հին մատենագրության մեջ առկա *աք* բառանունը Գ. Զահուկյանը համարում է հյուսիսկովկասյան փոխառություն՝ այն ընդգրկելով հին շրջանի սկզբին ավանդված փոխառությունների ցանկում. հմմտ.՝ արչ. *ak*, թաբ. *akz*, *agg* «ոտք»¹⁰: Կոզենի բարբառում պահպանվել է հին հայերեն *աք* բառանունը, որը գրական հայերենում և բարբառների մեծ մասում չի գործածվում: Գրական հայերենում այն, իհարկե, պահպանվել է մի քանի բառերում, ինչպես օրինակ՝ *առաքել* և *սայթաքել*, *քացի* կամ *աքացի տալ*: Բարբառում բառանունը *հաք* հնչաձևով է գործածվում. օրինակ՝ Սըրկի շատ ըմ ման յեկած, *հաքըէրս* ցավըիս ի (Այսօր շատ եմ ման եկել, ոտքերս ցավում են): *Հաքըիս* պըտիկյանին ցավըէս ըն (Ոտքիս բութ մատները ցավում են): Ուշագրավ է հատկապես *հաքա հըղէք* բառակապակցությունը «պետքարան» նշանակությամբ: Ինչպես հայտնի է, որոշ բարբառներում «պետքարան» հասկացությունը դրսևորվում է *ոտաց ճանապարհ* բառակապակցությամբ: Սովորաբար պետքարանները գյուղերում եղել են տնից փոքր-ինչ հեռու, և այնտեղ պետք էր հասնել ոտքով. այստեղից էլ

⁹ Ն. Միմոնյան, *Հայերենի բայակազմության մի քանի հարցեր (ծագումնաբանական քննություն)*. - Հայոց լեզվի պատմության հարցեր, հ. 3, Ե., 1991, էջ 288:

¹⁰ Գ. Զահուկյան, *Հայոց լեզվիսպատմություն: Նախագրային ժամանակաշրջան* (այսուհետև՝ ՀԼՊՆԺ), Ե., 1987, էջ 609: ՀՄԲ, էջ 106:

ձևավորվել է *ոտազ ճանապարհ* բառանունը: Այսինքն՝ Կոզենի բարբառում գործածվող *հաքա հըղէք*-ը նույն տրամաբանությամբ է առաջացել:

Ոտաբորիկ հասկացությունը բարբառում դրսևորվում է *աք* արմատով ձևավորված *հաքըբէբիկ* բառով. օրինակ՝ Հըրնին արախըն *հաքըբէբիկ* գյօս ի (Ահա երեխան ոտաբորիկ գալիս է): Բառիմաստային ճյուղավորմամբ՝ *աք*՝ «*ոտք*» արմատից է *հըբըվէր-վէլ* բայը՝ «քայլել սկսել, գործ ձեռնարկել» իմաստով¹¹: Բարբառախոսների վկայությամբ *հաքավըրվէլ* հնչատարբերակն արդեն բառիմաստային զարգացմամբ ձեռք է բերել «*պատրաստվել ինչ-որ բան ձեռնարկելու*» նրբիմաստը: Օրինակ՝ *Հաքավըրված* ըի, վօր ուժէ գընա (Պատրաստվել է, որ արդեն գնա): *Հաքավըրված* ջա, զօս ըի գընա (Արդեն պատրաստվել է, ուզում է՝ գնա):

3. Աղագ: Գ. Ջահուկյանը հնագույն հայերենի բարբառային տարբերակները ներկայացնելիս *ուղի* բառի հոմանիշ է դիտարկել *աղագ* բառանունը (ուղի-աղագ-ճանապարհ-ճապաղ) (հմմտ. արա-հետ)¹²: Ըստ նրա՝ բառի ծագումն անհայտ է, և այն հազիվ թե կապ ունենա ակկադ. alāku(m), alaktu «ընթացք, ճանապարհ, ուղի» բառերի հետ¹³: Հ. Աճառյանը «ճանապարհ» իմաստով *աղագ* բառի մեկ օրինակ է բերում՝ վկայակոչելով Ոսկեբերանին: Երկրորդական նշանակությունն է «հնարք, կերպ, միջոց», գործածված են նաև հոլովված ձևերը՝ գործիականը՝ *աղագալ*՝ «պատճառով», հայցական կամ ներգոյականը՝ *յաղագս*՝ «համար, վասն» իմաստներով: Ըստ Հ. Աճառյանի՝ բոլոր ձևերի նախնական նշանակությունը «*ճանապարհ*»-ն է¹⁴:

¹¹ ԿԲ, էջ 213:

¹² ՀԼՊՆԺ, էջ 405:

¹³ ՀՄԲ, էջ 33:

¹⁴ ՀԱԲ, հ. Ա, Ե., 1971, էջ 117:

Բարբառային հայերենում *աղագ*-ը հանդես է գալիս *աղաք* հնչատարբերակով և հիմնականում որպես «առաջ, առջև» բառերի նշանակելի (Երևան, Սուրմալու, Ղազախ, Լոռի, Թիֆլիս ևն)¹⁵։ Կոզենի բարբառը այն ինքնատիպ բարբառներից է, որոնցում *աղաք*-ը ոչ միայն *առաջ* (ժամանակի իմաստով) և *առջև* (տեղի իմաստով) նշանակություններով է գործառում, այլև *հրղըք՝* իր սկզբնական՝ «ճանապարհ» իմաստով. օրինակ՝ Փրշիկը դրոնա *աղաքըին* պարանված ըի (Կատուն դռան առաջ պառկած է)։ *Աղաք* մեր շրնմը թուրք չի կրեր (Առաջ մեր գյուղում թուրք չկար)։ *Հրղըքը* քոլի մըջով ըի անց կանալի (Ճանապարհը անտառի միջով է անցնում)։ *Հրղկըէրքով* ման գյօլով գընէլինք (Ճանապարհներով ման գալով գնում էինք)։ Էտ *հրղկովը* յես զոյի գընամ մեր քօլը (Այդ ճանապարհով ես ուզում էի՝ գնամ մեր անտառ)։ Մեր շրնի *հրղկըէրքը* քարքարօտ էլլին (Մեր գյուղի ճանապարհները քարքարօտ էին)։ Գործածվում է նաև *հրղիք գըձէլ* հարադրությունը՝ «ճանապարհել» իմաստով. օրինակ՝ Էդ մարդին *հրղիք գըձէ* թօ գընա։

Հարկ է փաստել, որ ՀԲԱ ծրագրով հավաքած այլ բարբառներում ևս ունենք եզակի նմուշներ, որոնցում անաղարտորեն պահպանվել է *աղաք*-ի «ճանապարհ» իմաստը. օրինակ՝ Հավարիկում՝ *հրղըք*, Կարճևանում՝ *հրղաք*¹⁶։ Բառանունը արձանագրվել է նաև Արեշի բարբառում՝ *հրղըք*¹⁷, իսկ ըստ է. Աղայանի՝ Մեղրու բարբառում *հաղակ*-ը «այգու մուտքի ճանապարհ»-ն է։ Այս բարբառում վկայված է նաև *կըսըհըխկէ* (նաև՝ *կըսըհըխկէց*) բառը, այսինքն՝ *կէս+աղագ* բառերից բաղադրված բառանուն՝ «ճանա-

¹⁵ Հայոց լեզվի բարբառային բառարան, հ.Ա, Ե., 2001, էջ 37։

¹⁶ Տե՛ս լեզվի ինստիտուտի արխիվ, ՀԲԱ գրանցումներ (այսուհետև՝ ԼԻ արխիվ), տետրեր հհ. 40, 21։

¹⁷ Ա. Լուսինց, *Արեշի բարբառը*, Ե., 1982, էջ 230։

պարհի կեսին» իմաստով¹⁸: Ավելին՝ ըստ մեր բարբառախոսների վկայության՝ Հաղպատի և Տավուշի մարզի որոշ գյուղերի խոսվածքներում այսօր էլ գործածական է *աղաք*-ից բաղադրված *կըր-ճաղաք* բառանունը՝ «արահետ, կարճ ճանապարհ» նշանակությամբ:

«Հայոց լեզվի բարբառային բառարան»-ում ևս արձանագրվում է *կարճաղագ* բառը՝ որպես «կարճ, կտրուկ ճանապարհ» հասկացության նշանակելի, որը գործածվել է Արարատյան բարբառում, Ղազախի, Լոռու և Գանձակի խոսվածքներում¹⁹: Հարկ է հիշատակել նաև Սասունի բարբառում վկայված *աղագ* բառանունը, որը, սակայն, խոսվածքում բառիմաստային ճյուղավորմամբ «ծառի ճյուղերից գործված դուռ կամ ցանկապատ» նշանակությամբ է փաստված²⁰:

4. Կաքավ: Կոզենի բարբառում *կաքավ* բառն առկա է *կաքահավ* բառագուգաբանությամբ: Հ. Աճառյանը *կաքավ* բառը համեմատում է ասորական, հունական, լատինական ձևերի հետ: Եվ ըստ նրա՝ «հնդեվրոպագետները յն. և լտ. բառերը հնդեվրոպական բնաձայն բառեր են» համարում, և դրանք կցվում են լատիներեն *cacillo*՝ «հավի կարկաչելը», գերմ. *gackern* «ածող հավի կարկաչելը», ռուս. *kokотать*, ֆրանս. *coq*, դան. *kok*, սանս. *kukkubha* «փասիան» ձևերին²¹: Գիտնականը բառի ասորական ծագումը կասկածելի է համարում, որովհետև սեմական այլ լեզուներում այն չի հանդիպում: Եվ հավանական է համարում, որ հայերենում *կաքավ* բառը բնիկ է և ցեղակից է հնդեվրոպական ձևերին²²:

¹⁸ Է. Աղայան, *Մեղրու բարբառը*, Ե., 1954, էջ 96, 310:

¹⁹ Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Գ, Ե., 2004, էջ 62, 194:

²⁰ Վ. Պետոյան, *Սասունի բարբառը*, Ե., 1954, էջ 101:

²¹ ՀԱԲ, հ. 2, էջ 563:

²² ՀԱԲ, հ. 2, էջ 563-564:

Գ. Ջահուկյանը *կաքալ*-ը ենթադրաբար բնիկ հայերեն *kak(k) բնաձայն արմատից առաջացած բառ է համարում՝ որպես բնաձայնությունն առանց բաղաձայնական տեղաշարժի կամ դրափոխությանբ. հմմտ. հուն. kakkáβη «կաքավ», kakaξω կչկչալ, կակավի ձայն²³: ՀԼՊՆԺ-ում ևս նա անդրադառնում է այս բառին՝ գրելով, որ այն ձևով և իմաստով ամենից ավելի մոտ է հուն. *կաքավ* բառին, ապա նաև լտ. caccilāre, ստորին գերմ. kakkeln բառերին, որոնք հանգեցվում են *kakk բնաձայն արմատին²⁴:

Կոզենի բարբառում առկա *կաքահալ* բառանունը մտորելու տեղիք է տալիս. *կաքավ* բառը չի՞ առաջացել արդյոք *կակ* բնաձայն բառից և *հալ* բնիկ հնդեվրոպական արմատից: Հակված ենք կարծելու, որ *կաքահալ*-ը թերևս բնիկ հայերեն է, որն ամփոփվելով դարձել է *կաքավ*: Այսինքն՝ *կաքահալ* բառը գուցե և *կաքավ* բառի հնագույն տարբերակն է. նկատի ունենանք նաև, որ հայերենում առկա են *հալ* բաղադրիչով այլ թոչնաճանաչներ ևս՝ *խլահալ*, *միրհալ*, *երաշտահալ*, *մրրկահալ*, *հնդկահալ*, *դշխոյահալ*, *մոշահալ* և այլն²⁵: Հարկ է հավելել, որ Հ. Աճառյանը արձանագրում է նաև Յ. Կարստի տեսակետը, ըստ որի՝ *կաք+հալ* բաղադրությունից է ձևավորված բառը²⁶:

Կոզենի բարբառի բառապաշարը քննելիս չենք կարող չանդրադառնալ հնչյունափոխական որոշ երևույթների, որոնք հնագույն իրողություններ են (թերևս նախագրային ժամանակաշրջանի), և հնչյունափոխության արդյունքում բարբառում առկա են շատ ինքնատիպ, այլ բարբառներից տարբերվող ուշագրավ բառանուններ:

²³ ՀՄԲ, էջ 396:

²⁴ ՀԼՊՆԺ, էջ 176

²⁵ Հայոց լեզվի հանգաբարտարան, Ե., 1976, էջ 484:

²⁶ ՀՄԲ, հ. 2, էջ 564:

Այսպես, օրինակ, Կոզենի բարբառում բառասկզբի *ե-ն* *ը* և *ղ* ձայնորդներից առաջ դառնում է *ա* ձայնավոր *աղբեր, աղինջ, արագ, արկաթ, արկանք, արախա* բառերում: Հ. Մուրադյանը, անդրադառնալով հիշյալ բառերին, գրում է. «Բոլոր այն դեպքերում, երբ հին *ե-ի* դիմաց հանդիպում է *ա*, մենք գործ ունենք կա՛մ փոխազդեցական հնչյունափոխության, կա՛մ բարբառային մի հին երևույթի հետ: Այդ համապատասխանությունը, ճիշտ է, առկա է միայն մի խումբ բառերում, ինչպես՝ *եղբայր>ախպեր, ախպար, եղինջ>աղինջ, հաղենջ, երագ>արագ, երաշտ>արաշտ, երկաթ>արկաթ, երկան(ք)>արկան(ք)* և այլն, բայց այդ բոլորը, ինչպես ցույց են տվել ուսումնասիրողները²⁷, իրենց *ե>ա* համապատասխանությամբ բարբառային հին գոյացություններ են՝ առաջացած դեռևս նախապատմական շրջանում»²⁸: Գ. Ջահուկյանը ևս բարբառների հնչյունաբերականական հնաբանությունները քննելիս դիտարկել է հիշյալ բառերը²⁹:

*Ա*լ երկբարբառը բաղաձայնից առաջ Կոզենի բարբառում դառնում է *օ* (*ալր>օր, եալթն>օխտ, աւձ>օղձ*): Բարբառում *նալթ* բառում ևս *ալ* երկբարբառը բառամիջում շեշտի տակ դարձել է *օ՝ նալթ>նօթ՝* ի տարբերություն գրական լեզվի և մի շարք բարբառների, որոնցում *ալ* երկբարբառը մնացել է անհնչյունափոխ: Հինհայերենյան *ալ* երկբարբառի փոխարեն, բացի *օխտ* (*օխտանասուն*) բառից, *օխ* (*օղ*) հնչյունախումբը առկա է նաև վերը հիշատակված *օղձ* բառում. օրինակ՝ Մեր բախչեյեմը մի *օղձ* կյրեր: Հնարվանիս հաղուդ քաղելիս *օղձը* կրծել էր: Մեր հնարվանի հարսը

²⁷ Հարցին անդրադարձել են նաև **Հ. Աճառյանը**, *Հայոց լեզվի պատմություն*, հ. 2, Ե., 1951, էջ 414-415, **Է. Աղայանը**, *Բարբառային հնագույն տարբերությունները հայերենում, Լեզվաբանական հետազոտություններ*, Ե., 2003, էջ 72-73:

²⁸ **Հ. Մուրադյան**, *Հայոց լեզվի պատմական քերականություն*, հ. 1, Ե., 1982, էջ 126-127:

²⁹ **Գ. Ջահուկյան**, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 275:

օխտը տարի արախա չի ներ (չէր ունենում): Ինչպես նկատելի է, գրաբարյան *եսաթն*, *աւձ* ձևերի համար բարբառն ունի *օխտ*, *օղձ* տարբերակները, որոնք ևս բարբառային հնաբանություններ են: Ըստ Մեյեի՝ այս բառերը հնում ունեցել են *ւ*, որը, շնչեղ բաղաձայնից առաջ առնմանական փոփոխության ենթարկվելով, պիտի դառնար *ֆ*, սակայն, քանի որ հայերենը *ֆ* չի ունեցել, *ֆ*-ն փոխվել է *խ*-ի (հմմտ. *ft>խտ* անցումը իրանական փոխառություններում), իսկ *ւ>ղ* փոփոխությունը տեղի է ունենում հաջորդ բաղաձայնի ձայնեղության պատճառով³⁰: Հարկ է արձանագրել, որ *օղձ* հնչատարբերակով հնաբանությունը առկա է նաև Արեշի (*օղձ*), Ագուլիսի (*աղձ*, *օղձ*), Մեղրու (*օղձ*) բարբառներում և Շամախիի Մաղրասայի (*օխձ*) ու Մայսարիի (*օխց*) խոսվածքներում³¹:

Իւ երկբարբառը բառամիջում դրսևորված է *խ*-ով՝ *ւիլիք*, *հււրիք*, *յէրին*, *սին*: Հնչյունական ուշագրավ երևույթ է դրսևորում *ձիւն* բառը, որը բարբառում դարձել է *ձիւլ*: Այսինքն՝ *ձյուն* բառում պահպանվել է գրաբարյան *խ* երկբարբառը վերջին *ն*-ի կորստով. օրինակ՝ Գընանք *ձըվնօյլ* հաղ արենք (Գնանք ձյունով խաղանք): Վա՛յ, հինչ դա՛ր ըի *ձիւլ* յեկած, հընչկա հըղկէրքը փակած ըի (Վա՛յ, այս ինչքան ձյուն է եկել, բոլոր ճանապարհները փակել է): Հարկ է հավելել, որ Կոզենի բարբառում առկա են նաև *ձյուն* բառի *ձիւլ* տարբերակից բաղադրված *ձըվնաջուր*՝ ձյունաջուր, *ձըվնաթօփ*՝

³⁰ **Հ. Աճառյան**, *Հայոց լեզվի պատմություն*, հ. 2, էջ 403: **Գ. Ջառուկյան**, նշվ. աշխ., էջ 275:

³¹ **Ա. Լուսինց**, *Արեշի բարբառը*, 1982, էջ 243: **Ռ. Բաղդասյան**, *Շամախիի բարբառը*, Ե., 1964, էջ 232, **Հ. Աճառյան**, *Քննություն Ագուլիսի բարբառի*, Ե., 1935, էջ 398, **Է. Աղայան**, նշվ. աշխ., էջ 291:

ձնագնդի բառանունները³²: *Ձյուն* բառի *ձիվ* յուրահատուկ հնչատարբերակը առկա է նաև Արեշի բարբառում³³:

Կոզենի բարբառում առկա են *ռ*-ի մասնավոր հնչյունափոխության դեպքեր՝ *շոր>շէրթ, ցորեն>ցէրէն, խնոցի>խընէցի, բոբիկ>բէբիկ, յիշոց>շիւնց*, որոնցում ուշագրավ է հատկապես *շոր*-ի փոխարեն *շէրթ* բառի առկայությունը: Հակված ենք կարծելու, որ այն ձևավորվել է բարբառում վկայվող *ռ>է* մասնավոր հնչյունափոխությամբ, որին ամենայն հավանականությամբ հավելվել է *թ* աճականը (*շոր>շէրթ*). օրինակ՝ Գէցի *շէրթէրը* ախտօտ էին (Հագի շորերը աղտոտ էին): Հերեկյի գեցած *շէրթէրը* բանը շատ սազեր (Երեկվա հագած շորերը իրեն շատ էր սազում):

Եզրակացություն

Այսպիսով՝ Կոզենի բարբառի բառապաշարում առկա հինհայերենյան բառանունները մեկ անգամ ևս փաստում են, որ հօդս են ցնդում այն թյուր կարծիքները, թե կոզենցիները «ուտիացոց մնացորդներ են», որովհետև բարբառում անաղարտորեն պահպանվել են ոչ միայն հինհայերենյան բազմաթիվ հնչյունական հատկանիշներ, այլև բառային (*աղբէր, աղինջ, արագ, արկաթ, արկանք, արախա*) և բարբառային (*օխտ, օղձ, նօթ, կաքահալ*) հնաբանություններ:

Կոզենի բարբառում կենսունակ են բարբառների հինհայերենյան բառաշերտում առկա գրաբարյան մատենագրության մեջ իրենց գուգահեռներն ունեցող, սակայն գրական հայերենում ոչ գործածական բառեր:

³² ԿԲ, էջ 213:

³³ Ա. Ղարիբյան, *Հայ բարբառագիտություն*, Ե., 1953, էջ 373, Ա. Լուսինց, *Արեշի բարբառը*, էջ 32:

Օգտագործված գրականություն

Աղայան Է., Մեղրու բարբառը, Ե., 1954:

Աղայան Է., Լեզվաբանական հետազոտություններ, Ե., 2003:

Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հհ. 1-2, Ե., 1971-1973:

Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Ե., 1951:

Աճառեան Հ., Քննութիւն Ագուլիսի բարբառի, Ե., 1935:

Բաղրամյան Ռ., Կոզենի բարբառը, Ե., 1961:

Բաղրամյան Ռ., Շամախիի բարբառը, Ե., 1964:

ԼԻ արխիվ, տետրեր հհ. 40, 21:

Լուսենց Ա., Արեշի բարբառը, Ե., 1982:

Հակոբյան Թ., Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Ե., 1991:

Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 1, Ե., 2001:

Հայոց լեզվի հանգաբառարան, Ե., 1976:

Ղարիբյան Ա., Հայ բարբառագիտություն, Ե., 1953:

Մուրադյան Հ., Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, Ե., 1982:

Պետոյան Վ., Սասունի բարբառը, Ե., 1954:

Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972:

Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010:

Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987:

Սիմոնյան Ն., Հայերենի բայակազմության մի քանի հարցեր (ծագումնաբանական քննություն).- Հայոց լեզվի պատմության հարցեր, հ. 3, Ե., 1991:

Ерицов А.Д., Еконамический быт государственных крестьян Казахского уезда Елизаветпольской губерний, Тифлис, 1886.

Карбелашвили Д., Кирзан и кирзанцы, Известия Азерб. филиала АН СССР, N 2, 1937:

Khachatryan Hasmik - Observations on the Vocabulary of the Krzen Dialect. - The Krzen dialect is included as a separate dialect in the Karabakh-Shamakhi interdialect group of the eastern grouping of Armenian dialects.

In the article, based on the study of the vocabulary of the Krzen dialect, special attention is paid to words and word forms that have parallels in ancient Armenian literature, but are not used in the literary Armenian language, such as **asaghag** (road), **aq** (foot), **genal** (to wear). The dialect has preserved a great number of phonetic features of the Old Armenian language, as well as lexical archaisms dating back thousands of years, including the words **aghber** (brother), **aghinj** (nettle), **araz** (dream), **arkat** (iron), **arkanq** (hand millstone), **arakha** (child), which are expressions of ancient dialectisms. The words **okht**, **oghdz**, **not**, that are in use in this dialect today, are also considered dialectal archaisms from the Grabarian forms **yavtn** (pron. **yotn**, meaning seven), **avdz** (pron. **odz**, meaning snake), **navt** (pron. **navt**, meaning oil). In the word "dzyun" (snow), which is expressed in this dialect with the phonetic variant "dziv", the Grabarian diphthong **իւ** [iw] has been preserved with the loss of the final "n".

The word **kaqahav** used in the dialect is presumably considered a word formed from the onomatopoeic word **kak** and the native Indo-European root **hav**, which, being joined together in the literary language, became **kaqav**. That is, it actually restores the ancient version of the word **kaqav**, i.e. **kaqahav**.

In the vocabulary of the Krzen dialect, the presence of Old Armenian lexemes once again proves that the mistaken notions claiming the inhabitants of Krzen are "remnants of the Udis" are completely unfounded.

Keywords: Krzen dialect, vocabulary, Karabakh-Shamakhi interdialect, phonetic change, native Armenian word, borrowing, semantic branching, Grabar.

Khachatryan Hasmik, PhD in Philology, Institute of Language named after H. Acharyan of NAS RA, Senior Researcher.

Хачатрян Асмик - Наблюдения над словарным составом крзенского диалекта.- Крзенский диалект входит в состав карабахско-шамахинской междиалектной подгруппы восточных армянских диалектов как отдельный диалект.

В статье на основе исследования лексики крзенского диалекта особое внимание уделено словам и словоформам, имеющим параллели в древнеармянской литературе, но не используемым в литературном армянском языке, из которых слова *aġaq* (*աղազ*՝ дорога), *aq* (*աք*՝ нога), *genal* (*գենալ*՝ надевать) жизнеспособны в крзенском диалекте.

В диалекте в первозданном виде сохранились многие фонетические черты древнеармянского языка, а также лексические архаизмы, возраст которых уходит в глубь тысячелетий, в том числе слова *aġber* (*աղբեր*), *aġindj* (*աղինջ*), *araz* (*արազ*), *arkat* (*արկաթ*), *arkan^h* (*արկանք*), *araxa* (*արախա*) являющиеся выражениями древних диалектизмов. Слова *oxt* (*օխտ*), *oġdž* (*օղձ*), *not^h* (*նօթ*) употребляемые в диалекте в противовес древнеармянским формам *jotn* (*յօթն*՝ Էսթրն), *odž* (*օձ*՝ օձ), *navt^h* (*նաթ*), также считаются диалектными архаизмами. В слове *džun* (*ձիւն*), которое в диалекте выражено фонетическим вариантом *dživ* (*ձիվ*), сохранился древнеармянский дифтонг *ju* (*iw*) *dživ* утратой конечного *n*. Слово *как^hаһав*, употребляемое в диалекте, предположительно считается словом, образованным от звукоподражательного слова *как* и исконно индоевропейского корня *һав*, который, путем сращения, в литературном языке, превратился в *какав*. То есть фактически восстанавливает древний *какаһав* вариант *как^hав*.

Наличие в лексике крзенского диалекта древнеармянских лексем в очередной раз доказывает полную несостоятельность ошибоч-

ных представлений о том, что жители Крзена являются "остатками удин".

Ключевые слова: диалект Крзена, словарный состав, карабахско-шамахинский междиалект, фонетическое изменение, исконно армянское слово, заимствование, семантическое ответвление, грабар.

Хачатрян Асмик, кандидат филологических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, старший научный сотрудник.

**ԼՈՌՈՒ ԽՈՍՎԱԾՔԻ ԵՎ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱՐԲԱՌԻ
ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ*¹**

DOI: 10.54503/2738-277X.2025.1(22)-29

Կատվայան Վիկտոր

բանասիրական գիտությունների դոկտոր,
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
առաջատար գիտաշխատող. viktorkatvalyan@mail.ru

Բանալի բառեր. բարբառ, խոսվածք, հնչյուն, հոգնակի թիվ, անցյալ անկատար, հարկադրական եղանակ, տարբերակիչ հատկանիշ:

Նախաբան

Հայ բարբառագիտության մեջ Լոռու խոսվածքի կարգավիճակի հարցը ունեցել է տարբեր մեկնաբանություններ: Հ. Աճառյանը այս խոսվածքն ընդգրկել է Արարատյան բարբառի կազմում՝ բարբառի տարածման մեկ շրջանում միավորելով Շուլավերը, Շամշադինը, Լոռին և շրջակաները²: Հայագետը Լոռու խոսվածքի լեզվական առանձնահատկություններին չի անդրադարձել: Ա. Ղարիբյանը Լոռու խոսվածքը համարել է Արարատյանի ենթաբարբառ: «Լոռին է միակ վայրը, - գրել է նա, - որտեղ Արարատյան բար-

* Ներկայացվել է 19.08.2025, գրախոսվել՝ 09.09.2025:

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի աջակցությամբ (№ 25RG - 6B093 հետազոտական նախագիծ). The research was supported by the Higher Education and Science Committee of MESCS RA (Research project № 25RG - 6B093):

² Տե՛ս **Հ. Աճառյան**, *Հայ բարբառագիտություն*, Մոսկուա-Նոր Նախիջևան, 1911, էջ 37:

բառը կազմում է ճնշող մեծամասնություն, սակայն լոռեցիների խոսվածքը, պատկանելով Արարատյան բարբառին, միաժամանակ և ունի իր մեջ թույլ տարրեր Ղարաբաղի և Թֆիլիսիի բարբառներից, այնպես որ այն կարելի է համարել Արարատյան ենթաբարբառ»¹: Մ. Ասատրյանը, անդրադառնալով Արարատյան բարբառի և Լոռու խոսվածքի փոխհարաբերություններին, նշում է, որ «Լոռու խոսվածքը միջին դիրք է գրավում Արարատյան, Ղարաբաղի ու Թիֆլիսի բարբառների միջև: Որոշ կետերում շփման մեջ մտնելով Ղարաբաղի ու Թիֆլիսի բարբառների հետ, Լոռու խոսվածքը ամենից մոտ է կանգնած Արարատյան բարբառին (այդ պատճառով էլ համարվել է նրա ենթաբարբառը)՝ մասնավորապես Աշտարակի խոսվածքին»²: Ի վերջո լեզվաբանը եզրակացնում է. «Լոռու խոսվածքը Արարատյան խոսվածքի հետ գտնվում է այնպիսի հարաբերության մեջ, որ դա կարելի է համարել և՛ Արարատյանից տարբեր, ինքնուրույն բարբառ, և՛ Արարատյանի ենթաբարբառներից մեկը»³: Ակնհայտորեն բարբառային երկու միավորների փոխհարաբերության հարցը Մ. Ասատրյանի կողմից վերջնական լուծում չի ստացել: Գ. Զահուկյանի բազմափորձային դասակարգման աղյուսակներում Լոռին Արարատյան բարբառի կազմում ներկայացված է երկու բնակավայրով՝ Ղալաչա և Գյառգյառ: Երկուսն էլ բարբառի կենտրոն դիտված Աշտարակից ունեն 13 միավոր տարբերիչ հատկանիշներ⁴: Եվ քանի որ ըստ Գ. Զահուկյանի՝ «....բարբառի ներսում ենթաբարբառային տարբերությունները կուներենան 11-ից ավելի (11, 5-22) տարբերիչ հատկանիշ ունեցող վայ-

¹ Ա. Ղարիբյան, *Հայ բարբառագիտություն*, Ե., 1953, էջ 219:

² Մ. Ասատրյան, *Լոռու խոսվածքը*, Ե., 1968, էջ 33:

³ Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 41:

⁴ Տե՛ս Գ. Զահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 135:

րերը»⁵, ուրեմն Ղալաչան և Գյառգյառը ներկայացնում են ենթա-
բարբառ, այլ ձևակերպմամբ՝ Գ. Ջահուկյանի տվյալներով՝ Լոռին
Արարատյան բարբառի ենթաբարբառ է: Համեմատության համար
նկատենք, որ Աստապատի ենթաբարբառը Աշտարակից ունի 14
միավոր տարբերիչ հատկանիշներ, իսկ Արարատյանի կազմում
դիտարկված մյուս բնակավայրերն ունեն 5-8,5 տարբերիչ հատկա-
նիշներ⁶: Ինչ խոսք, բերված վիճակագրական տվյալները զգալիո-
րեն որոշակի են դարձնում բարբառային երկու միավորների փոխ-
հարաբերությունների մասին պատկերացումները, սակայն որոշ
տարակարծություն, այնուամենայնիվ, մնում է: Նախ, Լոռին բավա-
կանին ընդարձակ տարածաշրջան է՝ ավելի քան 120 բնակավայ-
րերով, ուստի երկու բնակավայրը դժվար թե բավարար է՝ ունենա-
լու բարբառային միավորի վերաբերյալ հիմնավոր ու ամբողջական
պատկերացում: Բացի այդ, սահմանափակ թվով բարբառային
միավորների (տվյալ դեպքում՝ երկու) փոխհարաբերությունները
որոշելիս ջահուկյանական 100 հատկանիշների մի մասը կարող է
լինել ավելորդ, իսկ փոխարենը կարող են էական լինել այլ՝ տվյալ
տարածաշրջանի համար ոչ պակաս կարևոր տարբերիչ հատկա-
նիշներ: Նկատի ունենալով այս հանգամանքները՝ Լոռու խոսված-
քի և Արարատյան բարբառի փոխհարաբերությունների վերաբեր-
յալ լրացուցիչ տեղեկություններ ունենալու համար աշխատանքում
դիտարկվում են Լոռու խոսվածքի շուրջ մեկ տասնյակ տարբերակ-
ներ՝ դրանք համեմատելով Արարատյան բարբառի ոչ միայն Աշ-
տարակի, այլ նաև Փարպիի, Օշականի, Արարատի և Էջմիածնի
որոշ գյուղերի, Վայոց ձորի մարզի որոշ բնակավայրերի խոսվածք-
ների հետ:

⁵ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 129:

⁶ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 135:

Ընդհանուր տեղեկություններ

Լոռու խոսվածքին բնորոշ իրողությունները պայմանավորված են ոչ միայն ներքին զարգացումներով, Արարատյան բարբառի հետ բնական ընդհանրություններով, այլ նաև աշխարհագրական դիրքի, երկրամասն ընդգրկած պատմական անցքերի յուրահատկություններով: Լոռին սահմանակից է Վրաստանին, և բնական է համարել, որ լոռեցիները առնչվել են ինչպես վրացիների, այնպես էլ վրացահայության հետ: Մյուս կողմից՝ միջին դարերից սկսած և մինչև 19-րդ դար Լոռին ժամանակ առ ժամանակ գտնվել է վրացական տիրապետության տակ⁷, որն իր ազդեցությունն է թողել նաև լոռեցիների խոսվածքի վրա: Հարկ է նկատի ունենալ նաև, որ 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղի հայերի ներգաղթը Լոռի ավելի մեծ չափեր է ընդունել: Եվ չնայած արցախցիների մեծ մասը հետագայում վերադարձել է Արցախ⁸, այնուամենայնիվ Լոռու խոսվածքում Ղարաբաղի բարբառը զգալի հետք է թողել: Պատմականորեն ձևավորված հատկանիշների իր ամբողջությամբ Լոռու խոսվածքը, այսպիսով, դարձել է բարբառային հայերենի ինքնատիպ մի դրսևորում, որը զգալիորեն առանձնանում է Արարատյան բարբառի տարբերակային այլ դրսևորումներից:

Ըստ Մ.Ասատրյանի՝ Լոռու խոսվածքը տարածական տեսանկյունից մի ամբողջություն է կազմում՝ գրավելով բավականին ընդարձակ տարածություն: Այդ խոսվածքով են հաղորդակցվում Լոռու մարզի Վանաձոր (նախկինում՝ Կիրովական) քաղաքում և շրջակա գյուղերում, Թումանյանի (նախկինում՝ Ալավերդի), Ստեփանավանի տարածաշրջաններում, Սյլիտակի տարածաշրջանի

⁷ Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բաբսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 2, Ե., 1988, էջ 598-599:

⁸ Հ. Ամիրջանյան, *Լոռին 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի առաջին երեսնամյակին*, Ե., 2010, էջ 71-91:

բնակավայրերի մի մասում, Տավուշի մարզի Նոյեմբերյանի տարածաշրջանում»:

Մեթոդ և նյութ

Հետազոտությունն իրականացվել է զուգադրահամեմատական մեթոդով: Նյութերը քաղվել են Մ. Ասատրյանի «Լոռու խոսվածքը» աշխատությունից¹⁰, Ռ. Մարկոսյանի «Արարատյան բարբառ» ուսումնասիրությունից¹¹, ընդհանուր բարբառագիտական աշխատություններից¹², ՀԲԱ ծրագրով¹³ գրանցված և արխիվում պահպանված այն տետրերից, որոնք ներկայացնում են Լոռու մարզի բնակավայրերի¹⁴, Աշտարակի¹⁵, Փարպիի¹⁶, Օշականի¹⁷ խոսվածքները: Արարատյան և Լոռու բարբառային միավորները համեմատելիս հիմք ենք ընդունել ոչ միայն Մ. Ասատրյանի առանձնացրած տարբերությունները, Գ. Ջահուկյանի կազմած աղյուսակներում արձանագրված տվյալները, այլ նաև Մ. Ասատրյանի նկարագրություններում ներկայացված մի շարք հատկանիշներ, որոնք չեն դիտվում Արարատյան բարբառի դրսևորումներում: Նման հատկանիշներ ի հայտ են եկել նաև ՀԲԱ ծրագրով լրացված տետ-

⁹ Մ. Ասատրյան, *Լոռու խոսվածքը*, էջ 5:

¹⁰ Մ. Ասատրյան, *Լոռու խոսվածքը*:

¹¹ Ռ. Մարկոսյան, *Արարատյան բարբառ*, Ե., 1989:

¹² Հ. Աճառյան, *Հայ բարբառագիտություն*, Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Ա. Գրիգորյան, *Հայ բարբառագիտության դասընթաց*, Ե., 1957, Գ. Գևորգյան, *Հայերենի բարբառների եղանակաժամանակային համակարգերի տարածագործառական բնութագիրը*, Ե., 2013:

¹³ *Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր* (այսուհետև՝ ՀԲԱ), Ե., 1977:

¹⁴ Թիվ 98 տետր՝ Շավարշավան, թիվ 134 տետր՝ Սանահին, թիվ 135 տետր՝ Դսեղ, թիվ 136 տետր՝ Թեղուտ, թիվ 137 տետր՝ Շամուտ, թիվ 138 տետր՝ Ճոճկան, թիվ 139 տետր՝ Հաղպատ, թիվ 176 տետր՝ Վարդաբլուր, թիվ 291 տետր՝ Կուրթան:

¹⁵ Թիվ 151 տետր՝ Աշտարակ:

¹⁶ Թիվ 9 տետր՝ Փարպի:

¹⁷ Թիվ 20 տետր՝ Օշական:

րերում: Արարատյան բարբառի մի շարք խոսվածքների վերաբերյալ եզրահանգումներ արել ենք՝ հիմք ընդունելով Ռ. Մարկոսյանի գրքում բերված բարբառային բավականին հարուստ նյութը: Հետևելով Գ. Զահուկյանի բազմահատկանիշ դասակարգման սկզբունքներին՝ Արարատյան բարբառի և Լոռու խոսվածքի տարբերակների միջև առկա ամբողջական տարբերությունները գնահատել ենք 1 միավոր, մասնակի տարբերությունները՝ 0,5 միավոր: Ընդհանուր առմամբ, բարբառային երկու միավորների փոխհարաբերությունները ներկայացրել ենք ըստ ՀՖԱ ծրագրով լրացված տետրերի նյութի, այսինքն՝ լեզվաբանների նկատած տարբերությունները համեմատություններում որպես կանոն հաշվի առել ենք, եթե դրանք արձանագրված են տետրերում:

Լոռու խոսվածքի և Արարատյան բարբառի տարբերությունները

Բարբառային դիտարկվող երկու միավորները միմյանցից ամբողջովին կամ մասնակիորեն տարբերվում են հետևյալ հատկանիշներով.

1. Երկբարբառների առկայություն. օր.՝ *վեց, չոր* (0,5 միավոր) Այս հատկանիշն ունեն Լոռու խոսվածքի դիտարկվող տարբերակների մեծ մասը՝ Թեղուտը, Կուրթանը, Հաղպատը, Վարդաբլուրը, Սանահինը, Դսեղը, Շամուտը: Հատկանիշն ունի նաև Աշտարակի խոսվածքը, իսկ Փարպին այս հատկանիշը չունի: Ըստ Մ. Ասատրյանի՝ *n* և *k* երկբարբառների գոյությունը Լոռու խոսվածքի ամենահատկանշական հնչյունական կողմերից մեկն է¹⁸: Գ. Զահուկյանը Աշտարակի խոսվածքում արձանագրել է շեշտակիր *n*-ի բարձրացող – երկբարբառային արտասանություն (*n* – ուօ)¹⁹:

2. Քմայնացած ձայնավորի առկայություն (0,5 միավոր)

¹⁸ Տե՛ս Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 13:

¹⁹ Տե՛ս Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 77:

Լոռու խոսվածքի տարբերակներում և Փարպիում, Օշականում այս հատկանիշը չի արձանագրվել, դիտվել է Աշտարակի խոսվածքում:

3. Շեշտանախորդ դիրքում ձայնավորի հնչյունափոխություն՝ պայմանավորված շեշտի ուժգնությամբ. օր.՝ *ըղանձիլ, ծըրավիլ, ռավօղ* (1 միավոր)

Լայնորեն տարածված է Լոռու տարբերակներում, որովհետև Լոռիում շեշտն ավելի ուժգին է, քան Արարատյան բարբառի տարբերակներում²⁰: Փարպիին, Օշականին և Աշտարակին բնորոշ չէ:

4. Շնչեղ ձայնեղների առկայություն (0,5 միավոր)

Լոռիում և Փարպիում, Օշականում չի արձանագրվել, առկա է Աշտարակում: Ի դեպ, Մ. Ասատրյանը վկայել է, որ Գուգարքի տարածաշրջանի որոշ գյուղերում (Մեղրուտ, Ժդանով, Փամբակ, Քարաբերդ), նաև Սպիտակում ձայնեղ պայթականները վերածվել են խուլերի (բարի>պարի, դեղին>տեղին, ձախ>ծախ), և երևույթը բացատրել է Ղարաբաղի բարբառի ազդեցությամբ²¹: Գ. Զահուկյանը շնչեղ ձայնեղներ արձանագրել է Երևանում և Աշտարակում, չի վկայել Լոռու խոսվածքներում (Ղալաչա, Գյառգյառ)²²:

5. *Տն>նն* հնչյունափոխություն (1 միավոր)

Լոռիում չի արձանագրվել, կա Փարպիում, Օշականում և Աշտարակում, ըստ Գ. Զահուկյանի՝ նաև Քանաքեռում, Էջմիածնում, Կողբում²³:

6. Գրաբարյան բառավերջի *ն*-ի դիմաց՝ *ը*. օր.՝ *թօռը, ձուգը* (1 միավոր)

Հատկանիշը բնորոշ է Լոռիին, բացակայում է Փարպիում, Օշականում և Աշտարակում: Հարցին անդրադառնալով՝ Մ. Ասատրյանը

²⁰ Տե՛ս Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 13:

²¹ Տե՛ս նշվ. աշխ., էջ 65:

²² Տե՛ս Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 58-59:

²³ Տե՛ս նույն տեղում:

գրել է, որ գրաբարյան *ն* վերջնահնչյունի այսպիսի դրությամբ Լոռու խոսվածքը առանձին դիրք է գրավում հայերենի բարբառների մեջ, առանձնանում է Արարատյան խոսվածքներից և որոշ չափով մոտենում Ղարաբաղի բարբառին²⁴: Հատկանիշը Լոռու խոսվածքներում արձանագրել է նաև Գ. Ջահուկյանը²⁵:

7. Հպաշփականների վերածում շփականի նախաբաղաձայնական դիրքում (1 միավոր)

Լոռիին բնորոշ չէ այս հատկանիշը, կա Փարպիում, Օշականում և Աշտարակում: Գ. Ջահուկյանը հատկանիշը արձանագրել է բուն Արարատյան բարբառի բոլոր խոսվածքներում²⁶:

8. *Գ, Կ, ք*-ի քմայնացում կամ հպաշփականացում (0,5 միավոր)
Լոռին և Փարպին չունեն Աշտարակում և սրա ազդեցությամբ՝ Օշականում դիտված այս հատկանիշը:

9. *Ն*-ից առաջ՝ *ր > ռ* անցում. օր.՝ *բերան – բերնին, արին – առնակօլօլ* (0,5 միավոր)

Հատկանիշը դիտվել է Լոռիի շատ տարբերակներում (Թեղուտ, Կուրթան, Հաղպատ, Վարդաբլուր, Դսեղ): Չի արձանագրվել Ճոճկանում, Սանահինում, Շամուտում, Շավարշավանում, ինչպես նաև Փարպիում և Աշտարակում: Մ. Ասատրյանը նկատել է, որ մի շարք բառերի «աճման դեպքում» վերջնականի ձայնավորները սղվում են, և *ր*-ն, հայտնվելով *ն*-ից կամ *շ*-ից առաջ, դառնում է *ռ՝ արին – առնաթաթախ, ուրիշ-ուռշի, բերան-բերնի, ցորեն – ցոռնի, թօրօն – թօռնի*²⁷: Կարծում ենք՝ առաջնալեզվային *շ*-ից առաջ *ր*-ի *ռ* արտասանությունը հատուկ է ոչ միայն Լոռիին, այլ նաև Արա-

²⁴ Տե՛ս Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 15:

²⁵ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 58-59:

²⁶ Տե՛ս նույն տեղում:

²⁷ Տե՛ս Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 83:

րատյան և այլ բարբառների: Իսկ *ն*-ից առաջ *ը>ռ* անցումը պետք է որ հին հայերենին հատուկ օրինաչափության արձագանք լինի:

10. Բազմավանկ բառերի հոգնակիի կազմություն *նի* մասնիկով. օր.՝ *կեճակնի, պըռռավնի* (1 միավոր)

Լոռիին բնորոշ այս հատկանիշը չկա Փարպիում, Օշականում և Աշտարակում: Մ. Ասատրյանը նշում է, որ այս հատկանիշով Լոռու խոսվածքը հեռանում է Արարատյան բարբառից և Ղարաբաղի բարբառի հետ մի առանձին դիրք է գրավում հայերենի բարբառների մեջ²⁸: Իրողությունն արձանագրել է նաև Գ. Ջահուկյանը²⁹:

11. *Ա, ի* ձայնավորներով ավարտվող բազմավանկ բառերի հոգնակիի կազմություն *ենի* մասնիկով. օր.՝ *քամենի, ճամփենի* (0,5 միավոր)

Հատկանիշը դիտվել է Լոռու բոլոր տարբերակներում՝ Վարդաբլուրից բացի: Մ. Ասատրյանը նկատում է, որ *ի*-ով վերջացող բառերը նկատի ունենալով՝ կարելի է վերականգնել *անի* հոգնակերտը (տարի - խարիանի>տարենի)³⁰: Բայց այդ դեպքում հասկանալի չէ, թե ինչու *ա*-ով վերջացող բառերն էլ ստանում են *ենի* (ճամփա - ճամփենի):

12. Քեր մասնիկով հոգնակի. օր.՝ *խընամըքեր, փեսացըվէքեր* (0,5 միավոր)

Ունի միայն Լոռին (Վարդաբլուրից բացի): Մ. Ասատրյանը խոսվածքի հոգնակերտ մասնիկների շարքում բերում է *քլեր* ձևը³¹, բայց ՀԲԱ ծրագրով լրացված տետրերում արձանագրված է *քեր*: Հատկանիշը Ղալաչայում արձանագրել է Գ. Ջահուկյանը³²:

²⁸ Տե՛ս Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 18:

²⁹ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 95-96:

³⁰ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 92:

³¹ Տե՛ս նույն տեղում:

³² Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 96:

13. Հոգնակի թեք հոլովներում *նի>նէր* փոփոխություն. օր.՝ *բէրաննի - բէրաննէրի, ծախկընի - ծախկընէրի* (0,5 միավոր)
Հատուկ է Լոռիի տարբերակների մի մասին՝ Կուրթանին, Վարդաբլուրին, Դսեղին, Շավարշավանին: Ըստ Մ. Ասատրյանի՝ «Ալավերդու և Նոյեմբերյանի շրջանի գյուղերում հոգնակի թիվը *նի* մասնիկով կազմող գոյականները, որպես *ի*-ով վերջավորվող բառեր, ենթարկվում են *ու* հոլովման»³³:

14. Ստացական հոգնակիություն *ներու* մասնիկով. օր.՝ *վոտներնէրուս, ձեռներնէրուս* (1 միավոր)

Լոռիի խոսվածքում հատկանիշը վկայել է Մ. Ասատրյանը, բայց մեր դիտարկած տարբերակներում վկայված չէ: Այնուամենայնիվ, մի շարք բարբառակիրներ հաստատել են հատկանիշի առկայությունը³⁴:

15. Որոշ խմբերի բառերի բացառականի *ց*-ի անկում. օր.՝ *մառթըկէրանցի, քըվորտանցի, ինձանի, ձեզանի* (1 միավոր)

Լոռիին բնորոշ այս հատկանիշը չի դիտվել Փարպիում, Օշականում և Աշտարակում: Մ. Ասատրյանը այս հատկանիշը համարել է Լոռու խոսվածքի գլխավոր առանձնահատկություններից մեկը, նկատել, որ բացառականի այսպիսի կազմությամբ ևս Լոռու խոսվածքը առնչվում է Ղարաբաղի բարբառին³⁵:

16. Հատուկ տեղանունների Ա հոլովում. օր.՝ *Ըրեվանա, Ըքարակա* (0,5 միավոր)

Լոռիին և Փարպիին, Օշականին բնորոշ այս հատկանիշը Աշտարակում չի արձանագրվել: Մ. Ասատրյանը խոսվածքում Ա հոլովում չի առանձնացրել, բայց նկատել է, որ հատուկ տեղանունները

³³ Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 98:

³⁴ Բացի այդ, զեկուցումը ներկայացնելուց հետո հատկանիշն արձանագրել ենք Լոռու մարզի շուրջ երեք տասնյակ բնակավայրերում դաշտային աշխատանքներ կատարելու ընթացքում:

³⁵ Տե՛ս նշվ. աշխ., էջ 18-19:

սեռական և բացառական հոլովները կազմում են *ա* վերջավորությամբ³⁶:

17. Դասական թվական -*ում*-ով. օր.՝ *էրկուսումը, վեցումը* (0,5 միավոր)

Դիտվել է Լոռիի որոշ տարբերակներում (Թեղուտ, Սանահին): Մ. Ասատրյանը խոսվածքում նման ձևեր չի վկայել³⁷: Գ. Զահուկյանը Ղալաշայում և Գյառգյառում արձանագրել է հատկանիշը³⁸:

18. Ցուցական դերանունների հոգնակիում *ը>հ* անցման առկայություն. օր.՝ *սըհանք, դըհանք, նըհանք* (1 միավոր)

Բնորոշ է Լոռիին: Հատկանիշն արձանագրել է նաև Գ. Զահուկյանը³⁹:

19. *էս, էտ, էն* դերանունների հոլովման ժամանակ եզակի բացառական, գործիական, ներգոյական հոլովներում *սա, դա, նա*-ի ձևերի գործածություն. օր.՝ *սըրա//ըստուր, սըրան//ըստուր, սըրանից, սըրանով* (0,5 միավոր)

Հատկանիշը դրսևորվում է Լոռիի որոշ տարբերակներում (Թեղուտ, Կուրթան, Սանահին, Դսեղ): Մ. Ասատրյանը այս իրողությունը համարել է Լոռու խոսվածքի ընդհանուր հատկանիշ⁴⁰:

20. Ուլ վերջավորությամբ անորոշ դերբայ. օր.՝ *թօղուլ, լըքցընուլ, խըրդնուլ* (0,5 միավոր)

Հատկանիշն ունեն Լոռիի որոշ տարբերակներ (Թեղուտ, Ճոճկան, Հաղպատ, Շավարշավան): Մ. Ասատրյանը նշել է, որ այս հատկանիշը բնորոշ է Ալավերդու և Նոյեմբերյանի շրջանի գյուղերին⁴¹: Նա նաև եզրակացրել է, որ այդ խոսվածքները պահել են գրաբարյան

³⁶ Տե՛ս նշվ. աշխ., էջ 96:

³⁷ Տե՛ս նշվ. աշխ., էջ 106:

³⁸ Տե՛ս Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 96:

³⁹ Տե՛ս նշվ. աշխ., էջ 58-59:

⁴⁰ Տե՛ս Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 108:

⁴¹ Նշվ. աշխ., էջ 113:

բոլոր լծորդությունները⁴² (ա, ե, ի, ու): Ա.Ղարիբյանը գրել է, որ Նոյեմբերյանի և Ալավերդու շրջանում չստեղծանց ունեցող բայերը պատկանում են Ու խոնարհման (տեսնուլ, գտնուլ)⁴³: Գ. Զահուկյանը հատկանիշն արձանագրել է Գյառգյառում⁴⁴:

21. Անցյալ անկատարի համադրական ձև. օր.՝ *կարթէի, մընէի* (1 միավոր)

Հատկանիշը հատուկ է Լոռիին: Ըստ Մ.Ասատրյանի՝ անկատարի նման կազմությամբ Լոռու խոսվածքը ոչ միայն հեռանում է Արարատյան բարբառից, այլև յուրահատուկ տեղ է գրավում հայերենի բարբառների մեջ և անմիջական «շփման մեջ է մտնում» գրաբարի հետ⁴⁵: Լոռու խոսվածքի այս հատկանիշը արձանագրել են նաև Ա.Ղարիբյանը⁴⁶ և Գ. Զահուկյանը⁴⁷:

22. Գրաբարյան նախահավելված անցյալ կատարյալի եզակի 3-րդ դեմքում. օր.՝ *էրէր, էթող, էրէտ* (0,5 միավոր)

Հատկանիշը դրսևորվում է Լոռիի որոշ տարբերակներում (Թեղուտ, Հաղպատ, Սանահին): Ըստ Մ. Ասատրյանի՝ Լոռու խոսվածքը այս հատկանիշով գրաբարի հետ «շփման եզրեր» է հանդես բերում միջին հայերենի միջնորդությամբ⁴⁸: Գ. Զահուկյանը ևս հատկանիշը արձանագրել է Լոռու խոսվածքներում⁴⁹:

23. Անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքի *ուց* վերջավորություն (պատճառական և 5 այլ բայեր). օր.՝ *հըսկացրուց, բէրուց, թօղուց* (0,5 միավոր)

⁴² Տե՛ս նշվ. աշխ., էջ 23:

⁴³ Տե՛ս Ա. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 226-227:

⁴⁴ Տե՛ս Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 116:

⁴⁵ Տե՛ս Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 24-25:

⁴⁶ Տե՛ս Ա. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 226:

⁴⁷ Տե՛ս Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 115-116:

⁴⁸ Տե՛ս Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 25:

⁴⁹ Տե՛ս Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 116:

Կա Լոռիում և Աշտարակում, Օշականում, չկա Փարպիում: Մ. Ասատրյանը այս հատկանիշը արձանագրել է նաև Գորիսում, Շամշադինում և Իջևանում, իսկ Արարատյան խոսվածքներից՝ միայն Աշտարակում⁵⁰:

24. Ժխտական մասնիկների հետադաս կիրառություն. օր.՝ *սիրում չէմ, մընացի վօջ, խըմէմ վօջ, ասել չըտիմ, ծըխել մի* (0,5 միավոր)

Բնորոշ է Լոռիին և Աշտարակին: Մ. Ասատրյանը համարել է, որ այս հատկանիշը Լոռու խոսվածքի ամենաակնառու յուրահատկություններից մեկն է, իսկ Արարատյան բարբառում ժխտական մասնիկների հետևողական հետադաս գործածություն չկա⁵¹: Գ. Զահուկյանը այս հատկանիշը վկայել է Լոռու խոսվածքներում, Աշտարակում, մասամբ՝ Երևանում և Քանաքեռում⁵²:

25. -Ող վերջավորությամբ դերբայով բաղադրյալ ապառնի. օր.՝ *Գընաց առտը ջըրօղ* (0,5 միավոր)

Երևույթը առկա է Լոռիի որոշ տարբերակներում (Թեղուտ, Հաղպատ, Դսեղ, Շամուտ, Շավարշավան): Մ. Ասատրյանը հատկանիշը չի նկատել և նշել է, որ խոսվածքում ենթակայական դերբայը ժամանակների կազմությանը չի մասնակցում⁵³: Ա. Ղարիբյանը գրել է, որ Ալավերդու և Նոյեմբերյանի շրջանի մի շարք գյուղերում (Թումանյան, Շնող) ենթակայական դերբայն օգտագործում են անորոշ դերբայի տրական հոլովի կամ ապառնի դերբայի փոխարեն, և բերել է օրինակներ.*գընանք կակալ քաղօղ. գընացին ծընէփակ*

⁵⁰ Տե՛ս Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 29:

⁵¹ Տե՛ս նշվ. աշխ., էջ 30:

⁵² Տե՛ս Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 115-116:

⁵³ Տե՛ս նշվ. աշխ., էջ 119:

ու *սինդրիկ քաղօր*⁵⁴: Գ. Ջահուկյանը այս հատկանիշը արձանագրել է Ղալաչայում⁵⁵:

26. *Պիտի* եղանակիչի խոնարհվող կրճատ ձև. օր.՝ *ասիլ տիւ, ասիլ տիս, ասիլ տի* (1 միավոր)

Հատուկ է Լոռիին: Ռ. Մարկոսյանը Արարատյան բարբառում հարկադրականի կազմության մասին խոսելիս առանձնացնում է Լոռու, Սպիտակի, Վայոց ձորի խոսվածքները, որոնցում դրսևորվում է *պիտի* եղանակիչը տարբեր ձևերով, թե՛ առաջադաս, թե՛ հետադաս⁵⁶: Թվում է՝ նրա նշած *տէւ, տէս, տի* ձևերը վերաբերում են հենց Լոռու խոսվածքին, մանավանդ որ հիշատակում է նաև Նոյեմբերյանի *տիւ, տիս, տի* կարգի ձևերը⁵⁷: Գ. Ջահուկյանը *պիտի* եղանակիչի առաջին վանկի սղումով ձևեր արձանագրել է Լոռու խոսվածքներում, իսկ բուն Արարատյան բարբառի խոսվածքներում եղանակիչի սղված ձևեր չի վկայել⁵⁸:

27. Սահմանական ապառնու արտահայտություն *պիտի*-ի կրճատ ձևերով. օր.՝ *նըստիլ տիւ, նըստիլ տիս, նըստիլ տի* (1 միավոր)

Հատուկ է Լոռիին: Ըստ Մ. Ասատրյանի՝ սահմանականի ապառնի ժամանակների իմաստը խոսվածքում արտահայտվում է հարկադրականի ձևերով՝ *գնալ տէւ, գնալ տէ*⁵⁹:

28. Հարկադրականի ձևավորում *պիտի*-ի խոնարհվող ձևերով (0,5 միավոր)

Հատուկ է Լոռիին, բայց երբեմն հանդիպում է նաև Փարպիում և Օշականում: Լոռիի մի մասում խոնարհվում է *պիտիւ*-ը (օր.՝ գրիլ

⁵⁴ Տե՛ս Ա. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 226:

⁵⁵ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 116:

⁵⁶ Տե՛ս Ռ. Մարկոսյան, Արարատյան բարբառ, էջ 150:

⁵⁷ Տե՛ս նշվ. աշխ., էջ 151:

⁵⁸ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 115-116:

⁵⁹ Տե՛ս Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 113-114:

պըտեն, գրիլ պըտես, գրիլ պըտի), իսկ Հաղպատում, Վարդաբլուրում, Դսեղում, Շավարշավանում՝ կրճատ ձևը (տիմ//տեմ):

29. Ժխտական դերբայի հատուկ ձևերի առկայություն (0,5 միավոր)

Լոռին և Աշտարակը, Օշականը չունեն, Փարպին ունի: Լոռու խոսվածքում ժխտական դերբայի բացակայությունն արձանագրել է նաև Մ. Ասատրյանը⁶⁰: Գ. Զահուկյանը այս հատկանիշը արձանագրել է Էջմիածնում և Կողբում, մասամբ՝ Երևանում և Քանաքեռում⁶¹:

30. Ապառնի դերբայի առկայություն (0,5 միավոր)

Լոռին և Աշտարակը, Օշականը չունեն, Փարպին ունի ապառնի դերբայ: Մ. Ասատրյանը ևս նշել է խոսվածքում ապառնի դերբայի բացակայությունը⁶²:

31. Ա խոնարհման բայերի ենթակայական դերբայի կազմություն ներկայի հիմքից. օր.՝ *աղօղ, հրսկանօղ* (0,5 միավոր)

Բնորոշ է Լոռիի տարբերակների մի մասին (Թեղուտ, Հաղպատ, Սանահին, Դսեղ, Շավարշավան), նաև՝ Օշականին, իսկ Աշտարակում կազմվում է միայն անցյալի հիմքից: Մ. Ասատրյանը նշել է, որ ենթակայական դերբայը բոլոր բայերի դեպքում կազմվում է անորոշի (ներկայի) հիմքով⁶³:

32. Անցյալ կատարյալի ցոյական կազմություն *իլ/ել* վերջավորվող պարզ բայերի դեպքում. օր.՝ *լըսեցի, նըստեցի, չափեցի* (0,5 միավոր)

Հատուկ է Լոռիին և Աշտարակին, մասամբ՝ Փարպիին, Օշականում անցյալ կատարյալը ցոյական չէ:

⁶⁰ Տե՛ս նշվ. աշխ., էջ 113:

⁶¹ Տե՛ս Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 115-116:

⁶² Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 113:

⁶³ Տե՛ս նշվ. աշխ., էջ 118:

33. Ե խոնարհման պարզ բայերի ըղձական ապառնու եզակի երրորդ դեմքի *է* վերջավորություն. օր.՝ *զըրէմ, զըրէս, զըրէ* (0,5 միավոր)

Մասամբ է բնորոշ Լոռիին (Թեղուտ, Ճոճկան, Հաղպատ, Սանահին, Շավարշավան): Մ. Ասատրյանը նկատել է, որ այս հատկանիշը հաստուկ է այն խոսվածքներին, որոնցում անորոշը ունի *ել* վերջավորություն⁶⁴:

34. Ըղձական անցյալի ապառնիի բացակայություն. օր.՝ *էռնակ զըրէլ ի* (0,5 միավոր)

Բնորոշ է Լոռիի որոշ տարբերակների (Թեղուտ, Հաղպատ, Սանահին, Դսեղ, Շամուտ): Մ. Ասատրյանը իրավացիորեն նշել է, որ խոսվածքում անցյալ անկատարի ձևավորման յուրահատկության պատճառով (բըժանէի) ըղձական անցյալի ապառնին բացակայում է, այդ իմաստը կարող է արտահայտվել անցյալի վաղակատարով⁶⁵:

35. Հարկադրականի եղանակիչի ետադասություն. օր.՝ *զըրիլ տէմ* (0,5 միավոր)

Հաստուկ է Լոռիին, մասամբ էլ՝ Փարպիին:

36. Եզակի հրամայականի *է* վերջավորության առկայություն (0,5 միավոր)

Թեղուտում գուգահեռ գործածվում են *է* և *ի* վերջավորություններ (նըստէ/նըստի), Ճոճկանում և Շավարշավանում չեզոք բայերն ունեն *ի*, ներգործականները՝ *է* (ապրի, բըռնէ): Իսկ Աշտարակում, Փարպիում և Օշականում՝ ներգործականները՝ *ա*, չեզոքները՝ *ի*: Մ. Ասատրյանը փաստում է, որ այս հատկանիշը բնորոշ է անորոշում *է*, *ա*, *ի*, *ու* լծորդություններ ունեցող խոսվածքներին, այ-

⁶⁴ Տե՛ս նշվ. աշխ., էջ 124:

⁶⁵ Տե՛ս նշվ. աշխ., էջ 124:

սինքն՝ Ալավերդու և Նոյեմբերյանի շրջանի գյուղերի խոսվածքներին⁶⁶:

37. Ա խոնարհման բայերի կրավորականի կազմությունն ներկայի հիմքից՝ ալ վերջավորության պահպանումով. օր.՝ *աղվալ, զօղանվալ, լըվանվալ* (0,5 միավոր)

Հատկանիշը հատուկ է Լոռիին, նշում է Մ.Ասատրյանը⁶⁷: ՀԲԱ ծրագրով տեսրերում չի արտահայտված համապատասխան ձևակերպում չունենալու պատճառով, բայց բարբառակիրները վկայում են⁶⁸:

Եզրակացություններ

1. Բարբառային հայերենի՝ դիտարկված տարբերակների շրջանակում Լոռու խոսվածքի դրսևորումները, այսպիսով, Արարատյան բարբառի խոսվածքներից տարբերվում են առնվազն 24,5 միավորով, որը նշանակում է, որ Լոռու խոսվածքը կարող է դիտվել իբրև Արարատյանից առանձին բարբառ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիտարկվող բարբառային միավորի շրջանակում գուգորդվում են Արարատյան, Ղարաբաղի բարբառներին, ինչպես նաև միայն իրեն հատուկ հատկանիշներ, թերևս մինչ այժմ Լոռու խոսվածք անվանված բարբառային միավորը ամբողջական ուսումնասիրությամբ ստացված փաստերի համադրման արդյունքում ի վերջո համարվի միջբարբառ և կոչվի Լոռու միջբարբառ:

2. Բարբառների դասակարգումը ճիշտ կլինի կատարել աստիճանականության սկզբունքով, այնպես, որ ընտրված բոլոր 100 հատկանիշները դասակարգվող միավորների շրջանակում գոր-

⁶⁶ Տե՛ս նշվ. աշխ., էջ 113, 126:

⁶⁷ Տե՛ս նշվ. աշխ., էջ 137-138:

⁶⁸ Բացի այդ, դաշտային աշխատանքների ընթացքում հատկանիշը արձանագրել ենք որոշ բնակավայրերի խոսվածքներում:

ծուն լինեն, այսինքն՝ 100 հատկանիշները տարբեր մակարդակներում պետք է փոփոխվեն: Ըստ այդմ՝ Գ. Ջահուկյանի ընտրած 100 հատկանիշները ընդունելի են հայերենի բոլոր բարբառների դասակարգման համար և թերևս հնարավորություն են տալիս բավարար ճշգրտությամբ իրարից զատելու բարբառների խմբակցություններն ու խմբերը: Մինչդեռ բարբառախմբերի ներսում դասակարգումներ կատարելիս պետք է դուրս թողնել հավելուրդային, տվյալ բարբառախմբի որևէ բարբառային միավորում չհանդիպող հատկանիշները և ընտրել այնպիսի 100 հատկանիշներ, որոնք մեծ տարածում ունեն բարբառախմբում և հանդիպում են բարբառախմբի գոնե մեկ բարբառային միավորում: Այդ նույն սկզբունքով պետք է առաջնորդվել նաև երկու բարբառային միավորներ համեմատելիս՝ բացառելով հավելուրդային հատկանիշները և ընդգրկելով միայն երկուսի համար ընդհանուր, երկուսում էլ դրսևորվող, ինչպես նաև երկուսին իրարից տարբերող հատկանիշներ:

Օգտագործված գրականություն

Աճառեան Հ., Հայ բարբառագիտություն, Մոսկուա-Նոր Նախիջևան, 1911:

Ղարիբյան Ա., Հայ բարբառագիտություն, Ե., 1953:

Ասատրյան Մ., Լոռու խոսվածքը, Ե., 1968:

Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972:

Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Ե., 1988:

Ամիրջանյան Հ., Լոռին 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Ե., 2010:

Մարկոսյան Ռ., Արարատյան բարբառ, Ե., 1989:

Գրիգորյան Ա., Հայ բարբառագիտության դասընթաց, Ե., 1957:

Գևորգյան Գ., Հայերենի բարբառների եղանակաժամանակային համակարգերի տարածագործառական բնութագիրը, Ե., 2013:

Katvalyan Victor - On the Relationships between Lori Speech and the Ararat Dialect.- The issue of the status of the Lori speech has had different interpretations. Eventually, an opinion emerged that it could be considered both an independent dialect, distinct from Ararat, and one of the variants of Ararat. In order to have additional information on the relationship between the Lori speech and the Ararat dialect, the work examined about a dozen variants of the Lori speech, comparing them with a number of speeches of the Ararat dialect. It was found that within the framework of the observed variants of dialectal Armenian, the manifestations of Lori speech differ from those of the Ararat dialect by at least 24.5 points, which means that Lori speech can be considered a separate dialect from Ararat.

Keywords: dialect, speech, sound, plural, past imperfect, compulsive mood, distinctive feature.

Katvalyan Victor, Doctor in Philology, Institute of Language of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Leading Researcher.

Катвалян Виктор - О взаимоотношениях Лорийского говора и Араратского диалекта.- Вопрос о статусе Лорийского говора трактовался по-разному. Со временем возникло мнение, что его можно считать и самостоятельным диалектом, отличным от Араратского, и одним из вариантов Араратского. С целью получения дополнительных сведений о соотношении лорийского говора и араратского диалекта в работе было рассмотрено около десятка вариантов Лорийского говора, в сравнении с рядом говоров Араратского диалекта. Установлено, что в рамках наблюдаемых вариантов диалектного армянского языка проявления Лорийского говора отличаются от проявлений Араратского

диалекта не менее чем на 24,5 балла, что позволяет считать Лорийский говор отдельным диалектом от Араратского.

Ключевые слова: диалект, говор, звук, множественное число, прошедшее несовершенное время, принудительное наклонение, различительный признак.

Катвалян Виктор, доктор филологических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, ведущий научный сотрудник.

**ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ
ՆԱԶԱՐԵԹ ՏԱՂԱՎԱՐՑԱՆԻ «ԲԱՌԱՑՈՒՑԱԿ
ԱԽՏԱՆՈՒԱՆՑ»-ՈՒՄ***

DOI: 10.54503/2738-277X.2025.1(22)-49

Ղարիբյան Ալինա

ԵՊԲՀ, հայոց լեզվի ամբիոնի դասախոս.

alinagharibyan@rambler.ru

Բանալի բառեր. բառարան, տերմիններ, բժշկագիտական արևմտահայերեն, արևելահայերեն, եզրաշարքեր, փոխառություններ, զուգադիր քննություն:

Նախաբան

Արևմտահայերեն բժշկագիտական տերմինները ինչպես բըժըշկագիտական, այնպես էլ լեզվաբանական առումներով այսօր էլ մեծ հետաքրքրություն են առաջացնում: Լեզվաբանական տեսանկյունից արդիական են հայերենի երկու ճյուղերի՝ արևմտահայերենի և արևելահայերենի փոխհարստացման, փոխներթափանցումների խնդիրները: Այդ ենթատեքստում տերմինները, մասնավորապես բժշկագիտական, նույնպես այդ երկու ճյուղերի փոխհարստացման հարցում իրենց կարևորությունը կարող են ունենալ: Այս աշխատանքի նպատակն է քննել բժշկագիտական տերմինների մի բավական հարուստ շերտ՝ արևմտահայերեն բժշկագիտական տերմինները, որոնց համալրման ու հարստացման պատմությունը քիչ է ուսումնասիրված և գիտական հետաքրքրություն է ներկայացնում: Ն. Տաղավարյանի՝ 1901թ. հրատարակած այս աշ-

* Ներկայացվել է 30.08.2025, գրախոսվել՝ 04.09.2025:

խատանքը եթե ոչ առաջին, ապա առաջիններից է, որում հեղինակը ներկայացնում է արևմտահայերեն բժշկագիտական տերմինները՝ հիմք ունենալով ֆրանսերենից թարգմանված միջազգայնորեն ընդունված հունալատինական բժշկագիտական տերմինները: Հետագայում նաև մինչև մեր ժամանակները շարունակվում են տերմինաստեղծման աշխատանքները, որոնց արդյունքում երկու ճյուղերում էլ ունենք բավական հարուստ տերմինաշարքեր, և որոնց զուգադիր քննությունը լեզվաբանական ուսումնասիրությունների նյութ է դարձել: Այդ առումով անհրաժեշտ ենք համարում սույն հոդվածում կատարել տերմինների զուգադիր քննու-

1 **Ա. Սարգսյան**, Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Ե., 1985 (Ա. Սարգսյանը նշում է, որ բժշկագիտական առումով հայերենի երկու ճյուղերում առկա եզրաշարքերը կարող են փոխլրացնել միմյանց, հատկապես, եթե հաշվի առնենք՝ եթե գրական արևմտահայերենը փոխառությունների հարցում ունի անգիջում պահպանողական դիրք, ապա գրական արևելահայերենի տերմինային համակարգում զգալի քանակություն են կազմում փոխառյալ բառերը (նշվ. աշխ., էջ 130):

Ռ. Սաքապետոյան, Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները, Ե., 2004 (Ռ. Սաքապետոյանը կարևոր է համարում ախտաբանական և բժշկագիտական արևմտահայերենյան տերմինների առանձնակի քննությունը, քանի որ կուտակված նյութը, առկա լեզվական օրինաչափությունները, հաջողված նմուշները մեծապես կարող են նպաստել արևելահայ մասնագիտական բառապաշարի հարստացմանն ու մի շարք օտար ձևերից հրաժարվելուն (նշվ. աշխ., էջ 138):

Ն. Հովհաննիսյան, Արևմտահայերենի և արևելահայերենի բժշկական և քաղաքական տերմինների զուգադրական քննություն // Արևմտահայերենի և արևելահայերենի տերմինային համակարգերի զուգադրական քննություն, ՀՀ Սփյուռքի նախարարություն, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Ե., 2014, էջ 20-53 (Զուգադիր քննությամբ, Վ. Կատվալյանի հավաստմամբ, հարկ է «դիտարկել ընդհանուր և տարբերակվող շերտերը, նշել այդ ընդհանրությունների ու տարբերությունների հիմքերն ու պատճառները, դիտարկել այդ տարբերությունները ըստ բնույթի՝ ծագումնաբանական, բառակազմական, իմաստաբանական, գործառական և այլն»՝ հաշվի առնելով նաև այն փաստը, որ «Ընդհանուր առմամբ, երկու գրական լեզուների համար նախ և առաջ տարբերակիչ են տերմինային համակարգի ձևավորման հարցում օտար ազդեցությունների, օտար և հայերեն տերմինների առաջնայնությունը նկատմամբ մոտեցումները».

Վ. Կատվալյան, Նախաբան // Արևմտահայերենի և արևելահայերենի տերմինային համակարգերի զուգադրական քննություն, էջ 17):

թյուն, վեր հանել երկու ճյուղերում առկա նմանություններն ու տարբերությունները՝ պայմանավորված բառակազմական, իմաստաբանական, գործառական հիմքերով, մնալով միայն «Բառացուցակ»-ում ընդգրկված տերմինների շրջանակում: Միաժամանակ նպատակ ունենալով վեր հանել մասնագիտական բառապաշարի զարգացմանը, փոխհարստացմանը նպաստելու հնարավորությունները, պատկերացում տալ արևմտահայերեն տերմինաշերտի զարգացման պատմության մասին:

Ընդհանուր տեղեկություններ

1901թ. Կ.Պոլսում Նազարեթ Տաղավարյանը արդեն «սրբագրեալ եւ ճոխացեալ» տարբերակով վերահրատարակում է «Բառացուցակ ախտանուանց, Ֆրանսերէնէն ի Հայ» վերնագրով բառարանը, որից առաջ՝ 1900 թ., հրատարակել էր «Բառացուցակ ախտանուանց եւ դեղորէից յատկութեանց, Ֆրանսերէնէն ի Հայ» աշխատանքը: Նկատենք, որ այս աշխատանքից առաջ հրատարակված արևմտահայերեն բժշկագիտական տերմինների այլ բառարաններ մեզ հայտնի չեն: Աշխատանքը հետաքրքրում է մի քանի առումներով. նախ՝ այս բառարանն առաջիններից է, որում ֆրանսերեն-հայերեն թարգմանությամբ ներկայացվում են արևմտահայերեն բժշկագիտական տերմիններ, որոնք հիմականում լատիներեն են: Քանի որ հեղինակը բժշկական կրթությունը ստացել էր Փարիզում, բնականաբար, միջազգայնորեն ընդունված բժշկագիտական տերմինաբանությունը նրան շատ լավ ծանոթ էր, նա նաև բանասեր էր, ուստի փորձել է ճիշտ թարգմանել օտար տերմինները, ընդ որում հեղինակի ստեղծածները աշխատանքում աստղանիշով են: Պետք է նշել նաև, որ 1900 թ. առաջին տարբերակում ավելի շատ են հեղինակային փոխադրությունները, քան երկրորդում: 1901թ. հրատարակված օրինակում արդեն նախորդներից

շատերն աստղանիշեր չունեն, որը վկայում է այն մասին, որ այդ տերմինների հեղինակային տարբերակները հաջողված էին և ընդունելի բժշկագիտական հանրությանը: Սույն բառացանկին անդրադառնալու երկրորդ հանգամանքն այն է, որ մեր կարծիքով դեռևս անցյալ դարի սկզբներին կոնկրետ փոխազդեցությունները արևելահայ և արևմտահայ տերմինների միջև ակնառու չէին, երկու ճյուղերի տերմինաշարքերը զարգանում էին միմյանցից անկախ, սակայն նմանությունները անխուսափելի են: Հետագայում, իհարկե, այդ փոխազդեցությունները դրսևորվում են, հատկապես սկսում է շատ արագ զարգանալ արևելահայերեն տերմինաբանությունը՝ բժշկական տարբեր գիտաճյուղերի զարգացումով պայմանավորված: Այդ տերմիններն ամրագրված են հետագա տասնամյակներում ստեղծված արևմտահայերեն-արևելահայերեն մի շարք բառարաններում: Երրորդ՝ թեև հեղինակը աշխատանքը կոչում է բառացուցակ, և ոչ բառարան, քանի որ ներկայացվում է ընդամենը մոտ 1360 բժշկագիտական տերմին, սակայն այդքանն էլ բավարար է ընդհանուր պատկերացում կազմելու արևմտահայ, մասնավորապես Պոլսի իրականության մեջ հայ բժշկագիտական մտքի, ընդհանրապես բժշկության զարգացման մակարդակի, ինչպես նաև արևմտահայ բժշկագիտական հանրության պատկերացումների մասին: Պետք է հաշվի առնել, որ հեղինակը ոչ միայն բժիշկ էր, այլև բանասեր, մանկավարժ, բնագետ, գյուղատնտես: Նա հեղինակել է մի շարք գիտական աշխատանքներ տարբեր ոլորտների վերաբերյալ՝ բժշկության, կենսաբանության, մանրէաբանության, քիմիայի, ֆիզիկայի, աստղագիտության, երկրագործության, հայ գրերի գյուտի, Հայաստանի պատմության, կրոնի և եկեղեցու պատմության մասին, տիրապետել է մի շարք լեզուների, դասախոսություններ կարդացել հայերեն, ֆրանսերեն, նաև թուրքերեն:

Նազարեթ Տաղավարյանը² (իրական ազգանունը Չատրճյան) ծնվել է 1862թ. Սեբաստիայում, արհեստավորի ընտանիքում։ Սկզբնական կրթությունը ստանալով Պոլսի Սկյուտարի և Կալաթա թաղամասերի ազգային վարժարաններում՝ մեկնել է Փարիզ և 1878-1883 թթ. սովորել Ֆրանսիայի երկրագործական վարժարանում, այնուհետև ուսումնարանում, ստացել երկրագործության գյուղատնտես-ինժեների կոչում։ Վերադառնալով Պոլիս՝ աշխատանքի է անցել երկրագործության նախարարությունում։ Կարճ ժամանակ անց հեռացել է աշխատանքից, վերադարձել Սեբաստիա և զբաղվել մանկավարժական բուռն գործունեությամբ, հետո նորից՝ Կ.Պոլիս, աշխատակցել է Պոլսի և Փարիզի հայերեն և ֆրանսերեն պարբերականներին։ Նորից մեկնել է Փարիզ և 1887-1893թթ. ուսանել Փարիզի, զուգահեռաբար Սորբոնի համալսարանների բժշկական ֆակուլտետներում՝ ստանալով բժշկության դոկտորի աստիճան։ Կրկին վերադառնալով Պոլիս՝ բացում է իր սեփական բուժարանը։ Սակայն ազգային հայրենասիրական հայացքների պատճառով երկու անգամ ձերբակալվելուց հետո, հեռանում է Պոլսից և հաստատվում Կահիրեում։ 1908թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո վերադառնում է Պոլիս, ընտրվում խորհրդարանի երեսփոխան Սեբաստիայից, զբաղվում հողային հարցի նախագծի մշակմամբ։ Տաղավարյանը հասարակական եռանդուն գործունեություն է ծավալում հատկապես ազգային կեդրոնական վարչությունում (որի քաղաքական ժողովի անդամ էր 1910-1912թթ.) և Պոլսի քաղաքապետարանում։ 1913թ. նշանակվում է Կ.Պոլսի քաղաքապետարանի ընդհանուր քննիչ։ 1914թ. ՀԲԸՄ մասնաճյուղեր բացելու նպատակով այցելում է Կովկաս։ 1915թ. ապրիլի 24-ին 600 հայ մտավորականների հետ նրան նույնպես

² <https://azg.am/culture/>

ձերբակալում են, հետո տեղափոխում Այաշի բանտ, այնտեղից էլ Տիգրանակերտ տեղափոխելու ճանապարհին 13 այլ հայ մտավորականների հետ միասին գազանաբար սպանում են չեթենների հրոսակախմբի ձեռքով, գերմանացի զինվորների աչքի առաջ:

Արևմտահայերեն և արևելահայերեն տերմինների զուգադիր քննություն

Թվարկած հանգամանքներով պայմանավորված՝ դիտարկենք արևմտահայերեն և արևելահայերեն³ այն տերմինախմբերը, որոնք նմանությունների հիմքերով են պայմանավորված: Այդ նմանությունները կարող են լինել ամբողջական՝ բառամիավորի և՛ կազմությամբ, և՛ իմաստով արտահայտված, նաև մասնակի՝ կազմության որոշ մասերի փոփոխություններով կամ իմաստային ու գործառական մասնակի տարբերություններով (իմաստի լայնացում կամ նեղացում), գործառության մասնակի փոփոխություններով արտահայտված⁴:

Արևմտահայերենում և արևելահայերենում նույն բառամիավորով արտահայտված տերմիններ՝ ընդհանուր հայերենյան, նաև փոխառություններ. անուժութիւն (adynamie), անկաթնութիւն (agalactie), ոգէւարք (agonie), անյիշութիւն (amne'sie), սակաւարիւնութիւն (ane'mie), անզգայութիւն (anesthe'sie), անքրտնութիւն (anidrose), անմիզութիւն (anurie), անձայնութիւն (aphonie), անխոսութիւն (aphasie), շնչահեղձութիւն (անանթազարկութիւն) (asphyxie), անգորութիւն (asthe'nie) և այլն (լատիներեն *a-*, *an-*ով կազմված տերմինները հայերենում փոխարինում ենք *ան-* ժխտա-

³ Ա. Ավետիսյան, Լատիներեն-անգլերեն-հայերեն բժշկական բառարան, Ե., 2007 (արևելահայերեն տերմինները քաղվել են սույն բառարանից):

⁴ Զուգադիր տերմինաշարերում արևելահայերեն տերմինները երկրորդ են:

կան նախածանցով, ժամանակակից արևելահայերենում՝ նաև *ապ-նախածանցով*)⁵:

Հոդացալ (Arthralgia), գլխացալ (cephalalgie), ստամոքսացալ (gastralgie), լեզուացալութիւն (glossalgie), լեարդացալ (he´patalgie), երիկամացալ (ne´phralgie), փայծաղացալ (sple´nalgie) և այլն (ցալ (algie) բառարմատով վերջացող տերմինները գրեթե նույնական են), կեղծամաշկութիւն (diphte´rie), դժուարախոսութիւն (dyslalie), դժուարամարսութիւն (dyspe´psie), դժուարաշնչութիւն (dyspne´e), դժուարամիզութիւն (dysurie) և այլն (լատիներեն dys- նախածանցով սկսվող եզրույթները հայերենում թարգմանվում են *դժվար*, երբեմն *խանգարում* բառերով), գերաճումն (hype´rtrophie), ապուշութիւն (idiotie), արեւահարութիւն (insolation), անքնութիւն (insomnie), հիստերիա (hyste´rie) և այլն:

Բարդ կամ բարդաձանցավոր համադրական եզրույթներ, որոնք իմաստով նույնական են, բայց որոնց բաղադրիչներից մեկը փոխարինվում է նույնիմաստ այլ բառարմատով. լսնամորթութիւն-լսնամաշկություն (albinisme), անախորժութիւն-անախորժակություն, ախորժակակորուստ, անորեքսիա (anorexie), փորաջրգողութիւն-ջրգողություն (ascite), շնաքաղցութիւն, կերցալ-մշտաքաղց, գայլաքաղց (boulimie), մաղձաքար-լեղաքար (calcul biliaire), դժուարակերութիւն-դժվարակլլում (dysphagie), անոթախից-անոթախցանում (embolie), կարմրամորթութիւն-կարմրամաշկություն, երիթեմա (e´rytheme), սկարամտութիւն-թուլամիտ, իմբեցիլ (imbe´cillite´), սևամաղձութիւն-մելամաղձություն (melancolie) և այլն:

Բնականաբար առկա են հնչյունական տարբերություններով

⁵ Հայոց լեզու, Ուսումնական ձեռնարկ, Ե., ԵՊԲՀ, 2009, էջ 223:

պայմանավորված գրեթե նույնական արմատներ. քոլերա /հըն-դախտ/-խոլերա (chole'ra), քոլերիկ-խոլերիկ (chole'rine), թանջք-թանջ, արյունալուծ (dysenterie):

Այս շարքում կարելի է դիտարկել նաև այն ախտանունները, որոնք վերջանում են լատիներեն *-իտ* (-itis), *-ոմա* (-oma), *-ոզ* (-osis) վերջածանցներով: Ընդ որում արևմտահայերենում *-իտ*-ը փոխարինում են *տապ* արմատով, արևելահայերենում այն թարգմանվում է *բորբ*, *ոմա*-ն արևմտահայերեն փոխարինվում է *ուռ* արմատով, արևելահայերենում՝ *ուռուցք*, *ոզ*-ը երկու ճյուղերում էլ թարգմանվում է *ախտ*: Նշված վերջածանց-արմատներով ախտանուններում կան մի շարք անուններ, որոնց առաջին բաղադրիչները համընկնում են արևելահայերենին:

Նման տերմիններ. հոդատապ-հոդաբորբ (arthritis), պատճատապ-պատիճաբորբ (capsulite), աճառատապ-աճառաբորբ (chondrite), լեզուատապ-լեզվաբորբ (glossite), լնդատապ-լնդաբորբ (gengivite), ստամոքսատապ-ստամոքսաբորբ (gastrite), լեարդատապ-լյարդաբորբ (he'patite), ծիածանատապ-ծիածանաթաղանթաբորբ (iritis), աւշանոթատապ-ավշանոթաբորբ (lymphangite), անոթուռանոթուռուցք (angiome), աճառուռ-աճառուռուցք (chondrome), ճարպուռ-ճարպուռուցք (lipome) և այլն:

Կարծում ենք՝ նման համադրական բարդություններում *տապ*, *բորբ*, *ուռ*, *ախտ* արմատները տերմինային շարքում դարձել են երկրորդ բաղադրիչ, և կարելի է ասել՝ ձեռք են բերել ածանցի արժեք, ընդ որում, հայերենի հնչյունական օրենքներից ելնելով, *տապ*, *բորբ* արմատներով կազմված բարդությունները հոդակապով բարդություններ են, իսկ *ուռ*, *ախտ* ձայնավորասկիզբ արմատներով կազմվածները՝ անհոդակապ:

Հաջորդ մեծ տերմինախումբը բառացանկում ներառված արևմտահայերեն այն տերմիններն են, որոնց զուգահեռ են արևելահայերեն տարարմատները: Սրանցից նախ դիտարկել ենք վերը նշած վերջածանց-արմատներով տերմինները, որոնց առաջին բաղադրիչները իմաստով նույնն են, սակայն տարարմատ են:

Տարարմատ տերմիններ. յաւելադետապ-որդանման ելունի բորբոքում (appendicite), արտեւանատապ-կոպաբորբ (ble'pharite), ցնցղատապ (թոքացնցղատապ)-բրոնխաբորբ (bronchite), շնչերակատապ-զարկերակաբորբ (arte'rite), փամփշտատապ-միզապարկաբորբ (cystite), մորթատապ-մաշկաբորբ (de'rmatite), արտասուագեղձատապ-արցունքագեղձաբորբ (dacryade'nite), արտասուաբշտատապ-արցունքապարկաբորբ (dacryocystite), աւշախուլատապ-ավշագեղձաբորբ (lymphade'nite), մաղձաբշտատապ-լեղապարկաբորբ (chole'cystite), խոչատապ-կոկորդաբորբ (laringite), խուլուռ-գեղձուռուցք (ade'nome), խիւսուռ-ճարպագեղձուռուցք (at-he'rome), աւշախուլուռ-ավշագեղձուռուցք (lymphade'nome), խաժախտ-կապտախտ (cyanose), պղնձախտ-բրոնզախտ (bronze'e) և այլն:

Այս և նման կարգի տարբերությունները պայմանավորված են ինչպես երկու ճյուղերի բարբառային հիմքերի տարբերություններով, այնպես էլ, կարծում ենք, լեզվամտածողության տարբերություններով: Բոլորն ընդհանուր հայերենյան են, սակայն, օրինակ, արևելահայերենում *մորթ*, *մորթի* ասելով հասկանում են *կենդանու մորթի*, արևմտահայերենում՝ *մարդու*, արևելահայերենում *խուլ*-ը դարձյալ «գեղձ» է նշանակում, սակայն այդ ձևն առկա է բարբառներում և խոսակցական հայերենում, բայց այն որպես տերմին չի գործածվում, նույնպես նաև *միզապարկ*-ին միայն բարբառային խոսքում են *փամփշտ* ասում, այդպես նաև *մաղձ*-ը

արևելահայերենում տերմինի արժեք չունի և չի փոխարինում *շե-դու*-ն հատկապես բառասկզբում և այլն:

«Բառացուցակ»-ում վկայվող արևմտահայերենի և արևելահայերենի տերմինների տարբերությունները առկա են նաև այլ ախտանուններում. ծաղկեպալար-պզուկ, բշտիկ, պալար, կոծիծ, ակնն (acne'), ճաշակատուփին-համազրկություն (agueusie), ակնամթաք-մթակնություն, տեսակորուստ (amaurose), յոդագոս-կրկանք, անշարժություն (ankylose), տորոմումն⁷ (մայր շնչերակի)-անոթալայնանք (ane'vrisme), փողացաւ-բկաբորբ (angine), մայր շնչերակ-մայր զարկերակ (aortite), վանակնագուրկ-անոսպնյակություն (aphakie), ճակաճանութիւն, տոփախտ-սեռական հակում, ցանկասիրություն (aphrodisie), ծանրաշնչութիւն, գմայ-հեղձուկ (asthme), ծիւրումն-ապաճում (atrophie), ընդլայնումն թոքացնցղաբրոնխալայնանք (bronchectasie), ակնագողատապ-շաղկապենաբորբ (conjunctivite), լորցք-ջղաձգություն (convulsion), խոչամզուկ-կրուպ, աքլորախեղդ, խռուկ (croup), գինեմոլութիւն, արբեմոլութիւն-խմելամոլություն (dipsomanie), ձմռնակ, ցրտխած-ցրտահարություն մաշկի (engelures), լուսնոտութիւն-ընկնավորություն (e'pilepsie), տոփամոլութիւն-երոտոմանիա (e'rotomannie), նեարդուռ (հետագայում՝ հիւսկէնուռ)-թելքուռուցք (fibrome), սողնախըտութիւն-տենդաբուշտ (h'erpese), ախոնդացաւ-հիպոխոնդրիա, մելամաղձություն (hypochondrie), թեփամորթութիւն-ձկնամաշկություն (ichtyose), մորթաքոս-որբին (lichen), քրջահաւաքաց հիւանդութիւն-աղբահավաքների հիվանդությունը (maladie des chiffonniers), անգարս, կիսագլխացաւ-միգրեն (migrene), ջղացաւութիւն-

⁷ *Տորոմոլի՝* հիւանդութիւնից մարմինը ուռչիլ (տե՛ս **Հ. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան (այսուհետև ՀԱԲ), Կ. Դ, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1979, էջ 423):

⁸ Տե՛ս **Ն. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 40:

նյարդացավ (nevralgie), ջղայտուց-նյարդուռուցք (nevrome), ցայգա-տեսություն-գիշերատեսություն (բառացի՝ գիշերակութություն) (nyctalopie), հարսնամոլություն-հեշտամոլություն, վալաշոտություն, ցանկասիրություն (nymphomania), սոնքություն-գիրություն, ճարպակալում (obe'site'), ունկնատապ-ականջաբորբ (otite), համայնավախություն-պանտոֆոբիա (pantophobia), շճամզնատապ որովայնի-որովայնամզաբորբ (pe'ritonite), պալար-թարախաբորբ, ֆլեգմոնա (phlegmon), կարմրախտ-ծիրանեցան, պուրպուրա (purpura), հարսանիք, վարդացավ-կարմրուկ (rugeole), ճակաճանություն-ցանկասիրություն, տոփամոլություն (տղամարդու) (satyriasis), կարմրուկ-քութեշ, վարդախտ, վարդացավ (scarlatine), ամլություն-կնոջ անպտղություն, անծնելություն (ste'rilite'), ֆրանկախտ-սիֆիլիս, վեներախտ (syphilis), կարկամություն-պրկանք, փայտացում, տետանուս (tet'anos), կեղ-խոց (ulse're), ափրոդիտեան-վեներական հիվանդություններ (ve'ne'riennes (maladies)), փամփշտատապ-բշտկաբորբ (բշտիկ, վեզիկուլա) (ve'siculite) և այլն:

Տերմինատարբերում տարբերությունները կարող են պայմանավորվել տերմինների բաղադրիչների շարադասությամբ. ակնամթարք-մթակնություն, շճամզնատապ որովայնի-որովայնամզաբորբ, նաև երբ տերմիններից մեկը փոխառություն է՝ թոքացնցղատապ կամ ցնցղատապ-բրոնխիտ, տոփամոլություն-էրոտոմանիա, ֆրանկախտ (նշանակում է ֆրանսիական հիվանդություն, որն առաջացել է 16-րդ դ.)-սիֆիլիս, բաղխումն-շոկ, թմբիր- թմբիր, քնափություն, կոմա, խոչամզուկ-կրուպ, էքզեմա-թրմաքոս, որքին, անգար-միզրեն, ափրոդիտեան-վեներական հիվանդություն (այս դեպքում երկուսն էլ փոխառություն են՝ կազմված սիրո հունական և հռոմեական աստվածուհիների անուններից՝ Ափրոդիտե,

Վեններա): Երբ տերմիններից մեկը (այս դեպքում հիմնականում արևմտահայերեն) հինհայերենյան ծագում ունի՝ ճակաճանություն¹⁰ նշանակում է «իգամոլ, բղջախոհ», խիւսուոի մեջ *խիւս*¹¹ արմատը նշանակում է նաև «ճարպ, միս», ախոնդացավի մեջ ախոնդը¹² «ստամոքս»-ի, փորոտիք»-ի իմաստն ունի, ախոնդանոտ ձևով նշանակում է «մաղձոտ», սոնքութիւն՝ *սոնք*¹³ նշանակում է «ստուար, յոյր, գէր, թաւ», սոնքանալ՝ «գիրանալ, թաւանալ, ստուարանալ», վանակնագուրկի մեջ *վան*¹⁴ «բիրեղ», *լորց*-ը բնիկ հայերեն բառ է, նշանակում է «ջղերի քաշուիլը, անդամների կծկուիլը»¹⁵ և այլն:

Զուգադիր այս քննությունը, բնականաբար, մի շարք առաջարկությունների հնարավորություն է ընձեռում. մասնավորապես, կարծում ենք, *ակնէի* (acne՝) համար արևմտահայերեն *ծաղկապալար*-ը նախըտրելի տարբերակ կարող է լինել արևելահայերեն *պզուկ*, *բշտիկ*, *պալար*, *կոծիծ*, *ակնէ* տերմինների համեմատությամբ, կամ՝ dipsomanie-ի համար արևելահայերեն *հարբեցողամոլության*, *խմելամոլության* փոխարեն ավելի գեղեցիկ կհնչի արևմտահայերեն *արբեմոլություն*-ը, *boulimie*-ի համար կարելի է գործածել *կերախտ* ձևը *շնաքաղցութիւն*, *կերցաւ-մշտաքաղց*, *գայլաքաղց* տարբերակների փոխարեն:

Այսպիսով՝ ևս մեկ անգամ պետք է փաստել, որ անցյալ դարի սկզբներին, ի տարբերություն արևելահայերենի, արևմտահայերենը բժշկագիտական տերմինաստեղծման գործընթացում փորձում է առավելագույնս օգտվել բնիկ կամ արևմտահայ՝ մասնավոր-

¹⁰ ՀԱԲ, հ. Գ, էջ 175:

¹¹ ՀԱԲ, հ. Բ, էջ 372:

¹² ՀԱԲ, հ. Ա, էջ 99:

¹³ ՀԱԲ, հ. Դ, էջ 243:

¹⁴ ՀԱԲ, հ. Դ, էջ 303:

¹⁵ ՀԱԲ, հ. Բ, էջ 299:

րապես Պոլսի բարբառում առկա բառամթերքից, որը նկատել են լեզվաբանները: Արևմտահայերենում պատճենումը հիմնականում գործածվում է հունարեն կան լատիներեն վերջածանցներով ու նախածանցներով կազմված տերմինների դեպքում, ընդ որում՝ ֆրանսերենի միջնորդությամբ: Իսկ, ընդհանրապես, օտար լեզվից պատճենումը գերակշռում է հիմնականում արևելահայ բժշկագիտական տերմինաբանության մեջ, որում այլ լեզուներից, մասնավորապես հունարեն-լատիներենից ու անգլերենից պատճենումները կարելի է ասել տերմինաստեղծման հիմնական եղանակներն են:

Եզրակացություններ

1. Ամփոփելով՝ հարկ է փաստել, որ 20-րդ դարասկզբին արդեն արևմտահայ իրականության մեջ ձևավորվել էին բժշկագիտության ոլորտի տերմինաշինության հիմնական սկզբունքները՝ ներքին միջոցներով տերմինների ստեղծում, լատիներեն տերմինների պատճենում հայերենի բառակազմության օրինաչափությունների պահպանումով և հայերեն բառամիավորների օգտագործմամբ: Ընդհանուր առմամբ ակնհայտ է, որ հայերենի երկու ճյուղերում տերմինաշինության գործընթացները զուգահեռ բնույթ ունեն, հաճախ առկա են նույնական տերմիններ, այլ դեպքերում զանազանությունները պայմանավորված են լեզվամտածողության, բառագործածության տարբերություններով: Պետք է նկատի ունենալ, որ լեզվի միասնականությունը դրսևորվում է նաև բժշկական տերմինաբանության ոլորտում, և այդ միասնականությունը թույլ է տալիս նաև տերմինների փոխանցում մի տարբերակից մյուսը:

2. Հիմնական եզրակացությունն այն է, որ հայերենը իր երկու ճյուղերով թե՛ նախկինում, թե՛ ներկայում եղել և մնում է գիտության լեզու, ունի բառակազմական, տերմինակազմական ճկուն

համակարգ և լիովին ի գործու է նպաստելու գիտական մտքի զարգացմանը և արտահայտելու գիտության նորագույն նվաճումները:

Օգտագործված գրականություն

Աճառյան Հ. Հայերեն արմատական բառարան, հ. Ա-Դ, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1971, 1973, 1977, 1979:

Ավետիսյան Ա., Լատիներեն-անգլերեն-հայերեն բժշկական բառարան, Ե., 2007:

Կատվալյան Վ., Նախաբան //Արևմտահայերենի և արևելահայերենի տերմինային համակարգերի զուգադրական քննություն, ՀՀ Սփյուռքի նախարարություն, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Ե., 2014:

Հայոց լեզու, Ուսումնական ձեռնարկ, ԵՊԲՀ, Ե., 2009:

Հովհաննիսյան Ն., Արևմտահայերենի և արևելահայերենի բժշկական և քաղաքական տերմինների զուգադրական քննություն //Արևմտահայերենի և արևելահայերենի տերմինային համակարգերի զուգադրական քննություն, ՀՀ Սփյուռքի նախարարություն, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Ե., 2014:

Սարգսյան Ա., Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Ե., 1985:

Սաքապետոյան Ռ, Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները, Ե., 2004:

<https://azg.am/culture/>

Gariabyan Alina-Western Armenian Medical Therms in the "Dictionary of Disease Names" by Nazareth Taghavarian.- Western Armenian medical terms are of great interest today from both a medical and linguistic point of view. From a linguistic point of view, the issues of rapprochement, mutual enrichment and interpenetration of the two linguistic states of the

Armenian language – Western Armenian and Eastern Armenian – are very relevant. In this context, terms, especially medical ones, can also play an important role in bringing these two linguistic states closer together. The purpose of this work is to examine a rather rich layer of medical terms – Western Armenian medical terms, the history of the replenishment and enrichment of which is little studied and is of great scientific interest. This work by N. Taghavarian, published in 1901, is if not the first, then one of the first, where the author presents Western Armenian medical terms, relying on internationally recognized Greco-Latin medical terms translated from French. In subsequent periods, the work on terminology creation continues, as a result of which in both branches we have a rather rich terminology, which is of great scientific interest and the parallel study of which has become the subject of linguistic research. In this regard, we consider it necessary to conduct a parallel study of the terms in this work, to identify the similarities and differences of the terms existing in two linguistic states, according to word-formation, semantic and functional features, remaining only within the framework of the terms included in the "Dictionary". At the same time, striving to reveal the possibilities of promoting the development and mutual enrichment of professional vocabulary, to give an idea of the history of the development of the Western Armenian terminological layer.

Keywords: dictionary, terms, medical, Western Armenian, Eastern Armenian, term series, borrowings, comparative analysis.

Gharibyan Alina, Lecturer, Department of Armenian Language, Yerevan State Medical University.

Гарибян Алина -Западноармянские медицинские термины в "Словаре имен заболеваний" Назарета Тагаваряна.- Западно-армянские медицинские термины представляют сегодня большой интерес как с медицинской, так и с лингвистической точки зрения. С лингвистической точки зрения весьма актуальны вопросы взаимооб-

огащения и взаимопроникновения двух ветвей армянского языка-западноармянского и восточноармянского. В этом контексте термины, особенно медицинские, также могут играть важную роль в сближении двух ветвей. Целью данной работы является рассмотрение довольно богатого пласта медицинских терминов- западноармянских медицинских терминов, история пополнения и обогащения которых мало изучена и представляет большой научный интерес. Данная работа Н. Тагаваряна, опубликованная в 1901 году, является если не первой, то одной из первых, где автор представляет западноармянские медицинские термины, опираясь на международно признанные греко-латинские медицинские термины, переведенные с французского языка. В последующие годы работы по терминотворчеству продолжаются, в результате чего в обеих ветвях мы имеем довольно богатую терминологию, представляющую большой научный интерес и параллельное изучение которой стало предметом лингвистических исследований. В связи с этим мы считаем необходимым провести параллельное изучение терминов в данной работе, выявить сходства и различия терминов, существующих в двух ветвях, по словообразовательным, семантическим и функциональным признакам, оставаясь лишь в рамках терминов, включённых в "Словарь". Одновременно, стремясь раскрыть возможности содействия развитию и взаимообогащению профессионального словарного запаса, дать представление об истории развития западноармянского терминологического пласта.

Ключевые слова: словарь, термины, медицинские, западноармянский, восточноармянский, терминоряды, заимствования, сопоставительный анализ.

Гарибян Алина, Преподаватель кафедры армянского языка Ереванского государственного медицинского университета.

**ԷՂՎԱՐԴ ԳՈՎԱՆԻ ՀԱՅԵՐԵՆ-ԹՈՒՐՔԵՐԵՆ ԵՎ
ԹՈՒՐՔԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐԸ***

DOI: 10.54503/2738-277X.2025.1(22)-65

Մանվելյան Սերգեյ

պատմական գիտությունների թեկնածու,

Ռուս-հայկական համալսարան,

Արևելագիտության ինստիտուտի դասախոս.

sergeymanvelyaneph@gmail.com

Բանալի բառեր. հայատառ թուրքերեն բառարան, լատինատառ թուրքերեն-հայերեն բառարան, արևմտահայերեն, արևելահայերեն, լատինատառ արևմտահայերեն, բառարանագիր Էդվարդ Գովան, թուրքական լեզվաքաղաքականություն:

Նախաբան

Օսմանյան կայսրության կողմից ոչ մուսուլման բնակչության հանդեպ իրականացված բռնի իսլամացման և թուրքացման քաղաքականության կարևոր մաս է կազմել լեզվական ուժացումը, որի հետևանքով, մասնավորապես, կայսրության մի շարք գավառներում (Կեսարիա, Սեբաստիա, Ադանա, Այնթապ, Եդեսիա և այլն) բնակվող հայերը զրկված էին մայրենի լեզվով հաղորդակցվելու տարրական իրավունքից: Օսմանյան իշխանությունների այս հետևողական քաղաքականությունը շարունակվել է նաև հանրապետական Թուրքիայի շրջանում:

Ազգային ինքնության պահպանման նպատակով ծնունդ առած հայատառ թուրքերեն գրականությունը թուրքախոս արևմը-

* Ներկայացվել է 26.06.2025, գրախոսվել՝ 07.07.2025:

տահայության միակ ապավենն էր դարձել: 14-20-րդ դարերում գրվել և տպագրվել են հայատառ թուրքերեն աստվածաբանական գրքեր, ավետարաններ, տաղարաններ, բժշկարաններ, գեղարվեստական և թարգմանական գրքեր, ինչպես նաև հայ բառարանագրության պատմության անքակտելի մասը կազմող հայերեն-թուրքերեն և թուրքերեն-հայերեն բառարաններ:

Ըստ պոլսահայ հետազոտող Գևորգ Փամուքյանի՝ 16-րդ դարից հայտնի են հայատառ թուրքերեն ձեռագիր բառարանների ամենահին նմուշները: Կան նաև ձեռագիր բնագրերին կցված բառարաններ կամ մի քանի էջից բաղկացած բառացանկեր, որոնք հիմնականում ծառայել են տվյալ բնագրին²:

Հայատառ թուրքերեն գրականության ականավոր ուսումնասիրող Հասմիկ Ստեփանյանի հավաստմամբ՝ հայատառ թուրքերեն բառարաններն ավելի քան 50-ն են: Կոստանդնուպոլսում, Վենետիկում, Վիեննայում և այլուր տպագրված բառարանները ոչ միայն առանձնանում են իրենց կիրառական և գիտական նշանակությամբ, գրահրատարակչական բարձր որակով, այլև չեն կորցնում իրենց հետաքրքրությունը նաև մեր օրերում:

Հատկանշական է այն հանգամանքը, որ օսմանյան շրջանում լույս տեսնող երկլեզու կամ բազմալեզու բառարանների հայերեն բաժինը գրված է եղել արևմտահայերեն, իսկ թուրքերենը (իմա՝ օսմաներենը)՝ արաբատառ կամ հայատառ (արևմտահայերենի

1 **K. Pamukciyan**, *Ermeni Harfli Türkçe Metinler*, Ermeni Kaynaklarından Tarihe Katkılar - C. II, İstanbul, 2002, s. 132. Տե՛ս նաև **Ա. Ժ. Ավետիսյան**, *Մատենադարանի այլալեզու ձեռագիր բառարանները: Պարսկերեն-օսմաներեն, արաբերեն-օսմաներեն, չաղաթայերեն-օսմաներեն, արաբերեն-պարսկերեն-օսմաներեն, հայատառ թուրքերեն-պարսկերեն, հայատառ թուրքերեն-արաբերեն: Ուսումնասիրություն և նկարագրություն*, Գիրք Ա., Ե., 2024:

2 **Հ. Ստեփանյան**, *Հայատառ թուրքերեն ձեռագիր բառարաններ*, Պատմաբանասիրական հանդես, N 2, Ե., 2005, էջ 253:

3 **Հ. Ստեփանյան**, *Հայատառ թուրքերեն գրականությունը*, Ե., 2023, էջ 118:

նուդագրական և հնչյունական կանոնների համաձայն): Ըստ Հ. Ստեփանյանի կազմած մատենագիտության՝ հայատառ թուրքերեն-հայերեն (արևմտահայերեն՝ Ս.Մ.) վերջին բառարանը լույս է տեսել 1919 թ. Նյու Յորքում:

Հայոց ցեղասպանության հետևանքով հայրենագրկված և մարդկային, հոգևոր-մշակութային, լեզվական, նյութական ահռելի վնասներ կրելուց զատ, հայատառ թուրքերեն գրականությունն աստիճանաբար կորցրեց իր գործնական նշանակությունը: Քեմալ Աթաթյուրքի պատվերով և պոլսահայ լեզվաբան Հակոբ Մարթայանի (Դիլաչար) գործուն ջանքերով 1928 թ. թուրքերենն արաբատառ գրից դարձավ լատինատառ: Այդ շրջանից սկսած մինչև մեր օրերը լույս են տեսել լատինատառ թուրքերեն-արևմտահայերեն ընդամենը երկու բառարան: Առաջինը հեղինակել է Ստամբուլի Բանկալթըի Վիեննական Մխիթարյան վարժարանի ուսուցիչ, Մխիթարյան միաբան Հայր Արիստակես վարդապետ Բոհձալյանը⁴, երկրորդը՝ պոլսահայ տնտեսագետ Էդվարդ Գովանը⁵: Վեր-

⁴ **Ա. ՅԲ. Շադուպեան**, *Հայատառ թրքերեն-հայերեն բառարան*, Նիւ Եորք, 1919 (տե՛ս **Ա. Ստեփանեան**, *Հայատառ թուրքերեն գրքերի և հայատառ թուրքերեն պարբերական մամուլի մատենագիտություն (1727-1968)*, Ստամբուլ, 2005, էջ 341-342 / **H. A. Stepanyan**, *Ermeni harfli Türkçe kitapları ve süreli yayınlar bibliyografyası (1727-1968)*, İstanbul, 2005, s. 341-342 / **H. A. Stepanian**, *Bibliographie des livres et de la presse Armeno-Turque (1727-1968)*, Istanbul, 2005, p. 341-342): Հեղինակն իր «Երկու խօսք»-ում նշում է, որ պատրաստել է նաև «հայերեն-թրքերեն» բառարան, «գոր լոյս կ'ընծայեմ յարմար ատենը» (տե՛ս **Ա. ՅԲ. Շադուպեան**, նշ. աշխ., էջ 4): Ցավոք, հիշյալ բառարանը մնացել է անտիպ:

⁵ **Ա. Պոհձալեան վրդ.**, *Թրքերեն-հայերեն առձեռն բառարան*, Իսթանպուլ, 1981, 535 էջ / **[Rahip] A. Bohçalıyan**, *Türkçe-Ermenice sözlük*, İstanbul, 1981, 535 sf.: Սույն բառարանը նույնությամբ վերահրատարակվել է 1996 թ.:

⁶ **Ե. Գովան**, *Թրքերեն-հայերեն ասութիւններու այժմեական բառարան* [30.600 բառ], Իսթանպուլ, 2016, 888 էջ / **Y. Kovan**, *Deyimlerle Türkçeden Ermeniceye güncel sözlük* [30.600 kelime], İstanbul, 2016, 888 s. Այսուհետև՝ **Ե. Գովան**, *Թրքերեն-հայերեն ասութիւններու.....*:

ջինս կազմել է նաև առաջին արևմտահայերեն-լատինատառ թուրքերեն բառարանը⁷։ Լույս է տեսել նաև թեմատիկ ընդգրկմամբ (բայեր, ընտանիքի անդամներ, մարմնի մասեր, կենդանիներ, բույսեր և այլն) արևմտահայերեն-թուրքերեն և թուրքերեն-արևմտահայերեն համառոտ բառարան⁸։

Ինչ վերաբերում է արևելահայերեն-լատինատառ թուրքերեն և լատինատառ թուրքերեն-արևելահայերեն երկկեզու բառարանների ստեղծմանը, ապա դրանք գրվել են միայն Հայաստանի երրորդ Հանրապետության շրջանում⁹։

Թուրք բառարանագրության ասպարեզում ևս թեմայի առնչությամբ լույս են տեսել արևելահայերեն-լատինատառ թուրքերեն¹⁰ և արևմտահայերեն-արևելահայերեն-լատինատառ թուր-

⁷ **Y. Kovan**, *Türk alfabesine göre sıralı Ermeniceden Türkçeye güncel sözlük*, İstanbul, 2021, 712 sf. / **Ե. Գովան**, *Թրքերեն այբբենական կարգով դասավորված հայերեն-թրքերեն այժմեական բառարան*, Իսթանպուլ, 2021, 712 էջ։ Այսուհետև՝ **Ե. Գովան**, *Հայերեն-թրքերեն...*։

⁸ **Ի. Բ. Պոյաճեան (Կեօթոլլու)**, *Համառոտ բառարան*, Իսթանպուլ, 2023, 128 էջ։ Սույն բառարանը լրամշակված տարբերակով վերահրատարակվել է 2025 թվականին (133 էջ)։

⁹ **Կ. Կոնտակյան (Ք. Գունդակյան)**, *Թուրքերեն-հայերեն բառարան (20.026 բառ)*, Ե., 2003, 368 էջ / **K. Kondakçyan (K. Kundakçyan)**, *Türkçe-Ermenice sözlük (20.026 kelime)*, Erivan, 2003, 368 sf. (այս բառարանն արժանացել է դրական կարծիքի ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն (1962-2005), ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանի կողմից (տե՛ս Նույն տեղում, էջ 5)։ **Ռ. Ղազարյան**, *Թուրքերեն-հայերեն բառարան (շուրջ 27.000 բառ և բառակապակցություն)*, Ե., 2003, 576 էջ։ **Ք. Գունդակյան (Կ. Կոնտակյան)**, *Հայերեն-թուրքերեն համառոտ բառարան*, Ե., 2011, 160 էջ / **K. Gundakçyan (K. Gondakçyan)**, *Ermenice-Türkçe küçük sözlük*, Erivan, 2011, 160 sf.; **Մ. Դեբնենջյան**, *Հայերեն-թուրքերեն բառարան (60.000 բառ)*, Ե., 2013, 400 էջ։ **Գ. Հովհաննիսյան, Հ. Շրանոսյան**, *Աշխարհագրական-երկրագրական եզրույթների և հասկացությունների հայերեն-թուրքերեն, թուրքերեն-հայերեն բառարան (1500 եզրույթ և հասկացություն)*, Ե., 2021, 138 էջ։

¹⁰ **B. Karaca**, *Doğu Ermenice-Türkçe sözlük*, Ankara, 2001, 164 sf. Սույն բառարանը վերահրատարակվել է՝ **B. Karaca**, *Doğu Ermenice-Türkçe sözlük*, Ankara, 2007, 371 sf.

քերեն¹¹ երկու հրատարակություն:

Էդվարդ Գովանի կյանքը և բառարանագրական գործունեությունը

Մեքաստիայից և Պոլսից անվանի տնտեսագետ, բառարանագիր **Էդվարդ Գովան-Մոսիկյանը**¹² (թուրք.՝ Yetvart Kovan [Եդվարթ Քովան], արևմտ.՝ Եդուարդ Գովան) ծնվել է 1927 թ. մայիսի 12-ին, Կ. Պոլսում: Միջնակարգ կրթությունը ստացել է Բանկալթըի Վիեննական Մխիթարյան վարժարանում: 1951 թ. ավարտել է Ստամբուլի համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը: 1955-1995 թթ. հիմնել և ղեկավարել է «Գովան» հաշվապահական գրասենյակը: Ստամբուլի Վիեննական Մխիթարյան (1961-1981) և Կեդրոնական (1964-1971) վարժարաններում դասավանդել է հաշվապահություն: 1964-1982 թթ. համայնքային մի շարք կառավարման խորհուրդներում զբաղեցրել է պատասխանատու պաշտոններ (Սուրբ Փրկիչ ազգային հիվանդանոցի և Թրքահայ ուսուցչաց հիմնարկի վարչությունների և Բեյոզլուի Ս. Երրորդություն եկեղեցու թաղային խորհրդի անդամ): 1970-2010 թթ. եղել է Ստամբուլի հայոց պատրիարքության Խորհրդակցական մարմնի անդամ և ֆինանսական հանձնաժողովի ատենապետ: Նրան անվանում էին «Քովան հոջա» (հայ.՝ «ուսուցիչ Գովան» կամ «վարպետ Գովան»): Է.

¹¹ **İ. Çağlar**, *Ermenice-Türkçe sözlük (22.000 civarında Ermenice kelime)*, Ankara, 2016, 551 sf. / **Ի. Չաղլար**, *Հայերեն/հայերեն-թիւրքերեն/թյուրքերեն բառարան (շուրջ 22.000 հայերեն բառ)*, Անկարա, 2016, 551 էջ:

¹² Ս. թ. հունիսի 8-ին է. Գովանի միակ զավակի՝ Կ. Պոլսի Գարաջոզյան ազգային որբանոցի վարչության փոխատենապետ, ատամնաբույժ Գարուն Գովանի և նրա տիկնոջ՝ կրթության փորձագետ Մելինե Բյույուքզաֆերյան-Գովանի հետ Երևանում մեր հանդիպման ընթացքում, հարցմանս ի պատասխան, նշվեց, որ 1934 թ. հունիսի 21-ին «Ազգանվան օրենք»-ն ընդունելուց հետո իրենց «Մոսիկյան» տոհմական ազգանունը դարձել է «Գովան» (հայ.՝ գովան, գովելի):

Գովանը վախճանվել է 2021 թ. հունիսի 29-ին, Ստամբուլում: Համայնքային շրջանակներում նրա ունեցած ակնառու ծառայությունները նկատի ունենալով՝ Կ. Պոլսի հայոց պատրիարք Ն.Ա.Տ. Սահակ Բ. արքեպիսկոպոս Մաշալյանի տնօրինությամբ կազմակերպվել է պատվո հուղարկավորություն Գումգափուի Սուրբ Աստվածածին մայր եկեղեցում: Նրա մարմինն ամփոփված է Բալըքլի հայոց գերեզմանատանը:

1950-ական թվականներից սկսած տնտեսագիտական բնույթի հոդվածներով թղթակցել է թուրքական «Akşam» («Երեկո»), «Cumhuriyet» («Հանրապետություն»), «Yeni Gazete» («Նոր Թերթ») պարբերաթերթերին, ինչպես նաև հայկական «Ժամանակ» և «Մարմարա» օրաթերթերին¹³: Այդ շրջանում Է. Գովանը դժվարություններ է ունեցել իր հոդվածներում առկա թուրքերեն որոշ մասնագիտական եզրույթների հայերեն համարժեքները գտնելու առնչությամբ: Հին բառարանները ուսումնասիրելով և հայկական ու թուրքական լրագրերի օրվա լուրերի բառապաշարն իրար հետ համեմատելով՝ նա ընդլայնում է այդ բառացանկը, համապատասխանեցնում բառարանագրական պահանջներին և 1996 թ. հրատարակում առևտրա-տնտեսագիտական եզրույթների երկլեզվյան բառարանը¹⁴: Հետաքրքրական է նաև բառարանի վերջում ներառված «Ticaret Hayatından Seçilmiş Atasözleri / Առևտրական կեանքի ընտրուած առածներ» հավելվածը¹⁵: Օրինակ՝

¹³ Է. Գովանը հեղինակ է նաև մասնագիտական և հուշագրական գրքերի՝ **Y. Kovan, Muhasebenin basitleştirilmiş temel kuralları**, İstanbul, 2009; **Y. Kovan, Bir muhasebecinin 50 yıllık meslek anıları**, İstanbul, 2007.

¹⁴ **Y. Kovan, Türkçeden-Ermeniceye Ticari-Mali-Ekonomik Terimler Sözlüğü**, İstanbul, 1996, 312 sf. / **Է. Գովան, Թրքերէնէ-հայերէն Առևտրական-Ելմտական-Տնտեսագիտական Աստիճաններու Բառարան**, Իսթանպուլ, 1996, 312 էջ: Այսուհետև՝ **Է. Գովան, Թրքերէնէ-հայերէն առևտրական....**:

¹⁵ **Է. Գովան, Թրքերէնէ-հայերէն առևտրական....**, էջ 296-299:

ա. ALTIN YERE DÜŞMEKLE PUL OLMAZ - *գետինն ինկած ոսկին արժեքը չի կորսնցնեք* - Kedin ingadz vosgin arjekı çı gorsıntsineri¹⁶,

բ. DENİZDEKİ BALIĞIN PAZARLIĞI OLMAZ - *ծովէն չէլած ձուկին վրայ սակարկութիւն չ'ըլլար* - Dzoven çeladz tsugin vira sagargutyun çillar¹⁷:

Է. Գովանը հետագա տարիներին զուգահեռաբար շարունակում է իր բառարանագրական աշխատանքները և 2016 թ. 89 տարեկանում ընթերցողի սեղանին դնում «Թրքերէնէ հայերէն ասութիւններու այժմեական բառարան»-ը, որն ընդգրկում է շուրջ 30.600 բառ: Ինչպես նշված է բառարանի առաջաբանում, նրա նպատակն է եղել պոլսահայության շրջանում առավել խթանել հայերենի ուսուցումը¹⁸:

Հեղինակը լատինատառ թուրքերեն հիմնաբառի կողքին հիմնականում նշել է հայատառ արևմտահայերեն թարգմանությունը և լատինատառ արևմտահայերեն արտասանությունը: Սակայն որոշ հիմնաբառերի կողքին փակագծերի մեջ տրված են թուրքերեն այլ հոմանիշ բառեր: Մի շարք հիմնաբառերի կողքին կամ թուրքերեն հոմանիշ(ներ)ից հետո փակագծերի մեջ շեղագիր տառատեսակով տրված է նաև մեծ մասամբ անգլերեն (նաև այլ լեզվով) թարգմանությունը: Արևմտահայերեն թարգմանությունը երբեմն ներկայացվում է մեկից ավելի հոմանիշներով: Ամեն մի բառահոդվածի վերջում, ինչպես նախորդ բառարանում, տրվում է նաև հիմնաբառի լատինատառ արևմտահայերեն արտասանությունը: Ընդ որում՝ լատինատառ դարձնելիս թուրքերենի այբուբենում բացակա որոշ հայերեն տառեր ընդգծվում են՝ խ - kh; ծ - dz; ձ,

¹⁶ Ե. Գովան, *Թրքերէնէ-հայերէն առեստրական....*, էջ 297:

¹⁷ Ե. Գովան, նշ. աշխ., էջ 298:

¹⁸ Ե. Գովան, *Թրքերէնէ հայերէն ասութիւններու....*, էջ 5:

ց - ts: Իսկ պարզաձանցավոր, բարդ կամ բարդաձանցավոր բառերը «դյուրընթեռնելիության նպատակով» որոշարկվում են ապաթարցով, սակայն այդ սկզբունքը հավասարապես կիրառված չէ:

Օրինակ՝

Adına (Birini temsilen = *On bihalf of*) Վասն - Յանուն - Ի դիմաց / Vasin - Hanun - İ timats¹⁹,

Öz geçmiş (Yaşam öyküsü = *CV*) Կենսագրություն – Կենսագրական / Gensak’rut’yun – Gensak’ra’gan²⁰:

Բառարանում ներառված են նաև օսմաներեն արտահայտություններ, առած-ասացվածքներ, նշանավոր անձանց թևավոր խոսքեր, Ավետարանից մեջբերումներ, արվեստի և գրականության ստեղծագործությունների անվանումներ, կազմակերպությունների անվանումներ, որոնք տարորոշվում են շեղագիր տառատեսակով: Օրինակ՝

Tanrı sevgidir, sevgide yaşayan Tanrıda yaşar, ve Tanrı da onda yaşar (İncil) Աստուած սէր է, ով որ սիրոյ մէջ կ’ապրի Աստուծոյ մէջ է որ կ’[՝՝ Ս.Մ.]ապրի եւ Աստուած ալ անոր մէջ [Աւետարան՝ Ս.Մ.] / Asdvadz ser e, ov vor siro meç gabri, Asdudzo meç e vor gabri, yev Asdvadz al anor meç [Avedaran՝ Ս.Մ.]²¹,

Ermeni dünyasının zarif hanımları (Prensesler için söylenmiş) – Տիկնայք փափկացունք հայոց աշխարհին [(Արքայադուստրերուն համար ըսուած է)՝ Ս. Ս.] / Dig’nayk papga’sunk hayots aşkharh’in [(Arka’yatus’dirner’un hamar ısvadz e)՝ Ս. Ս.]²²,

Devlet benim! (= L’état c’est moi, 14.cü Louis) Ե՛ւ եւ տէրությունը [Լուի 14-րդ՝ Ս.Մ.] / Yes em derutyumı [Lui dasnı’çorrort՝ Ս.Մ.]²³:

¹⁹ Ե. Գովան, Թրքերէնէ հայերէն աստիճաններու..., էջ 17:

²⁰ Ե. Գովան, Թրքերէնէ հայերէն աստիճաններու..., էջ 605:

²¹ Ե. Գովան, Թրքերէնէ հայերէն աստիճաններու..., էջ 744:

²² Ե. Գովան, Թրքերէնէ հայերէն աստիճաններու..., էջ 223:

²³ Ե. Գովան, Թրքերէնէ հայերէն աստիճաններու..., էջ 176:

Գրեթե նույն բառարանագրական սկզբունքներն են կիրառվում 2021 թ. 94 տարեկանում Է. Գովանի հրատարակած «Հայերենէ թրքերէն այժմեական բառարան»-ում, որը, ինչպես վերը նշվեց, առաջին արևմտահայերեն-լատինատառ թուրքերեն բառարանն է: Սկզբում տրվում է հիմնաբառի լատինատառ արևմտահայերեն արտասանությունը, այնուհետև՝ բուն հիմնաբառը և լատինատառ թուրքերեն թարգմանությունը: Բառարանից հեշտությամբ օգտվել ցանկացող պոլսահայության համար բառարանը կազմվել է թուրքերենի այբբենական կարգով՝ հաշվի առնելով թե՛ հայերենի այբբենական կարգի վերջինիս ոչ կատարյալ իմացությունը, թե՛ արևմտահայերենի եռաստիճան բաղաձայնները լատինատառ դարձնելու ժամանակ ի հայտ եկող անհարմարությունները: Օրինակ՝ *Der'in mer Hisus Kris'dos Stêrն մեր Հիսուս Քրիստոս Efendimiz İsa peygamber*²⁴:

Է. Գովանն իր կազմած երեք բառարաններում (1981, 2016, 2021) լատինատառ արևմտահայերենի ներմուծումը, որը կարելի է հանդիպել նաև պոլսահայ տարաբնույթ հրատարակություններում, ընդհանուր առմամբ նպատակաուղղել է «*քիչ թէ շատ Հայերէն խօսելու կարող, բայց կարդալու մէջ դժուարացողներուն դիւրիւթիւն ընծայելու համար*»²⁵: Երբ Հայոց ցեղասպանությունից փրկված և Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և նախկին Օսմանյան կայսրության երբեմնի հայաշատ գավառներում տարբեր հանգամանքների բերումով մնացած հայության վերջին բեկորներն

²⁴ Ե. Գովան, *Թրքերէնէ հայերէն ասութիւններու...*, էջ 168:

²⁵ Ե. Գովան, *Հայերէնէ թրքերէն...*, էջ 4: Հատկանշական է, որ վերջին երկու բառարանները, որոնք հովանավորվել են Թրքահայ ուսուցչաց հիմնարկի վարչության ատենապետ Սարգիս Քյուլեգեչի և նրա տիկնոջ Մարիամ-Էմմա Քյուլեգեչ-Քարադեմիրի օժանդակությամբ, տարածվում են անվճար: Երկու բառարաններին անգամ թուրքերեն նշված է «Ücretsizdir, para ile satılmaz» (հայ.՝ «Անվճար է, գումարով չի վաճառվում»):

իրենց զավակներին հայեցի կրթություն ապահովելու և իրենց հայությունը վերջնականապես չկորցնելու նպատակով դեռ տասնամյակներ առաջ աստիճանաբար սկսեցին փոխադրվել մայրաքաղաք, Պոլսո հայոց պատրիարքությունը նրանց ազգային ակունքներին մոտեցնելու նպատակով ստիպված ձեռնամուխ եղավ լատինատառ հայերեն կրոնական գրականություն հրատարակելուն²⁶:

Վերջին շրջանում նույնպես Պոլսի հայկական եկեղեցիներում ժողովրդին հասկանալի դառնալու համար քարոզներն անգամ կատարվում են թուրքերեն, առօրյա խոսակցական լեզուն դարձել է թուրքերենը, հայատառ մամուլի և գրականության ընթերցողների թիվն անհամեմատ պակասել է, Պոլսի հայկական վարժարաններում ուսանող աշակերտության համար արևմտահայերենի քերականական և հնչյունաբանական կանոնները դժվարություններ են ստեղծում և այլն: Ըստ այդմ՝ Է. Գովանն առաջարկել է ժամանակավոր լուծում. «....շատեր չեն գիտեր հայերէն այբուբենն ու տառերու կարգը: Անոնք որոնք կը յիշեն, ուղղագրական տարբերակի առնչութեամբ դժուարութիւններ ունին. պիտի խորհին ԳԻՄ տառը բանան, թէ ո՛չ ՔԷ կամ ԿԷՆ: Մինչդեռ թրքերէն այբուբենը անգիր գիտենք ու վստահ ենք որ ուղղագրական միակ տարբերակ մը կայ»²⁷: Ազգային գիտակցություն արթնացնելու ուղղությամբ արմատական փոփոխությունների բացա-

²⁶ Օրինակ տե՛ս Թ. Անուշեան Օ. Վրդ., Վ. Մերովբեան Սրկ. եւ ուրիշներ, Պատարագամատոյց հանդերձ աշխարհաբարով, [լատինական՝ Մ.Մ.] տառադարձութեամբ եւ թրքերէնով [թարգմանութեամբ՝ Մ.Մ.], Ստամպուլ, 2014 / Başrahip T. Anuşyan, Diyakos V. Seropyan v.s., Surp Badarak (Kutsal Sunu) Modern Ermenicesi, [Latin harfleriyle – S.M.] okunuşu ve Türkçe çevirisi ile, İstanbul, 2014.

²⁷ Ն. Միսգմէ, Երուարդ Գովան պատրաստած է հայերէն-թրքերէն դասագրքի տեւորով բառարան մը, «Մարմարա», Իսթանպուլ, 22.02.2021, էջ 1: Տե՛ս նաև Ե. Գովան, Հայերէնէ թրքերէն..., էջ 5; Ե. Գովան, Թրքերէնէ-հայերէն առեւտրական..., էջ 5, 6; Ե. Գովան, Թրքերէնէ հայերէն ասութիւններու..., էջ 5:

կայության պայմաններում այն միայն ժամանակավորապես կարող է հետաձգել որևէ էթնիկ հանրույթի վերջնական ձուլման գործընթացը: Պոլսահայ հեղինակների, այդ թվում՝ Է. Գովանի՝ արևմտահայերենում լատինական գիր կիրառելը նույնպես պետք է դիտարկել որպես ժամանակավոր հանգրվան: Է. Գովանը նշում է. «.... վստահաբար պիտի գտնուին նաեւ անձեր, որոնց պիտի պնդեն թէ ասիկա դաւաճանութիւն է մայրենի լեզուին: Ճիշդ խօսինք, ներկայ պայմաններու տակ այսպիսի դիրքիւններու կարիք կայ, որպէսզի թրքահայեր չմոռնան իրենց մայրենի լեզուն»²⁸: Այս առումով Է. Գովանի բառարանները կարելի է համարել արդի պոլսահայ իրականության հայելին:

Եզրակացություն

Այսպիսով՝ առաջին անգամ ի մի է բերվում օսմանյան շրջանի հայ բառարանագրական ավանդույթների հիման վրա վերջին հարյուրամյակում ստեղծված լատինատառ թուրքերեն-հայերեն (արևմտահայերեն և արևելահայերեն) և հայերեն (արևմտահայերեն և արևելահայերեն)-լատինատառ թուրքերեն բառարանագրության պատմությունը: Այդ բառարանների շարքում Է. Գովանի լատինատառ թուրքերեն-հայատառ արևմտահայերեն-լատինատառ արևմտահայերեն առևտրա-տնտեսագիտական եզրույթների (1996), լատինատառ թուրքերեն-հայատառ արևմտահայերեն-լատինատառ արևմտահայերեն (2016) և լատինատառ արևմտահայերեն-հայատառ արևմտահայերեն-լատինատառ թուրքերեն (2021) բառարաններն ունեն իրենց ուրույն տեղը և աչքի են ընկնում բառապաշարի հարստությամբ, գիտահանրամատչելի լեզվով և պոլսահայության արդի խնդիրները բացահայտող անուղղակի անդ-

²⁸ Ն. Միզմե, նշվ. աշխ.:

րադարձումներով: Մասնավորապես՝ դրանցում մատնանշվում է ժամանակի պահանջով ներմուծված լատինատառ արևմտահայերենի հարցը, որը դիտարկվել է ոչ այնքան համաշխարհայնացման ընդհանուր գործընթացների հետևանքով տարբեր լեզուներ թափանցած լատինատառ գրույթի տարածման, որքան պետական քարոզչության հետևանքով թուրքերենի գերակայության հաշվին արևմտահայերենի լատինական, ավելի ճիշտ՝ թուրքական տառադարձման համատեքստում: Փաստորեն, հայատառ թուրքերեն գրականության ավելի քան 600-ամյա պատմությունից հետո անցյալ դարի վերջից սկսած ձևավորվում է լատինաթուրքական տառադարձմամբ արևմտահայերեն նոր գրականություն: Այն նաև ուղղորդում է հայաստանյան համալսարանական համապատասխան ամբիոններում ուսանող երիտասարդներին իրենց ուսումնառության ընթացքում օգտվելու այս արժեքավոր բառարաններից:

Օգտագործված գրականություն

Անուշեան Թ. Ծ. Վրդ., Սերովբեան Վ. Սրկ. եւ ուրիշներ, Պատարագամատոյց հանդերձ աշխարհաբարով, տառադարձութեամբ եւ թրքերէնով, Ստամպուլ, 2014 / Anuşyan T. Başrahip, Seropyan V. Diyakos v.s., Surp Badarak (Kutsal Sunu) Modern Ermenicesi, okunuşu ve Türkçe çevirisi ile, İstanbul, 2014.

Ավետիսյան Ա. Ժ., Մատենադարանի այլալեզու ձեռագիր բառարանները: Պարսկերեն-օսմաներեն, արաբերեն-օսմաներեն, չադաթայերեն-օսմաներեն, արաբերեն-պարսկերեն-օսմաներեն, հայատառ թուրքերեն-պարսկերեն, հայատառ թուրքերեն-արաբերեն: Ուսումնասիրություն և նկարագրություն, Գիրք Ա., Ե., 2024:

Գովան Ե., Թրքերենի հայերեն ասութիւններու այժմէական բառարան, Իսթանպուլ, 2016 / Kovan Y., Deyimlerle Türkçeden Ermeniceye güncel sözlük, İstanbul, 2016.

Գունդակչյան Ք. (Գոնտակչյան Կ.), Հայերեն-թուրքերեն համառոտ բառարան, Ե., 2011 / Gundakçyan K. (Gondakçyan K.), Ermenice-Türkçe küçük sözlük, Erivan, 2011.

Դերմենջյան Ս., Հայերեն-թուրքերեն բառարան, Ե., 2013:

Եաղուպեան Ա. ՅԲ., Հայատառ թրքերենի-հայերեն բառարան, Նիւ Եորք, 1919:

Կոնտակչյան Կ. (Գունդակչյան Ք.), Թուրքերեն-հայերեն բառարան, Ե., 2003 / Kondakçyan K. (Kundakçyan K.), Türkçe-Ermenice sözlük, Erivan, 2003.

Հովհաննիսյան Գ., Երանոսյան Հ., Աշխարհագրական-երկրագրական եզրույթների և հասկացությունների հայերեն-թուրքերեն, թուրքերեն-հայերեն բառարան, Ե., 2021:

Ղազարյան Ռ., Թուրքերեն-հայերեն բառարան, Ե., 2003:

Պօհճալեան Ա. վրդ., Թրքերենի-հայերեն առձեռն բառարան, Իսթանպուլ, 1981 / Bohçalyan A., Türkçe-Ermenice sözlük, İstanbul, 1981.

Պօյաճեան (Կեօքօղլու) ԻԻ., Համառոտ բառարան, Իսթանպուլ, 2023:

Պօյաճեան (Կեօքօղլու) ԻԻ., Համառոտ բառարան, Իսթանպուլ, 2025:

Սիւզմէ Ն., Եղուարդ Գովան պատրաստած է հայերեն-թրքերեն դասագրքի տեսքով բառարան մը, «Մարմարա», Իսթանպուլ, 22.02. 2021:

Ստեփանեան Յ. Ա., Հայատառ թուրքերեն գրքերի եւ հայատառ թուրքերեն պարբերական մամուլի մատենագիտութիւն (1727-1968), Ստամբուլ, 2005 / Stepanyan H. A., Ermeni harfli Türkçe kitapları ve süreli yayınlar bibliyografyası (1727-1968), İstanbul, 2005 / Stepanian

H. A., *Bibliographie des livres et de la presse Armeno-Turque (1727-1968)*, Istanbul, 2005.

Ստեփանյան Հ., Հայաստան թուրքերեն գրականությունը, Ե., 2023:

Ստեփանյան Հ., Հայաստան թուրքերեն ձեռագիր բառարաններ, Պատմաբանասիրական հանդես, N 2, Ե., 2005, էջ 250-254:

Çağlar İ., *Ermenice-Türkçe sözlük*, Ankara, 2016.

Karaca B., *Doğu Ermenice-Türkçe sözlük*, Ankara, 2001.

Karaca B., *Doğu Ermenice-Türkçe sözlük*, Ankara, 2007.

Kovan Y., *Bir muhasebecinin 50 yıllık meslek anıları*, İstanbul, 2007.

Kovan Y., *Muhasebenin basitleştirilmiş temel kuralları*, İstanbul, 2009.

Kovan Y., *Türk alfabesine göre sıralı Ermeniceden Türkçeye güncel sözlük*, İstanbul, 2021 / Գովան Ե., Թրքերեն այբբենական կարգով դասավորուած հայերենէ թրքերեն այժմէական բառարան, Իսթան-պուլ, 2021:

Kovan Y., *Türkçeden-Ermeniceye Ticari-Mali-Ekonomik Terimler Sözlüğü*, İstanbul, 1996 / Գովան Ե., Թրքերենէ-հայերէն Առեւտրական-Ելմտական-Տնտեսագիտական Աստիճիւններու Բառարան, Իսթան-պուլ, 1996:

Pamukciyan K., *Ermeni Harfli Türkçe Metinler, Ermeni Kaynaklarından Tarihe Katkılar - C. II*, İstanbul, 2002.

Manvelyan Sergey-Edward Govan's Armenian-Turkish and Turkish-Armenian dictionaries.- In this article for the first time is systematized the history of the Latin-script Turkish-Armenian (Western and Eastern Armenian) and Armenian (Western and Eastern Armenian)-Latin-script Turkish lexicography created over the past century based on the Armenian lexicographical traditions of the Ottoman period. Among these dictionaries, the works of Constantinopolitan Armenian economist, lexicographer and community figure Edward Govan (1927-2021) stand out: the Latin-script Turkish-Armenian-script Western Armenian-Latin-script Western Armenian dictionary of commerce and economic terms (1996), the Latin-script Turkish-Armenian-script Western Armenian-Latin-script Western

Armenian dictionary (2016) and the Latin-script Western Armenian–Armenian-script Western Armenian–Latin-script Turkish dictionary (2021). These dictionaries are distinguished by their rich vocabulary, accessible-scientific language and indirect references to contemporary issues of the Constantinople Armenian community. It should be noted that the introduction of the Latin-script Western Armenian determined by historical circumstances, is conditioned less to the global processes of Latinization of writing systems and more to the ramifications of state ideological policy. In this context the Latin-more precisely Turkish transliteration of the Western Armenian language has emerged against the backdrop of the hegemonic status of the Turkish language.

Keywords: Armenian-script Turkish dictionary, the Latin-script Turkish–Armenian dictionary, Western Armenian, Eastern Armenian, the Latin-script Western Armenian, lexicographer Edward Govan, Turkish Language Policy.

Manvelyan Sergey, PhD in History, Institute of Oriental Studies of Russian -Armenian University, lecturer.

Манвелян Сергей- Армяно-турецкий и турецко-армянский словари Эдварда Гована.- В работе впервые систематизируется история латинописьменных турецко-армянских (западноармянский и восточноармянский) и латинописьменных армяно-турецких (западноармянский и восточноармянский) словарей, созданных на протяжении последнего столетия, на основе армянских лексикографических традиций османского периода. Особое место в этом ряду занимают труды константинопольского армянского экономиста, лексикографа и общественного деятеля Эдварда Гована (1927-2021): словарь торгово-экономических терминов на латинописьменном турецком - армянописьменном западноармянском - латинописьменном западноармянском (1996), словарь на латинописьменном турецком - армянописьменном западно-

армянском - латинописьменном западноармянском (2016), а также словарь на латинописьменном западноармянском - армянописьменном западноармянском - латинописьменно турецком (2021). Указанные словари отличаются богатством словарного состава, доступным научно-популярным языком и косвенными отсылками к актуальным проблемам армянской общины Стамбула. В частности, отмечено в них по велению времени о внедрении латинописьменного западноармянского языка, обусловленного не столько глобальными процессами латинизации письменных систем, сколько как следствие государственной идеологической политики, в рамках которой латинская, а точнее – турецкая транслитерация западноармянского языка формируется на фоне доминирующего положения турецкого языка.

Ключевые слова: армянописьменный турецкий словарь, латинописьменный турецко-армянский словарь, западноармянский язык, восточноармянский язык, латинописьменный западноармянский язык, лексикограф Эдвард Гован, турецкая языковая политика.

Манвелян Сергей, кандидат исторических наук, Институт востоковедения Российско-Армянского Университета, лектор.

**ՊԱՐՄԿԵՐԵՆԻՑ ՓՈԽԱՌՅԱԼ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՃԱՀՈՒԿ-ՎԱՅՔԻ ՄԻՋԲԱՐԲԱՌՈՒՄ***

DOI: 10.54503/2738-277X.2025.1(22)-81

Վարդանյան Արտակ

բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
ավագ գիտաշխատող. artva@list.ru

Բանալի բառեր. հայերեն, պարսկերեն, միջին պարսկերեն, նոր պարսկերեն, Ճահուկ-Վայքի միջբարբառ, փոխառություն, բառակապակցություն:

Նախաբան

Հայտնի է, որ հայ-իրանական լեզվական առնչությունները սկիզբ են առել հազարամյակների խորքից՝ նախահայերենի, հին պարսկերենի և ավելի վաղ ժամանակաշրջաններից, երբ մեր լեզուներում շատ երևույթներ դեռևս նախնական վիճակում էին՝ սկզբնավորված հնդեվրոպական միասնության միևնույն իրողություններից: Պատահական չէ, որ հայերենի՝ հին փոխառությունների գերակշիռ մասը իրանական են:

Պատմական հանգամանքների բերումով հայերենը առավել սերտ շփումներ է ունեցել միջին պարսկերենի և նոր պարսկերենի հետ, և այդ շփումների արդյունքում հայերենում և նրա տարածքային տարբերակներում այսօր առկա են շուրջ հազար հինգ հար-

* Ներկայացվել է 30.06.2025, գրախոսվել՝ 29.07.2025:

1 Լ. Հովհաննիսյան, *Հայերենի իրանական փոխառությունները*, Ե., 1990, էջ 5-13:

յուր իրանական փոխառություններ, ինչպես նաև հայ-իրանական ոչ միայն բառապաշարային, այլև հնչյունական և ձևաբանական ընդհանրություններ:

Սակայն ծանոթանալով մեր բարբառների ուշ շրջանի իրանական փոխառություններին՝ առաջին իսկ հայացքից մի հետաքրքրական երևույթ է նկատվում այս դաշտում: Այն բարբառները, որոնք պատմականորեն գործածվել կամ ներկայումս գործածվում են Իրանի տարածքի խորքերում (Փերիա, Չահարմահալ, Նոր Ջուղա, Արաք և այլն) կամ Իրանի տարածքից դուրս (Կարին, Մուշ, Համշեն, Կիլիկիա և այլն), իրենց բառապաշարում չունեն նոր պարսկերեն փոխառությունների այնքան մեծ շերտ, որքան Իրանին մերձակա տարածքների բարբառները (Ագուլիս, Վան, Նախիջևան, Վայոց ձոր և այլն): Աշխարհագրորեն նման միջակա դիրք գրավող բարբառներից է Ճահուկ-Վայքի միջբարբառը, որի իրանական փոխառությունների մի հետաքրքիր շերտի ուսումնասիրությանն էլ վերաբերում է սույն հոդվածը:

Հոդվածի արդիականությունը պայմանավորվում է նրանով, որ վերհանվում է միջբարբառի՝ գրական հայերենի ազդեցությամբ այսօր արդեն գրեթե վերացող բառապաշարի շերտը: Նորույթը և նպատակը միջբարբառի չուսումնասիրված այս առանձնահատկությունները առաջին անգամ ներկայացնելն է: Հետազոտությունն իրականացվել է համաժամանակյա և տարաժամանակյա մեթոդներով:

Դիտարկումներ

Հայ-իրանական լեզվական սերտ առնչությունների օրինակ է Ճահուկ-Վայքի միջբարբառը, որի կիրառվելու տիրույթը պատ-

¹ Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 507:

մականորեն հյուսիսային Նախիջևանն ու Վայոց ձորն են եղել, և որտեղ առկա է պարսկերեն փոխառությունների մի հսկա շերտ՝ *üpprəznul* («մետաքս») ابریشم *abrišam* («մետաքս»)², *anqnu* («իղձ, կարոտ») آرزو *ārezu* («կարոտ, բաղձանք»)³, *axunihil* («խելքից հանել») افسون کردن *afsun kardan* («կախարդել»)⁴, *badenjan* («սմբուկ»), *püinqüin* («մեծ պարկ») باردان *bārdān* («հակ»), *püisatüq* («հավաքած անկողին») بستر *bastar* («անկողին», միջին պարսկերեն՝ *vistaraks*, բառի մեջ փաստորեն ավելի հարազատորեն պահպանվել է միջին պարսկերեն ձևը), *ptüinqü* («զգվելի») بی مزه *bimaze* («անհամ»), *ppqrniq* («երկարուկ») بزرگ *bozorg* («մեծ»), *q'ihl* («սպիտակ կավ») گل *gel* («կավ», միջին պարսկերեն՝ *gil*), *q'niünüh* («մեղք, հանցանք») گناه *gonah*, *qüinhriü* («միս կտրելու կացին») دهره *dahre* («այգեգործի կացին»), *qan* («կիրճ») دره *darre* («ձոր, կիրճ, հովիտ»), *q'ijān* («վնաս») زیان *zian* («վնաս»), *qniqwa* («զայլի, շան ոռնոց») زوزه *zuze* («կաղկանձ, ոռնոց»), *šawmāzaw* («1. հանդես, ներկայացում, 2. երկնածառ») تماشا *tamāšā* («ներկայացում»), *qrñğihl//dñğihl* («շղթա») زنجیر *zanjir* («շղթա»), *lppasut* («ընտիր հագուստ») لباس *lebas* («զգեստ»), *šonüq* («խորտիկ, ընտիր ուտեստ») خوراک *xorāk* («կերակուր»), *hüimüin* («նույն, միևնույն») همین *hamin*, همان *hamān* («նույն»), *hüimüzüü* («միշտ») همیشه *hamiše* («միշտ»), *hnulh* («նարինջ դեղձ») هلو *holu* («դեղձ»), *müq'üpr* («արդյոք, միթե»)

² *Персидско-русский словарь* (под редакцией Ю. Рубинчика), т. 1, М., 1970, с. 37.

³ Մանսուրեան Հ., *Պարսկերենից հայերեն բառարան*, Թեհրան, 2005, էջ 16:

⁴ Նալբանդյան Գ., *Պարսկերեն-հայերեն բառարան*, Ե., 1987, էջ 44:

⁵ م. معین، فرهنگ فارسی، جلد ۱، تهران، ۱۳۷۱، ص. ۵۳.

⁶ *Պահլավերեն-պարսկերեն-հայերեն-ռուսերեն-անգլերեն բառարան* (կազմեց Ռ. Արրահամյանը), Ե., 1965, էջ 113:

مگر *magar* («արդյոք, միթե»), *منگنه* *mangane* («մամլակ»), *مفرش* *mafraš* («անկողնակալ»), *مسمار* *mesmar* («մեծ մեխ»), *مس* *mes* («պղինձ»), *منادان* *nādān* («տգետ, տխմար»), *ناخوش* *nāxoš* («հիվանդ, տկար»), *نام* *nam* («թաց, խոնավ»), *ناچار* *nāčār* («անճար»), *شفتالو* *šaftālu* («կորիզից պոկվող դեղձ»), *شمشاد* *šemšād* («տոսախ»), *چینی* *čini* («հախճապակի»), *بادنجان* *bādenjān* («սմբուկ»), *سبیل* *sibil* («ընչացք, բեղ»), *روسپی* *ruspi* («պոռնիկ»), *پیاده* *piade* («հետիոտն»), *کاله* *kalāg* («ագոռավ»), *کهریا* *kahrobā* («սաթ») և այլն:

Հիմնականում կենցաղային իրերին, շրջապատող բնությանը, մարդկանց հուզական աշխարհին և այլնին առնչվող այս փոխառությունների կողքին միջբարբառում առկա են նաև պարսկերենից փոխառյալ շատ բառակապակցություններ, որոնց մեծ մասը ժամանակի ընթացքում ընկալվել է որպես առանձին բառ.

Ухреняла («լացուկոծ, աղաղակ»), պարսկերեն *آه و ناله* *āh o nāle* («ախ ու ճիչ»)

Բախտըթալահ («նախանձելի բախտ»), *بخت طلا* *baxt-e talā* («ոսկե բախտ»)

Բուռըբրյնդան («հաղթանդամ»), *برج بدن* *borj badan* («բրգաձև, աշտարակաձև մարմին»)

Գըլլսը («բալ»), گلاس انار gilās-e anār («նռան կեռաս, նոնակեռաս»)։ միջբարբառի Օծոփ գյուղի խոսվածքում առկա *գըննսը* հընչատարբերակը և հարևան Խոյի բարբառի *գիլանար* ձևը թույլ են տալիս ենթադրել, որ պարսկերենի որևէ բարբառում *բալ-ը* հավանաբար ընկալվել է որպես կեռասի տեսակ՝ «նռան կեռաս», և այդ ձևից էլ փոխառվել են հիշյալ բարբառային ձևերը՝ որոշակի հնչունափոխությամբ։ առաջին տարբերակում *ն*-ն առաջընթաց առնմանությամբ դարձել է *լ* (*գիլանար* > *գիլնար* > *գըլլսը*), իսկ երկրորդում՝ հակառակը՝ *լ*-ն է հետընթաց առնմանությամբ *ն* դարձել (*գիլանար* > *գիլնար* > *գըննսը*)։

Դսնդըբալա («փորձանք»), درد و بلا dard o balā («ցավ ու փորձանք»)

Դսնդըղիլ («սրտի ցավ»), درد دل dard-e del («սրտի ցավ»), միջին պարսկերեն՝ dard-i dil («սրտի, մտքի, հոգու ցավ»)»

Դսնդըվսրսւմ («անբուժելի ցավ»), درد و ورم dard o varam («ցավ ու ուռուցք»)

Դադըղիվան («դատաստան»), داد و دیوان dād o divān («դատ ու դատաստան»)

Զսնդսւվ («մուգ, կանաչավուն դեղին գույն»), زرد آب zard āb («դեղին ջուր»)

Զսնդսւմբու («նկուղ»), زیر زمین zire zamin («գետնի տակ»)

Թսնզըղըրուստ («կարգուկանոն»), تن درست tan dorost («առողջ մարմին»)

7 Ա. Վարդանյան, *Ճահուկ-Վայքի միջբարբառի բուսանունները*, Ե., 2022, էջ 28:

8 م. معین، فرهنگ فارسی، جلد ۲، تهران، ۱۳۷۱، ص. ۱۵۴۶.

Հարջըբըսն («լիրք, անզգամ»), *حرج بدن* *harj badan* («պիղծ մարմին»)։ հետաքրքիր է, որ այս բառը զարմանալիորեն հիշեցնում է Ֆիրդուսու «Շահնամե»-ի Սիավուշի մասին պատմող հատվածում հիշատակվող՝ Քեյ Քաուս արքայի կանանցի ներքինապետի անունը՝ *Հարջըրոդ* (ըստ Գևորգ Ասատրյանի արձակ թարգմանություն-վերապատումի (դեռևս անտիպ)։ վերջինս, ի դեպ, կարող է ընթերցվել նաև *Հարջըրադ* կամ *Հարջըրեդ* (քանի որ պարսկերենի *o*, *է* և քմային *aw* ձայնավորները չեն գրվում)։ Թեև *հարճ* բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել⁹, իսկ Գ. Ջահուկյանը համարել է «թերևս փոխառություն արևելակովկասյան աղբյուրից»¹⁰, այնուամենայնիվ ակնհայտ է, որ Ֆիրդուսու բնագրում *Հարջըրեդ* ոչ թե ներքինապետի անունն է, այլ հենց նրա պաշտոնը՝ *հարճպետ*, իսկ *harj*-ը ժամանակակից պարսկերենում ունի «պիղծ» իմաստը։ Նույնքան հավանական է նաև *հարճ*-ի կապը արդի պարսկերենում առավել կիրառական *هرزه* *harze* («անբարոյական») տարբերակի հետ։

Ղայջըսնբեյին («կաշաղակամիտ, անխելք»), *قچله بین* *qajale bin* («կաշաղակի տեսողություն, կաշաղակի բանականություն ունեցող»)։

Ղարմըղըսնգ («շատ գեղեցիկ»), *قرمز و قشنگ* *qermez o qasang* («կարմիր և սիրուն»)։

Ղաբըղաշըղ («ամանեղեն»), *قابلمه و قاشق* *qāblame o qāšoq* («կաթսա և գդալ»)։

Միրաբ («ջրբաշխ»), *میر آب* *mir ab* («ջրի պետ», հավանաբար փոխառված է քրդերենի միջոցով, քանի որ առկա է *b>v* անցում)

Նարմըննզուդ (1. «քնքուշ, նուրբ», 2. «վտիտ, թուլակազմ»), *نرم و نازک* *narm o nāzok* («փափուկ և քնքուշ»)։

⁹ Հ. Աճառեան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 3, Ե., 1926, էջ 60։

¹⁰ Գ. Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 452։

Նախշընիգ'սիր («արդուզարդ»), نقش و نگار naqş o negār («զարդ ու զարդարանք»)

Չսնչըվսի («ցանկապատի դռնակ»), چوب چہار čhār čub («դռան շրջանակ, բառացի՝ չորս փայտ»), հավանաբար կրկին փոխառվել է քրդերենի միջոցով, քանի որ առկա է b > v անցում)

Ջամբունդ ըլիլ («ազատվել»), جان بردن jān bordan («հոգին ազատել»)

Վայ նսչսիրի («առավելագույն»), وای ناچاری vāy nāčāri («վայ անճարին»)

Փըռսսնգ («օդում թափառող ձյան փաթիլներ»), پره سنگ pare sang («թռչող քար»)

Բսնֆլիիր («քափքաշ»), کف گیر kaf gir («քաֆ վերցնող»)

Ֆըլանք'սս («ոմն»), فلان کس felān kas («այսինչ մարդը»)

Ֆըռըշտսնֆսնիլ («ամենագետ, իմաստուն, պայծառատես»), فلک فرشته ferešte falak («ճակատագրի հրեշտակ») և այլն:

Մեկ այլ խումբ են պարսկերեն կապերով կամ շաղկապներով և հայերեն բառերով կազմված բառակապակցությունները. *բա* ب («հետ») կապով՝ *տէղ բա տէղ* («տեղն ու տեղը»), *էրէս բա էրէս*//*էրէսպաէրէս* («երես առ երես»), *տէր բա տէր*//*տէրբատէր* («տեր առ տեր»), *բէ* به («դեպի») կապով՝ *անըմ բէ անըմ*//*անըմբանըմ* («անուն առ անուն»):

Ի դեպ, առկա են նաև պարսկերեն նախածանցով կազմված ածանցավոր բառեր. օրինակ՝ بی bi («ան») նախածանցով՝ *բէշընօրք* («անշնորհք»)՝ *բիյաբուռ*, *բէնամուս*, *բէհսյս*, *բէմուրազ*, *բէքսրսի-քսիթ* և նման համաբանությամբ այլ բառեր:

Համադրական կազմությամբ որոշ բայեր բարբառում ստացել են հարադրական կազմություն՝ պարսկերենի համաբանությամբ.

օրինակ՝ *թէք ընգիլ* («պառկել») բայը պարսկերենի دراز کشیدن *derāz kešidan* («պառկել», բառացի՝ «երկար քաշել») բայի համաբանությունն է, *ջանգ անիլ* («կռվել, մաքառել») բայը՝ جنگ کردن *jang kardan* («կռիվ տալ, մաքառել») բայի և այլն: Իսկ *ջաղուքազ* բառը, որ պարսկերենում որպես առանձին բառ ավանդված չէ, ըստ երևույթին միջբարբառում կազմվել է պարսկերենի բառաբարդման կանոններով, թեև կարող է փոխառված լինել իրանական որևէ բարբառից:

Հետաքրքիր խումբ են պարսկերեն «ke» («թե, որ») շաղկապով կազմված բաղադրյալ շաղկապները.

հանլթթի *քի* («իհարկե»), պարսկ. البته *albate ke* («իհարկե որ»)

քյնշկանի («երանի») کاش *kāš ke* («երանի թե»)

հանլթթի («դեռևս») حالا *hālā ke* («հիմա որ, դեռ որ»)

բնլթթի («գուցե») بل *bal ke* («գուցե թե»)

գըլվնթթի («իբր թե») گویا *guyā ke* («ասես թե»)

յանիթթի («իբրև») یعنی *yani ke* («իբր թե»)

չունթթի («որովհետև») چون *čun ke* («քանի որ») և այլն:

Համադաս նախադասությունները և նախադասության համադաս անդամները միմյանց կապակցվում են հատկապես *յն* («կամ») یا *ya, jū...jū*, («կա՛ւ...կա՛ւ») یا ...یا *ya... ya, hūf...hūf* («և՛...և՛») هم...هم *ham... ham, nū...nū* («ո՛ւ...ո՛ւ») na... na պարսկերենից փոխառյալ շաղկապներով.

Նսն յէս էմ քընըմ ընդա տունը, նսն ինքն ա կալի մէր տունը:

Համ յէս իմ հէռսողէլ, համ ինքը:

Յն մէնձ տըղէն առղը կըվարի, յն պըջիրը:

Պարսկերենից փոխառյալ բառակապակցությունները երբեմբն առկա են նաև օրինանքներում, անեծքներում, ասացվածքներում¹¹. *Աստոճ ախըրըդ խէր անի* («Աստված վերջո բարի անի») خدا آخرت را خير کند (*Աստված վերջո բարի անի*), *Գյանդանըդ խուռը ըլի* («Վիզդ կոտրվի») گردنت خرد بشود (*Աստված վերջո բարի անի*), *Գյանդանըդ խուռը ըլի* («Վիզդ կոտրվի»), *Զանի կիներ գանդանըդ կըզիդան* («Ոսկու գինը ոսկերիչը կիմանա») قدر زر زرگر شناسد (*Ոսկու գինը ոսկերիչը կիմանա*):

Եզրակացություն

Այսպիսով՝ Ճահուկ-Վայքի միջբարբառը հայերենի բարբառային այն միավորներից է, որոնք թեև Իրանի բուն տարածքի նկատմամբ աշխարհագրորեն գրավել են միջակա դիրք, լեզվական շփումների արդյունքում տարբեր ժամանակաշրջաններում՝ հատկապես միջին և նոր պարսկերենից, փոխառել են ոչ միայն մեծ բառապաշարային շերտ, այլև բազմաթիվ բառակապակցություններ, որոնք հաճախ ընկալվում են որպես մեկ ամբողջական բառ:

Համակեցության պայմաններում պարսկերենի հետ շփումներն այնքան շոշափելի են եղել, որ միջբարբառը փոխառել է անգամ պարսկերեն կապերով և շաղկապներով բառակապակցություններ, ինչպես նաև պարսկերեն կաղապարներով բառաբարդումներ:

¹¹ Ա. Վարդանյան, *Ազնաբերդ. նախիջևանահայության վերջին ամրոցը*, Ե., 2000, էջ 34-35:

Օգտագործված գրականություն

- Աճառեան Հ., Հայերէն արմատական բառարան, հ. Գ, Ե., 1926:
- Հովհաննիսյան Լ., Հայերենի իրանական փոխառությունները, Ե., 1990:
- Մանսուրեան Հ., Պարսկերենից հայերէն բառարան, Թեհրան, 2005:
- Նալբանդյան Գ., Պարսկերեն-հայերեն բառարան, Ե., 1987:
- Պահլավերեն-պարսկերեն-հայերեն-ռուսերեն-անգլերեն բառարան (կազմեց Ռ. Աբրահամյանը), Ե., 1965:
- Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010:
- Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987:
- Վարդանյան Ա., Ազնաբերդ. նախիջևանահայության վերջին ամրոցը, Ե., 2000:
- Վարդանյան Ա., Ճահուկ-Վայքի միջբարբառի բուսանունները, Ե., 2022:
- Персидско-русский словарь (под редакцией Ю. Рубинчика), т. 1-2, М., 1970.
- م. معین، فرهنگ فارسی، جلد ۱، تهران، ۱۳۷۱.

Vardanyan Artak - Word Collocations Borrowed from Persian in the Jahuk-Vayk interdialect.- It is noticeable that those dialects of the Armenian language that were historically used or are currently used in the interior regions of Iran or beyond its borders do not have such a large layer of New Persian borrowings in their vocabulary as the dialects of the regions adjacent to Iran. One of the dialects that occupies such an intermediate geographical position is the Jahuk-Vayk interdialect, the study of the interesting layer of Iranian borrowings of which is the subject of this article. The Jahuk-Vayk interdialect, which historically functioned in the region adjacent to Persia (the Jawk province of Nakhichevan, the northern part of the Nakhijevan province and the province of Vayots Dzor),

borrowed from New Persian not only a significantly larger vocabulary, but also a large number of phrases that are often perceived as a single word. In conditions of coexistence, contacts with the Persian language were so noticeable that the interdialect even borrowed words with Persian connections and phraseological combinations with conjunctions, word compositions with Persian models.

Keywords: Armenian language, Persian language, Middle Persian, New Persian, Jahuk-Vayk interdialect, word collocation, borrowing.

Vardanyan Artak, PhD in Philology, senior Researcher, Institute of Language named after H. Acharyan of NAS RA.

Варданын Артак- Словосочетания, заимствованные из персидского языка в Джаук-Вайкском междialeкте.- Заметно, что те диалекты армянского языка, которые исторически были использованы или в настоящее время используются в глубинных областях Ирана или за его пределами, не имеют в своем словарном составе такого большого пласта новоперсидских заимствований, как диалекты прилегающих к Ирану областей. Одним из диалектов, занимающих такое промежуточное географическое положение, является Джаук-Вайкский междialeкт, изучению интересного пласта иранских заимствований которого и посвящена настоящая статья.

Джаук-Вайкский междialeкт, который исторически функционировал в прилегающей к Персии области (провинция Джаук Нахиджевана, северная часть провинции Нахчаван и провинция Вайоц Дзор), заимствовал из новоперсидского не только значительно большой словарный запас, но и большое количество словосочетаний, которые часто воспринимаются как одно целое слово. В условиях существования контакты с персидским языком были настолько осязательными, что междialeкт даже заимствовал сложные слова и фразеологические сочетания из персидского.

Ключевые слова: армянский язык, персидский язык, среднеперсидский, новоперсидский, Джаук-Вайкский междиалект, словосочетание, заимствование.

Варданян Артак, кандидат филологических наук, старший научный сотрудник, Институт языка имени Р. Ачаряна НАН РА.

**ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՅԵՐՈՒ ԽՆԴՐԱՌՈՒԹԵԱՆ
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԵՐԷՆԻ ՄԷՋ
(ԱՐԵՒԵԼԱՀԱՅԵՐԷՆ- ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆ)՝**

DOI: 10.54503/2738-277X.2025.1(22)-93

Ֆիշենկճեան Անի

պատմական գիտութիւններու թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառեանի անուան լեզուի ինստիտուտ,
գիտաշխատող. fishenkjianani@gmail.com

Բանալի բառեր. ներգործական բայաստեռ, ուղիղ խնդիր, ձեւա-
բանական եւ շարահիւսական առանձնայատկութիւն, արեւմտա-
հայերէն, արեւելահայերէն:

Նախաբան

Հայրենի լեզուաբաններու մեծ մասը կ'ընդունի բայի երեք
սեռ՝ ներգործական, կրաւորական եւ չէզոք (Գ. Սեւակ¹, Ա. Սարգ-
սեան², Ս. Աբրահամեան³, Մ. Ասատրեան⁴ եւ ուրիշներ), իսկ ո-
մանք ալ չորս՝ ներգործական, կրաւորական, պատճառական, չէ-
զոք (Ն. Պառնասեան⁵), ուրիշներ՝ երկու՝ ներգործական եւ կրաւո-
րական (Ռ. Իշխանեան⁶): Ոմանք ալ կ'ընդունին վեց՝ ներգործա-
կան, կրաւորական, պատճառական, չէզոք, անդրադարձ, փոխա-

* Ներկայացվել է 14.08.2025, գրախոսվել՝ 25.08.2025

¹ Գ. Սեւակ, *Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց*, Ե., 2009:

² Ա. Սարգսյան, *Արեւելահայ եւ արեւմտահայ գրական լեզուներ*, Ե., 1985, էջ 219-221:

³ Ս. Աբրահամյան, *Ժամանակակից հայերենի քերականություն*, Ե., 1975, էջ 134-135, 293-294:

⁴ Մ. Ասատրյան, *Բայի սեռերը ժամանակակից հայերենում*, Ե., 1959, էջ 232:

⁵ Ն. Պառնասյան, *Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում*, Ե., 1970:

⁶ Ռ. Իշխանյան, *Արդի հայերենի շարահյուսություն*, Ե., 1986, էջ 177-186:

դարձ: Ցատկանշական է, որ հայերենի բայաստեղը հայրենի բանասեր-լեզուաբաններու կողմէ քննուած է իբրեւ ձեւաբանական կարգ, ունի իր ձեւաբանական ցուցիչները՝ կրաւորականի՝ Վ եւ պատճառականի՝ ՅՆ ածանցները:

Սփիւռքի արեւմտահայերենի դասագիրքերու հեղինակները նոյնպէս տարակարծիք են այս առումով. անոնցմէ ոմանք կը նշեն եօթ տեսակ⁷, ուրիշը՝ հինգ⁸. վերջին ուսումնասիրութիւնները կ'ապացուցեն, որ բայաստեղը թիւով չորս է՝ ներգործական, կրաւորական, չէզոք եւ պատճառական⁹:

Յօդուածի նպատակն է ոչ թէ բայի սեռի տեսակի գննումը, այլ այդ տեսակներէն մէկուն՝ ներգործականի շարահիւսական առանձնայատկութիւններու հետազօտութիւնը, որ մինչ օրս ալ արեւմտահայերենի գիտական քերականութեան բացակայութեան պատճառով պատշաճ չէ ուսումնասիրուած, թէւ որոշ մէկնաբանութիւններ կը տեսնենք Ա. Եղիայեանի¹⁰, Կ. Առաքելեանի, Յ. Չոլաքեանի աշխատութեանց մէջ:

Ներգործական սեռի խնդիր¹¹ հայ քերականագիտութեան մէջ յաճախ կը կոչուի ուղիղ խնդիրը: Չոլաքեան ներգործականն ու

⁷ **Զ. Մելքոնեան**, *Գործնական քերականութիւն արդի հայերէն լեզուի*, Դ. տպագրութիւն, Պէյրութ, 1973, 91-94:

⁸ **Շ. Շահնուր**, *Համառօտ քերականութիւն եւ ուղղագրութիւն հայերէն լեզուի*, Բ. գիրք, Իսթանպուլ, 2001, էջ 68-70:

⁹ **Մ. Սկրտիչեան**, *Քերականութեան դասեր*, Բ. գիրք, *Հալէպ*, 1962, էջ 112- 117:

Կ. Առաքելեան, *Արդի հայերէն քերականութիւն*, Բ. գիրք, Պէյրութ, 1998, էջ 175:

Կ. Առաքելեան, **Ադ. Տըստըզճեան**, *Դիւրին հայերէն*, Բ. գիրք, Պէյրութ, 2008, էջ 165:

Յ. Չոլաքեան, *Անդաստան*, Գ. գիրք, *Հալէպ*, 2010, էջ 44:

¹⁰ **Ա. Եղիայեան**, *Արեւմտահայերէնի ուղղագրական, ուղղախօսական, ոճաբանական ուղեցոյց*, Պէյրութ-Լիբանան, 2022, 378-428:

¹¹ Սեռի խնդիր եզրոյթը արեւմտահայ քերականութեան մէջ տրուած է ներգործական եւ կրաւորական բայերու լրացումներուն, երբեմն՝ միայն ներգործական բայի խնդիրին: Վերջինը այժմ կը կոչուի ուղիղ խնդիր, ի հակադրութիւն անուղղակի խնդիրներուն (բնութեան խնդիր), որոնք կ'արտայայտուին թեք հոլովաձեւե-

չէզոքը, «որոնք չունին ձեւաբանական յատուկ ձեւոյթ»¹² բային կայուն ձեւերը կը համարէ¹³:

Ուղիղ խնդիրն ունի քերականական քանի մը յատկանիշեր, որոնցմէ միայն մեկուն կ'անդրադառնանք մեր յօդուածով, այն է՝ ուղիղ խնդիրը կը դառնայ ենթակայ, երբ խնդրառու բայը կը փոխարինենք կրաւորական սեռի, օրինակ՝ «Ուսուցիչը գնահատեց աշակերտը», «Աշակերտը գնահատուեցաւ ուսուցիչէն» եւ կամ «Գնահատուեցաւ ուսուցիչին կողմէ»:

Ժամանակակից հայերէնի (խօսքը արեւելահայերէնի մասին է) ներգործական բայերու շարահիւսական առանձնայատկութիւնը այն է, որ կը պահանջէ՝ սեռի ուղիղ խնդիր, անցողական բայեր են, որ կրնան ստանալ Վ ածանց եւ վերածուիլ անանցողականներու, որոշ բայեր կը ստանան նաեւ ՅՆ ածանցը՝ վերածուելով պատճառականներու¹⁴:

Չոլաքեան անցողական կը համարէ պատճառականները, Եղիայեան նոյնպէս կը գործածէ այս եզրոյթը՝ բնութագրելով, որ անցողական բայերը կազմուած կ'ըլլան «չէզոք կամ ներգործական բայէ մը եւ տալ բայէն. օրինակ՝ բերել տալ, երգել տալ, վազել տալ, քալել տալ»¹⁵:

Ներգործական բայերու ուղիղ խնդիրը արեւելահայերէնի մէջ կը դրուի ուղղականաձեւ հայցական եւ տրականաձեւ հայցական հոլովներով՝ պայմանաւորուած կառավարուող բառի ներխօսքի-

րով: 1980-ական թուականներէն ետք Արդի Արեւմտահայերէնի քերականութեան դասագիրքերուն մէջ ուղիղ խնդիր եզրոյթը ընդհանրացած է. տե՛ս **Յ. Չոլաքեան**, *Արեւմտահայերէնի քերականութիւն, (կանոնակարգ եւ խնդիրներ)* Բ. գիրք, Ե., 2019, էջ 20:

¹² Կարելի է ըսել նաեւ նշոյթ (արեւելահայերէն):

¹³ **Յ. Չոլաքեան**, նշ. աշխ., էջ 19:

¹⁴ **Հ. Հարությունյան**, *Կառավարումը ժամանակակից հայերէնում*, Ե., 1983, էջ 128:

¹⁵ **Ա. Եղիայեան**, նշ. աշխ., էջ 453:

մաստային իմաստով. անձի ուղիղ խնդիրը սովորաբար կը դրուի տրականով, իրի ուղիղ խնդիրը՝ ուղղականով. կը պատասխանէ իրի համար ի՞նչ, իսկ անձի համար ո՞ւմ հարցումներուն:

Արդի արեւմտահայերէնի ներգործական բայը եւս ունի շարահիւսական առանձնայատկութիւն. ա) կը պահանջէ սեռի ուղիղ խնդիր, բայց ե՛ւ իրի, ե՛ւ անձի համար հայցական հոլովով. ուրեմն ի տարբերութիւն արեւելահայերէնի՝ կը պատասխանէ իրի՝ *ի՞նչ*, անձի *զո՞ւլ* հարցումներուն:

բ) Կրնա ստանալ Վ (*ու*) ածանց եւ վերածուիլ անանցողականներու /կրաւորականի/, որոշ բայեր կը ստանան նաեւ ՅՆ ածանցը՝ վերածուելով պատճառականներու (անցողականներու):

Տեղին է յիշել, որ անձի եւ ոչ անձի քերականական կարգը նոյնպէս գոյութիւն ունի արեւմտահայ լեզուամտածողութեան մէջ, բայց չ'արտայայտուիր քերականօրէն: Խօսակցական արեւմտահայերէնը փաստօրէն կը պնդէ անձ ցոյց տուող սեռի խնդիրը արտայայտել տրական ձեւով, օրինակ՝ *Ես կը սիրեմ Մարալին* (*բանաւոր*): *Իսկ գրաւոր լեզուի մէջ «Ես կը սիրեմ Մարալը», «Կը կանչեմ գիտնականին», «Կը կանչեմ գիտնականը», «Կը յարգեմ դասախօսին- դասախօսը» եւ այլն:*

Քերականները մինչ օրս կը մերժեն ընդունիլ գայն՝ բանաւոր արտայայտութեան տարբերակը, հաւատարիմ մնալով գրաբարեան ժառանգութեան: Այս երեւոյթը Ա. Եղիայեան հետեւեալ ձեւով կը բնութագրէ. «Միակ արեւմտահայ քերականը, որ փորձեց վերջ տալ այդ արուեստական հակասութեան, եղաւ Լեւոն Շանթը, որ 1930-ականներուն Ճեմարանին յատուկ պատրաստած դասագիրքերուն մէջ ընդմիշտ ջնջեց հայցական հոլովը իր բոլոր մնացորդներով եւ կիրարկութիւններով: Շանթ կ'արտայայտուէր՝ ես

քեզի կը սիրեմ, դուն ինձի կը փնտռես եւ այլն»¹⁶: Եղիայեան կը շարունակէ. «Ճեմարանէն բացի եւ իր օրով ոչ մէկ ուրիշ դպրոց կիրարկեց անոր դասագիրքերը, իսկ մահէն ետք՝ Ճեմարանն ալ դադրեցաւ զայն կիրարկելէ»¹⁷:

Այսպիսով՝ արեւելահայերէնը մասամբ լուծելով ուղիղ խնդիրի հոլովառութիւնը համեմատաբար կը տարբերի արեւմտահայերէնի ներգործականի հոլովառութենէն կամ կառավարումէն:

Արեւմտահայերէնի մէջ, սակայն, միշտ չէ, որ ներգործական սեռի բայը իր լրացումը կը պահանջէ հայցական հոլովով:

Ուստի պէտք է դասդասել հետեւեալ խումբերու.

ա) Ներգործական բայեր, որոնք միշտ հայցական հոլով կ'առնեն: Այս բայերը կրաւորականի կը վերածուին՝ *ուիլ* մասնիկը ստանալով. Աշակերտը նամակ կը գրէ: Նամակը կը գրուի աշակերտին կողմէ: *Կանչել-կանչուիլ, պատժել-պատժուիլ, դիտել-դիտուիլ, դիմաւորել -դիմաւորուիլ, բաշխել-բաշխուիլ, գտնել-գտնուիլ, գոհել-գոհուիլ*, եւ յար ու նման հարիւրաւոր բայեր, որոնք *ուիլ* մասնիկ կը ստանան եւ սեռի՝ ուղիղ խնդիր կ'առնեն:

բ) Ներգործական բայեր, որոնք իրենց կրաւորականը կամ չէզոքը կը կազմեն՝ լծորդութիւնը փոխելով: Ասոնք ալ իբրեւ ներգործական բայեր մի՛շտ հայցական հոլովով սեռի խնդիր կ'առնեն. *փլել- փլիլ, եփել- եփիլ, մարել- մարիլ, ազատել-ազատիլ, վառել- վառիլ, ծռել- ծռիլ, այրել- այրիլ, թափել-թափիլ, ծակել-ծակիլ, բախել- բախիլ, շարժել- շարժիլ, արիւնել-արիւնիլ, ընկղմել- ընկղմիլ, հատնել- հատնիլ, մաշել- մաշիլ, մթազնել-մթազնիլ, շրջել - շրջիլ*, եւ այլն¹⁸:

¹⁶ Ա. Եղիայեան, նշ. աշխ., էջ 266:

¹⁷ Նոյն տեղում:

¹⁸ Ա. Եղիայեան, նշ. աշխ., էջ 461-462:

Այս բայերը արեւմտահայերենի մէջ երկսեռ բայեր կը կոչուին, այսինքն՝ պարզ *էլ* ձեւով ներգործական են եւ պարզ *իլ* ձեւով՝ կրաւորական:

զ) Բայեր, որոնք *իլ* վերջաւորութիւնը ունին եւ պատմականօրէն չէզոք սեռի բայեր եղած են, սակայն ներկայիս անոնցմէ մէկ քանին ուղիղ խնդիր կ'առնէ: Չոլաքեան եւս կ'անդրադառնայ այս երեւոյթին եւ երկար քննարկումներ կատարելէ ետք կ'եզրակացնէ, որ «...չէզոք բայերուն հետ աներեւոյթին հայցական հոլովով խնդրառութիւնը աւելի գործածական է քան տրական ձեւերը»¹⁹: Չոլաքեան այդ բայերէն կը յիշատակէ՝ *սկսիլ-կը սկսիմ պատասխանել, ձգտիլ-կը ձգտիմ իրականացնել, համարձակիլ-կը համարձակիմ պատմութիւն մը շարադրել, յանդգնիլ-յանդգնեցաւ յայտնուիլ այդ եռեակի կողքին, յօժարիլ- պիտի յօժարիմ ընդունիլ առաջարկը, վարանիլ-վճռական ըլլալ կը վարանիմ*²⁰ եւ այլն: Արմենակ Եղիայեան եւս կը խօսի այս ձեւի բայերու մասին եւ կը նշէ, որ - *համարձակիլ, յանդգնիլ, յօժարիլ*, պատմականօրէն չէզոք սեռի բայեր եղած են եւ տրական հոլովով խնդիր պահանջած, ներկայիս՝ հակում կայ կիրարկելու հայցական հոլովով. կու տայ համապատասխան օրինակներ²¹. այլ օրինակներ եւս.

- «անցեալէն դասեր քաղել չէ այլ՝ *համարձակիլ* Սփիւռքի և հայութեան ապագան *տեսնել* “երկար տևողութեան”»²²:

- «ո՛չ մէկ իրաւակարգ կրնալ յանդգնիլ յաղթել մարդուն երազի Հրաշալի ու եզակի կարողութեան»²³ եւ այլն:

¹⁹ Թ. Չոլաքեան, նշ. աշխ., էջ 50:

²⁰ Թ. Չոլաքեան, նշ. աշխ., էջ 48-50:

²¹ Ա. Եղիայեան, նշ. աշխ., էջ 382:

²² <https://evnreport.com/arm/magazine-issues/point-zero-returning-to-the-question-of-the-diaspora/>.

²³ Ընկերոջ մը գրքին առթիւ, «Բազին» ամսագիր, ԼԵ. տարի, թիւ 2, Պէյրութ, 1996, էջ 50:

դ) Հայր Արսեն Այտընեան, խօսելով ներգործական սեռի բայերու առանձնայատկություններու մասին, կ'առանձնացնէ շարք մը ներգործական բայեր, որոնք հայցականի փոխարէն «տրական հոլով խնդիր-սեռի կ'առնուն»²⁴. *յաղթել, աղաչել, օգնել, սպասել, տիրել, խնայել, հետեւիլ, զարնել, նայիլ*, եւ այլն: Չոլաքեան կը նըշէ, որ այս բայերէն ոմանք արդի արեւմտահայերէնի մէջ կըրկնասեռ են (հայցական եւ տրական կ'առնեն)՝ *սպասել, խնայել, զարնել, նայիլ*, իսկ միւս յիշատակուածները չէզոք՝ *աղաչել, օգնել, տիրել հետեւիլ* (սեռափոխութիւն): Օրինակ՝

Խնայել/-զգուշանալ սպառելէ, վատնելէ/- հայցական,

օր. փռապանը մէկ պարկ **ալիւր** խնայեց.

Խնայել/- /գթալ, ներել, ողորմիլ/- տրական,

օր. Բժիշկը խնայեց հիւանդին կեանքը:

Ըստ Ա. Եղիայեանի՝ կրնայ կրկնակի խնդիր առնել՝ հայցական- տրական. օրինակ՝ «Դաւիթ առաջին երկու հարուածները խնայեց Սարամելիքին»²⁵ :

Ըստ Կարօ Առաքելեանի՝ *այցելել, խնայել, ներել, զարնել, վնասել, մտիկ ընել* բայերը հայցական հոլովով սեռի խնդիր կ'առնեն իրի պարագային, իսկ տրական հոլովով՝ անձի պարագային²⁶:

Հայրիկը **դրամ** խնայեց: (պահեց)

Գործատէրը խնայեց **բանուորին**: (գթաց)

Աշոտ **թռչուն** մը զարկաւ: (սպանեց)

Աշոտ **ընկերոջը** զարկաւ: (ծեծեց)

Ե՞րբ պիտի այցելես **ընկերոջդ**: /Որո՞ւ/

Ե՞րբ **հիւանդանոց** պիտի այցելես: /Ո՞ւր/

²⁴ **Հ.Ա. Այտընեան**, *Քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի*, Բ. տպագրութիւն, Վիեննա, 1883, յօդուած 347:

²⁵ **Ա. Եղիայեան**, նշ. աշխ., էջ 393-394:

²⁶ Տե՛ս **Կ. Առաքելեան**, *Արդի հայերէնի քերականութիւն*, Ա. գիրք, Պէյրութ, 1997, էջ 178-179:

Քեզի մտիկ կ'ընեն:

Դասախօսութիւն մը մտիկ կ'ընեն:

Խանութպանը մեծ գումար մը վնասեց: (կորսնցուց)

Աշակերտը իր վարմունքով վնասեց դասընկերներուն:

Աստուած ներեց մեր յանգանքները:

Աստուած ներեց մահկանացուներուն:

Կամ «յօժարիլ» եւ «սկսիլ» բայերու սեռի խնդիրը եթէ դերբայ է, կ'ըլլայ հայցական, այլապէս տրական հոլովով խնդիր կը ստանայ:

Գործիքը վերջապէս սկսաւ աշխատիլ:

Ես յօժարեցայ ընդունիլ առաջարկդ:

Ես յօժարեցայ ըսածներուդ:

ե) Ներգործական բայեր, որոնք նոյն ձեւով ե՛ւ ներգործական են, ե՛ւ չէզոք: Ս. Միշոյեան-Տապաղեան, Կռանեանի²⁷ եւ Յ. Թ. Գայայեանի²⁸ արդի արեւմտահայերէնի գործնական բառարանները ուսումնասիրելով, կը թուարկէ շարք մը բայեր, որոնք տեղ մը չէզոք, եւ այլ բառարանի մէջ ներգործական բայեր հանդէս եկած են²⁹:

Խաղալ (բն., բչ.)- զբօսնել, զուարճանալ, կատակել.

Յառաջ խաղալ- յառաջանալ

Դեր մը խաղալ- կատարել

Մանուկը կը խաղայ (չէզոք):

Դերասանը Արիստոփոմ Աղային դերը կը խաղայ (ներգ.)³⁰:

²⁷ Ս. Կռանեան, նշ. աշխ., էջ 168:

²⁸ Յ. Գայայեան, *Բառարան Գանձարան Հայերէն Լեզուի*. Գահիրէ, 1938, էջ 176:

²⁹ Ս. Միշոյեան-Տապաղեան, *Գոյականի հայցական հոլովը եւ ներգործական բայերու խնդրառութիւնը արեւմտահայերէնի մէջ*, Արեւմտահայերէնի հարցեր, Ա. Պրակ, Ե., 2018, Ե., էջ 95:

³⁰ Ս. Միշոյեան-Տապաղեան, նշ. աշխ., էջ 95:

Եւրի Աւետիսեան, խօսելով արեւելահայերէնի ներգործական սեռի բայերու մասին, կ'արձանագրէ, որ այդ սեռի բայեր կըրնան ունենալ «վերաբերութեան խնդիր սեռ-տրական+մասին (վերաբերմամբ, վերաբերեալ) կապով»³¹: Նոյն օրէնքը կայ նաեւ արեւմտահայերէնի մէջ: Օրինակ՝

արեւելահայերէն-Նա երգում է իր սիրո մասին:

արեւմտահայերէն- Ան կ'երգէ իր սիրոյ մասին:

արեւմտահայերէն- Ծերունիները կը խօսէին անցեալի օրերու մասին եւ այլն:

Արդ, մէկ լեզուի բայեր են, սակայն հաստատուն օրինաչափութիւն չունին: Եթէ վերել յիշուած բայերը իմաստային յատկանիշներով կը զանազանուէին, ապա կան բայեր, որոնք իմաստային նոյն դրսեւորումները ունին, բայց եւ այնպէս տարբեր սեռերու կը պատկանին՝ ըստ հեղինակներու. օրինակ՝ *տենչալ* բայը, ըստ Կոանեանի, ներգործական է, իսկ ըստ Գայայեանի՝ չէզոք³²:

Տենչալ(ներգ.)- ցանկալ, ըղձալ, կարօտով բաղձալ

Տենչալ(չէզ.)- ըղձալ, բաղձալ, փափաքիլ, ցանկալ

Խնդրառական այս զանազանութեան մէջ իմաստային նրբերանգներ փնտռելը աւելորդ է. նման տարբերութիւն չկայ, եւ բերուած խնդիրները զոյգ առ զոյգ համարժէք են եւ նոյնիմաստ: «Թերեւս բացառաբար *հանդուրժել* բայի խնդիրներուն միջեւ կարելի ըլլայ աննշան տարբերութիւն մը գտնել. հայցական հոլով խնդիրը քիչ մը աւելի սաստկութիւն կը բովանդակէ, որովհետեւ այս հոլովը աւելի ընդգրկուն կը դարձնէ իրմով արտայայտուող խնդիրը,- կը դրսեւորէ աւելի զօրաւոր անհանդուրժողութիւն մը»,- կը գրէ Եղիայեան:

³¹ Յ. Ավետիսյան, *Ժամանակակից հայոց լեզու, ձեւաբանութիւն*, Ե., 2024, էջ 171:

³² Ա. Կոանեան, նշ. աշխ, էջ 453: Յ. Գայայեան, նշ. աշխ, էջ 493:

Եզրակացութիւն

Ներգործական սեռի բայերը, որոնց ուղիղ խնդիրը արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի մէջ ձեւաբանօրէն տարբեր հոլովաձեւերով կամ հոլովառու բառերով կը դրսեւորուի, շարահիւսօրէն, անոնց ստացած պաշտօններով կը տարբերին իրարմէ. այդ չէ պայմանաւորուած անոնց բայի դրսեւորած իմաստներով:

-Ներգործական սեռի բայերու պարագաները հայրենի լեզուաբաններու կողմէ խորապէս ուսումնասիրուած են, թէեւ կան որոշակի հիմնահարցեր, որոնք մեկնաբանութեան կարիք ունին:

-Արեւմտահայերէնը, յետեղեռնեան տարիներուն չունենալով իր կաճառը կամ հետազօտական կեդրոնը, անոր քերականական, ձեւաբանական, շարահիւսական մեկնաբանութիւնները դասագիրքերու կամ մամուլի միջոցով հասանելի դարձած է ընթերցողին, ուր քերականները կամ յօդուածագիրները իրենց հայեցողութեամբ կառուցած են իրենց տրամաբանական խօսքը, երբեմն հաշուի չառնելով խնդրառական պարագաները, որ պատճառ եղած է գրաւոր եւ բանաւոր լեզուի տարբեր դրսեւորումներու ձեւաւորման: Միայն վերջին տասնամեակներուն առաւել ուշադրութեան առարկայ դարձած է:

-Արեւմտահայերէնը, սփռուելով տարբեր մայրցամաքներու վրայ, տեղաշարժի ենթարկուելով, բառապաշարային, ձեւաբանական, շարահիւսական փոխակերման ենթարկուած է. այդ փոփոխութեան վերաբերեալ մինչ օրս համապարփակ հետազօտութիւն չէ կատարուած: Հայրենիքի մէջ ալ բուհական ուսումնական ձեռնարկներու մէջ այս առումով բացթողումներ կան, որոնք ճիշդ ձեւով չեն ներկայացներ արեւելահայերէն-արեւմտահայերէն առանձնայատկութիւններն ու տարբերութիւնները:

Ուստի կ'առաջարկենք առաջին հերթին հաւաքական աշխատանքով ի մի բերել վերջի երեսուն տարիներու արեւմտահայերէնի

մէջ տեղ գտած փոխակերպումները առկայ քերականական եւ հետազոտական յօդուածներով, մենագրութեամբ, ուղղել, ճշդել տարբերակումները, որմէ ետք միայն պատրաստել արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի համեմատական քերականութեան բուհական ուսումնական ձեռնարկ Հայաստանի համար եւ ուսուցիչի, լրագրողի համար՝ ուղղեցոյց Սփիւռքի եւ Հայաստանի արեւմտախօս հատուածի համար:

Օգտագործուած գրականութիւն

Աբրահամեան Ս., Ժամանակակից հայերէնի քերականություն, Ե., 1975:

Առաքելեան Կ., Արդի հայերէն քերականութիւն, Բ. գիրք, Պէյրութ, 1998:

Առաքելեան Կ., Ֆըստըզճեան Ա., Դիրին հայերէն, Բ. գիրք, Պէյրութ, 2008:

Ասատրյան Մ., Բայի սեռերը ժամանակակից հայերէնում, Ե. 1959:

Ավետիսյան Յ., Ժամանակակից հայոց լեզու, ձեւաբանութիւն, Ե. 2024:

Գալայեան Յ., Բառարան Գանձարան Հայերէն Լեզուի, Գահիրէ, 1938:

Եղիայեան Ա., Արեւմտահայերէնի ուղղագրական, ուղղախօսական, ոճաբանական ուղեցոյց, Պէյրութ-Լիբանան, 2022:

Իշխանեան Ռ., Արդի հայերէնի շարահյուսություն, Ե., 1986, 177-186:

Կռանեան Ա., Բառգիրք հայերէն լեզուի, Պէյրութ, 1998:

Հարությունյան Հ., Կառավառումը ժամանակակից հայերէնում, Ե., 1983:

Ճերէճեան Գ., Տօնիկեան Փ. Կ. եւ Տէր Խաչատուրեան Ա., Հայոց լեզուի նոր բառարան. Պէյրութ, 1992:

Միշոյեան-Տապաադեան Ս., Գոյականի հայցական հոլովը եւ ներգործական բայերու խնդրառութիւնը արեւմտահայերէնի մեջ, Արեւմտահայերէնի հարցեր, Ա. Պրակ, Ե.2018, Ե.:

Շահնուր Շ., Համառօտ քերականութիւն եւ ուղղագրութիւն հայերէն լեզուի, Բ. գիրք, Իսթանպուլ, 2001:

Չոլաքեան Յ., Անդաստան, Գ. գիրք, Հալէպ, 2010:

Չոլաքեան Յ., Արեւմտահայերէնի քերականութիւն, (կանոնակարգ եւ խնդիրներ) Բ. գիրք, Ե., 2019:

Պառնապան Ն., Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերէնում, ԳԱ հրատարակչություն, Ե., 1970:

Սարգսյան Ա., Արեւելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Ե., 1985:

Սեւակ Գ., Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Ե., 2009:

Fishenkjian Ani- The Basic Issues of the Problem of Intergrative Verbs in Armenian (Eastern Armenian-Western Armenian).- The languages differ from each other in lexical, grammatical, and syntactic features. The two manifestations of literary Armenian also have their own grammatical and syntactic features. Historically, both literary ones have had and have morphological differences and similarities. Armenian in its two manifestations has been subjected to a comparative morphological-syntactic examination by philologists.

Being the native language of the Armenian Diaspora, Western Armenian has never received scientific and institutional recognition, which is why today it is forced to face a number of problems, with the issue of governance considered the most important.

The article presents the types of verb gender in Armenian, especially Western Armenian, according to the works of Diaspora and native philologists, and the inflected word they require in the construction of sentences.

The study examines the shifts of Armenian intransitive verbs in grammar. It examines and conducts a comparative study of the grammatical rules of the Western and Eastern Armenian languages.

The research concludes that the inflection of the active verb, or direct object, differs between Eastern Armenian (dative for the person and direct for the object) and Western Armenian (accusative for the person and object). In addition, it notes shifts by studying the dictionaries and spoken language of Western Armenian.

Scientifically, the active verb of Western Armenian, with its semantic difference, can demand its object /the word in question/ in the dative, in the ablative, instrumental cases.

Keywords: intransitive verb, direct object, morphological and syntactic feature, Western Armenian, Eastern Armenian.

Fishenkjian Ani, Phd in History, Institute of Language named after. H. Acharyan NAS RA, Researcher.

Фишенкчян Ани - К вопросу об управлении действительного залога в армянском языке (восточноармянский и западноармянский). - Языки различаются в зависимости от своих лексикологических, грамматических и синтаксических особенностей. То же самое можно сказать относительно литературного армянского языка. Исторически сложилось так, что западноармянский и восточноармянский имели отличия и сходства с точки зрения морфологии. Указанные проявления в армянском языке подвергались морфосинтаксическому сравнительному анализу.

Будучи родным языком армянского Спюрка западноармянский так и не получил научного и институционального оформления, из-за чего сегодня вынужден сталкиваться с рядом проблем, при этом вопрос управления считается наиболее важным.

В статье представлены исследованные в трудах как отечественных, так и лингвистов из Спюрка типы залогов в армянском языке, а

также склоняемое слово, требуемое в синтаксисе обоих- западноармянского и восточноармянского языков. Рассматривается перемещение действительного залога в грамматике, также проводится сравнительный анализ управления грамматических категорий в обоих языках.

В результате исследования сделан вывод о том, что склонение действительного залога или прямого дополнения отличается в восточноармянском /дательный падеж в отношении лица и именительный в отношении предмета/ и западноармянском /винительный падеж в отношении лица и предмета/. Кроме того, имеет место факт перемещения в западноармянских словарях и устной речи.

С научной точки зрения, действительный залог в западноармянском языке, помимо винительного падежа, может иметь прямое дополнение /склоняемое слово/ в дательном, аблативе и творительном падежах с учетом лексикологической разницы.

Ключевые слова: действительный залог, прямое дополнение, особенность, синтаксис, западноармянский, восточноармянский.

Фишенкчян Ани, кандидат исторических наук, Института языка им. Р. Ачаряна НАН РА, научный сотрудник.

**ՃԱՄԲԱՐ, ԿԱՄԱՐ, ՄԵՆԵԱԿԵՎ ՄԻ ՔԱՆԻ ԱՅԼ ԲԱՌԵՐԻ
ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ**

DOI: 10.54503/2738-277X.2025.1(22)-107

Զաքարյան Հովհաննես

բանասիրական գիտությունների թեկնածու,
«Տաթև» ԳԿՀ, լեզվաբանության բաժանմունքի ղեկավար,
hovzakaryan@yahoo.com

Բանալի բառեր. հ.-ե. նախալեզու, ձայնդարձ, արմատային տարբերակներ, սկզբնահնչյուն, սահող s-, աճական, ածանց:

Նախաբան

Սույն ուսումնասիրությունը վերաբերում է հ.-ե. *(s)k(h.)eu- «ծռել, թեքել; հարթել» արմատից ծագած հայերեն մի քանի բառերի ստուգաբանությանը, որոնք մինչ այժմ համարվել են կա՛մ անհայտ ծագման, կա՛մ փոխառյալ: Նպատակն է ցույց տալ, որ դրանք հընդերկրոպական ծագման բնիկ հայերեն բառեր են: Մա կարևոր է հայերենի բառապաշարի բնիկ՝ հնդեվրոպական շերտի գիտական ուսումնասիրության ամբողջացման առումով: Ստուգաբանված կամ վերաստուգաբանված են *ճամբար* «վրանատեղի», *ճամբայ* (*ճանապարհ*), *ճամբրուկ* (*ճամպրուկ*), *շավիղ*, *կամար*, *կամուրջ*, *կամարտել* «սահմանագծել», *սենեակ*, *խրճիթ* բառերը: Այդ ստուգաբանություններն էլ հենց հողվածի գլխավոր նորույթն են: Առաջարկվող ստուգաբանական վարկածները հաստատելու նպատակով կատարվել են հնչյունական, ձևությային և իմաստային վերլու-

1 Ներկայացվել է 01.06.2025, գրախոսվել՝ 22.09.2025:

ծություններ, ներքին ու արտաքին համեմատություններ և վերականգնումներ: Օգտագործվել են նաև բարբառային տվյալներ:

Հետազոտության ընթացքը և արդյունքները

Հ.-ե. *(s)k(h.)eu- «ծռել, թեքել; հարթել» արմատից մինչ այժմ բխեցված հայերեն բառեր են՝ *խեղ, կաղ, կեղ* «ծուռ, թյուր, թերի», *կեղծ, խեղծ, շուրջ, շուրթն, շեղ, շաղ* «կապ», *շաղիլ* «շփոթվել, սխալվել», *շարժել, շիլ, շինի (շինիք), խլեզ, խլինդ* «կոճղեզ», *խոլոր* «խեթ», *խողովակ, խոյլ* «պալար», *խուլ, խուն* «սակավ», *խունդ* «կնճիռ», *խրաց* «կոշկաթել, բաճկոնի թել»² և այլն: Այդ արմատը՝ իր ճյուղավորումներով ու ածանցյալներով հանդերձ, ներկայացված է հետևյալ աղբյուրներում. *kh.em-/*(s)kam- «1. ծռել, թեքել, կորացնել, ոլորել, 2. հարթել»³, *(s)k(h)el- «թեքել, ծռել, հենել, ծուռ, շրջված, խեղաթյուրված» (ՀՄԲ, 326, խեղ), *(s)kreu- «պտտել, շրջել, ծռել» (ՀՄԲ, 595, շուրթն, շուրջ), *kelg'- «ոլորվել, գալարվել, նենգություն, կեղծիք» (ՀՄԲ, կեղծ), *(s)kamb-/*(s)kemb- «ոլորվել, թեքվել»⁴, (s)kel-4/*klā-/*klō- «կռանալ, ծուռ» (Պոկ., № 1725), (s)keng- «կաղ, թեքություն» (Պոկ., № 1732), (s)ker-3 «շրջվել, թեքվել» (Պոկ., № 1737), (s)kerb(h)-/*(s)kreb(h)-/*(s)kremb- «շրջվել, ոլորվել» (Պոկ., № 1742), *(s)k(')amb- «ծուռ»⁵, *(s)kAng'- (kh-) «կաղալ» (Նիկ.), *(s)kaur- (-kh-) «կաղ, ծուռթաթ» (Նիկ.) են: Ըստ այդ աղբյուրների՝ տվյալ արմատը ունի իմաստային բազմապիսի զարգացումներ:

² Տե՛ս **Գ. Զահուկյան**, *Հայերեն ստուգաբանական բառարան* (այսուհետև՝ ՀՄԲ), Ե., 2010:

³ Տե՛ս *Wiktionary*.- <https://en.wiktionary.org/wiki> (այսուհետև՝ ՎԲԱ), Proto-Indo-European *kh₂em-:

⁴ **J. Pokorny**, *Indogermanisches etymologisches Wörterbuch*. Bern-München, 1959 (<http://dnghu.org/indoeuropean.html>) (այսուհետև՝ Պոկ.), № 1715:

⁵ **S. Nikolaev**, *Database of Indo-European etymology*. — http://starling-rinet.ru/cgi-in/response.cgi?root=config&morpho=0&basename=\data\ie\piet&first_ (այսուհետև՝ Նիկ.):

Այդ զարգացումները հիմք են տալիս **(s)k(h.)eu-* «ծռել, թեքել; հարթել» արմատից բխեցնելու նաև հայերեն *ճամբար, ճամբայ, ճամբրուկ, շավիղ, կամար, կամուրջ, սենեակ, խրճիթ* և այլ բառեր, որ մինչ այժմ համարվել են կա՛մ անհայտ ծագման, կա՛մ փոխառ-յալ: Ներկայացնենք այդ բառերը հերթականությամբ:

Ճամբար (ճանբար, ջամբար) «1. (ժամանակավոր) բնակա-տեղի, 2. վրանատեղի, 3. բանակատեղի, 4. (փխբ.) բանակ, 5. (հնց.) ծանրոց, ուղեբեռ» (որից՝ *ճամբարակ* (հայկական տեղանուն)) բառը Հ. Աճառյանը, հետևելով Հ. Հյուբշմանին, համարել է փոխա-ռություն պիլ. čambar «շրջանակ» բառից՝ ենթադրելով, որ դա «ու-նեցած պիտի լինի նաեւ «բանակ» նշանակությունը»: Իմաստային անցման հիմնավորումն այն է, որ «առհասարակ «խումբ» նշա-նակող բառերը կապ ունին «բոլորակ» գաղափարի հետ. հմմտ. *գունդ, պար, տձկ. թօփ* են. ներկայ դեպքում հմմտ. յատկապէս՝ *գումարտակ* «1. բանակ, 2. մանեակ»⁶: Այս բացատրության համար նաև հղում է արվել արդի գրական հայերենում անգործածական *ճամբար* «1. մանյակ, 2. վարսակալ, գլխի ժապավեն, 3. ժանյակ» համանունին, որը դուրս է բերվել պիլ. čambar «գլխի կապ» ձևից (ՀԱԲ, 3, 179-180)⁷: Գ. Ջահուկյանը համամիտ է Հ. Աճառյանին (ՀՄԲ, 487): Կարծում ենք՝ այս տեսակետը թույլ է հիմնավորված, քանի որ *ճամբար* «բ(ա)նակատեղի» բառի համար ո՛չ հին, ո՛չ էլ միջին ու նոր պարսկերենում հոմանիշ չի հայտնաբերվել: Մինչդեռ

⁶ Տե՛ս **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 3, Ե., 1977, էջ 180:

⁷ Որոշ բարբառներում հանդիպում է *չամբար (չոմբար)* «1. գլխաշոր, փաթաթան, քնթկալ, 2. օղակ, կեռ, 3. անիվի երկաթե կամ ռետինե շրջանակ» (որից՝ *չամբար-դագի (չամբարլաչիկ)* «չամբարի տակից կապվող եռանկյունաձև լաչակ») բառը (*Հայոց լեզվի բարբառային բառարան*, հ. 4, Ե., 2008, էջ 374), որը թերևս փոխառու-թյուն է պարսկերեն čambar «1. վզկապ, գլխակապ, ճակատակապ, 2. անիվի կամ տակառի շրջանակ» ձևից (ՀԱԲ, 3, 179-180):

պարզվում է՝ *Ճամբար* «բ(ա)նակատեղի» բառը թե՛ իմաստով, թե՛ ձևով շատ ավելի համոզիչ գուգահեռներ ունի ռոմանական և բալթիական լեզուներում: Դրանցից են լատ. *campus* «1. դաշտ, ասպարեզ, 2. բնակատեղի, 3. կրթավան» բառը (դրանից սերված ֆր. *champ* «դաշտ», նույն աղբյուրից փոխառված անգլ. *camp* «1. ճամբար, 2. վրանատեղի, 3. գիշերել, ճամբարել են», *champ* «1. դաշտ, 2. (ճարտ.) այն դաշտը կամ հիմքը, որի վրա բարձրաքանդակ է փորագրված, 3. վահանի մակերեսը, 4. ճամբարել պատմական եկեղեցուն», *chamber (chambre)* «1. սենյակ, սենյակների խումբ, 2. ննջարան, 3. դահլիճ, 4. պալատ, 5. ատյան (պետական, դատական), գրասենյակ, 6. խցիկ, բանտախուց [կամերա] են»), լատ. *camera* «սենյակ, ննջարան» (դրանից փոխառյալ անգլ. *camera* «1. խուց, 2. լուսախցիկ, 3. դատավորի առանձնասենյակ, 4. կամարակապ շինություն, թաղածածկ սենյակ»), լատվ. *kampis* «ճամբար» (Պոկ., № 834, *kam-p- «կռնալ, թեքություն, անկյուն») և այլն: Այդ բոլորի նախաձևն է հ.-ե. <*kh.em-(p-) «1. ծռել, թեքել, կորացնել, ոլորել, 2. հարթել» արմատը՝ իր *(s)kam- տարբերակով (ՎԲԱ, *kh.em-): Հետաքրքիրն այն է, որ ռոմանական ու բալթիական ծագման այս բառերը ոչ միայն համադրելի են հայերենի հետ թե՛ ձևով, թե՛ իմաստով, այլև ունեն իմաստային ավելի ընդարձակ ճյուղավորում, քան իրանական լեզուներում: Ռոմանական ու բալթիական ծագման բառերը թույլ են տվել վերականգնելու նախաձև, որն ունի իմաստային երկու կարևոր բաղադրիչ՝ «հարթ» և «բոլորակ»: Խնդիրն այն է, որ ճամբար ստեղծվում է հարթ տեղում՝ շրջանաձև կամ այլ դասավորությամբ խփելով վրաններ: Հ.-ե. նշված նախաձևը բնականաբար ընդհանուր է նաև հայերենի համար, և իրավունք ունենք համարելու, որ դրա ժառանգորդներից (անմիջական ածանցյալներից) մեկն է հայ. *Ճամբար* «բ(ա)նակատեղի» բառը: Հետևաբար դրա համար առաջարկվում է *ճամբ-ար* <*sk'ham -bh-<*kh.e-m-<*(s)k(h.)

eu- «ծռել, թեքել; հարթել» ստուգաբանությունը» (*m-ն և *bh-ն ածականներ են) (-ար ածանցի համար հմմտ. *գալ-ար, պալ-ար, պատահ-ար, կերպ-ար, տիպ-ար, հաճ-ար* են):

Այս օրինակը ցույց է տալիս, որ հայերեն և իրանական բառերի միջև որևէ նմանության առկայությունը բավարար պատճառ չէ դրա վրա սկսելու և հայերեն բառը ամեն գնով իրանական փոխառություն ներկայացնելու համար: Պետք է նախ փորձել ապացուցել հայերեն բառի բնիկ հ.-ե. ծագման վարկածը: Առավել ևս, եթե կան հ.-ե. այլ լեզուների զուգահեռներ, որոնք նույնպես նման են հայերեն բառին: Բնիկ ծագման վարկածն ապացուցելու անհնարինության դեպքում միայն կարելի է դիմել իրանական փոխառության վարկածին¹⁰:

Ճամբարակ «1. ճոպան, 2. կաշվե ամուր փոկ, 3. գութանի շղթա»¹¹ բառի համար Հ. Աճառյանը վերականգնել է պիլ. *čambarak

⁸ Ծ<*sk'h համապատասխանության վերաբերյալ տե՛ս **Հ. Զաքարյան, Ճ սկզբնահնչյունով մի քանի բառերի ստուգաբանություն.** - «Շիրակի հայագիտական կենտրոն. Գիտական աշխատություններ», 1-2 (22), 2019 (խմբ.՝ Ս. Հայրապետյան), Գյումրի, էջ 228-238:

⁹ Այսօր ոչ մեկի մտքով չի անցնի ոռու. օռ-/օր- արմատից փոխառյալ համարել հայ. *ակ-/աչ-* արմատը (կամ հակառակը), անգլ. door-ից փոխառյալ համարել հայ. *դուռ*-ը և այլն:

¹⁰ Հայերեն բառերի ստուգաբանության հարցում նախ և առաջ իրանական աղբյուրներին դիմելը վատ սովորություն և նախապաշարում է այն ժամանակներից, երբ հայերենը համարվում էր իրանական լեզու: Վաղուց ժամանակն է ազատագրվելու այդ նախապաշարումից և հայերեն բառերի ծագման առաջնային աղբյուր դիտարկել հնդեվրոպական նախալեզվի արմատները: Այդ մոտեցման դեպքում իրանական փոխառություն համարվող բազմաթիվ բառեր կվերամեկնաբանվեն որպես բնիկ հայերեն բառեր: Այդ ուղղությամբ աշխատել են դեռ Հյուբշմանը, Աճառյանը և ուրիշներ, մեծ գործ է արել Գ. Զահուկյանը, սակայն դեռ շատ անելիք կա: Դեռ լիովին հաղթահարված չէ այն թյուրբանախությունը, թե իբր հիմնականում իրանական ծագում ունեն *վ*-ով, *մ*սամբ նաև *պ*-ով, *ճ*-ով սկսվող բառերը, *զ/ժ* հերթագայությամբ բառազույգերը և այլն:

¹¹ Տե՛ս նաև **Ս. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան** (այսուհետև՝ Մալխ.), հ. 3, Ե., 1944, էջ 194:

սկզբնաձև՝ չունենալով իրանական որևէ իրական գուգահեռ (ՀԱԲ, 3, 180): Գ. Ջահուկյանը համաձայն է այդ կարծիքին: Նա նաև կապ է տեսել *ճամբար* «գլխակապ» բառի հետ (ՀՄԲ, 487): Ակնհայտ է, որ այս բառը փոխառյալ համարելու հիմքերը թույլ են, մանավանդ որ այդ բառը կա մի շարք բարբառներում, իսկ նմանակը՝ հունարենում՝ *κόμβος* «ժապավեն, կապ, վարդակապ», *κομβόω* «հանգույցներ» (Պոկ., № 1715, (s)kamb-ն (s)kemb- «ոլորվել, թեքվել»): Հետևաբար այն կարելի է համարել վերոհիշյալ *(s)k(h.)eu- «ծռել, թեքել; հարթել» նախաձևի ևս մի ածանցյալ՝ իմաստային այլ զարգացմամբ: Իմաստային անցման հիմքն այն է, որ ճուպանը, փոկը, շղթան մի կողմից՝ ծռելով, ճկելով, ոլորելով են պատրաստվում, մյուս կողմից՝ կիրառվում են փաթաթելու, շրջելու, կապակցելու նպատակով:

Ճանապարհ (*ճամբայ*, *ճամփայ*, բրբռ. *ճամխա*) «1. ուղի, շավիղ, կաճան, 2. (փխբ.) ելք, եղանակ, կերպ, միջոց» բառը Հ. Աճառյանը, հետևելով Նայբերգին, համարել է փոխառություն իրան. ենթադրյալ *čarana- «երթալ» + parθ- «անցք, գետանց» կազմությունից՝ արագաբան արտասանությամբ (*ճարանապարհ>ճանապարհ. ՀԱԲ, 3, 182-183): Գ. Ջահուկյանը համակարծիք է (ՀՄԲ, 488)¹²: Վերը նշված սկզբունքի համաձայն՝ իրանական ենթադրյալ ձևեր վերականգնելու փոխարեն առաջ ենք քաշում բնիկ հայկական ծագման վարկած: Ելնելով վերոհիշյալ *ճամբար* և ներքոհիշյալ *ճամբրուկ* բառերի հետ թե՛ ձևային, թե՛ իմաստային առնչությունից (ճամբարն ու ճանապարհը փոխկապակցված ենթակառուցվածքներ են. ճամբար հասնում են ճանապարհով, որը հարթեցրած, բայց և հաճախ կեռմաններով ու թեք ուղին է)՝ դիտարկում ենք դրանք որպես նույնարմատ բառեր: Ավելի հին ենք համարում *ճամբայ* տարբե-

¹² Տե՛ս նաև Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987, էջ 532:

րակը՝ *ճամբ* ընդհանուր արմատով, իսկ *ճանապարհ*-ը համարում ենք դրան զուգահեռ ինքնուրույն զարգացում և թերևս գրական լեզվում գերշտկված ու ընդլայնված տարբերակ: Առաջարկում ենք *ճամբ-այ* <*sk'ham-bh- <*kh.e-m- <*(s)k(h.)eu- «ծռել, թեքել; հարթել» ստուգաբանությունը (*m-ն և *bh-ն աճականներ են) (-այ վերջածանցի համար հմմտ. *առ-արկ-այ*, *արք-այ*, *մօր-այ*, *յօր-այ*, *ծառ-այ*, *քար ու քո-այ*, *ան-ուղղ-այ* և այլն): Մյուս տարբերակի համար առաջարկում ենք *ճանապարհ* <*sk'hanəb-ար-h- <*sk'hanə-b- <*(s)kh.e-n- <*(s)k(h.)eu- «ծռել, թեքել; հարթ» ստուգաբանությունը (-ար ածանցի մասին տե՛ս վերը՝ *ճամբար* բառի առիթով): Բառավերջի -h-ն հավանաբար համաբանական հավելում է *խորհ*, *խոնարհ*, *աշխարհ*, *շնորհ*, *նիրհ*, *սկիհ*, *դժգոհ*, *գրոհ*, *գոհ*, *հրդեհ*, *պատեհ*, *գռեհ*, *սեպուհ*, *սրահ*, *վստահ*, *գրահ*, *ագահ* և այլ բառերի ազդեցությամբ, ինչպես արդի հայերենում երբեմն հանդիպող *նշխարհ*, *նշտարհ*, *կտցարհ*, *աշխարհաբարհ*, *ոչխարհ*, *ժխորհ*, *ապաշխարհել*, *արհա-վիրիք* և այլ կեղծ գրական ձևերը): Բարբառներում և խոսակցական լեզվում կա *ճնապա* ձևը: Մյուս կողմից՝ բանավոր խոսքում *հ* վերջնահնչյունը սովորաբար չի արտաբերվում, համր է նույնիսկ ըստ ուղղախոսական կանոնի: Բաղադրությունների մեջ ևս առավել տարածված են առանց *հ*-ի արտասանվող տարբերակները՝ */ճանապարել, ճանապարային, ճանապարորդ/* ևն: Մյուս՝ *ճամբայ* ձևը ևս ունի բարբառային տարատեսակներ՝ *ճամպայ*, *ճամփայ* (Մալխ., 3, 194), *ջամփայ*, *ճամբախ*, *ջամփոնք*, *ջամփոկ* և այլն:¹³ Այլալեզու զուգահեռներից հնարավոր է, որ կապ ունենա լատ. *camminus* «ուղի» (որից՝ իսպ. *camino*, պորտուգ. *caminho*, ֆր. *chemin* «ուղի, արահետ») բառի հետ, որի ծագումը հստակեցված չէ (ՎԲԱ):

¹³ Հավարիկի բարբառում գրանցված է *ճամբար* «ուղրապտույտ ճանապարհ» տարբերակը (*Հայոց լեզվի բարբառային բառարան*, հ. Դ, Ե., 2007, էջ 374):

Ճամբրուկ (բրբռ. *ճամբրայ*, նոր՝ *ճամպրուկ*) «1. (հնգ.) մազե պարկ, մախաղ; 2. ուղեպաշար, 3. ուղեպայուսակ» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀՄԲ, 3, 180): Գ. Ջահուկյանը ենթադրել է «փոխառություն՝ թերևս իրանական աղբյուրից»՝ «բայց բուն աղբյուրը չի հավաստված» վերապահությամբ (ՀՄԲ, 487): Նկատի ունենալով թե՛ հնչյունական, թե՛ իմաստային կապը *ճամբա* «ուղի», ինչպես նաև *ճամբար* «վրանատեղի» բառերի հետ՝ առաջարկում ենք *ճամբր-ուկ* <*ճամբ-ար <*sk'ham-bh- <*kh.e-m- <*(s)k(h.)eu- «ծրել, թեքել; հարթել» ստուգաբանությունը (*m-ն և *bh-ն աճականներ են) (-ար ածանցի մասին տե՛ս վերը՝ *ճամբար* բառի աղիթով): Այլալեզու գուգահեռներից հիշենք՝ հ.բ.գերմ. scherbe, ն.գերմ. schrap «պայուսակ», հ.իսլ. skreppa «ուսապարկ», լատ. scirpea «ճամպրուկ», մ.իռլ. corb «սայլ» (նախապես՝ «զամբյուղ»), լիտվ. kařbas «զամբյուղ», ռուս. kórob, արևմ.ռուս. koróba, հ.պրուս. carbio «ջրադացի տուփ», լիտվ. kařbija «զամբյուղ», հ.եկեղ.սլավ. krabji «փոքր տուփ, արկղիկ», լատ. corbis «զամբյուղ» (Պոկ. № 1742, *(s)kerb(h)-, *(s)kreb(h)-, *(s)kremb- շրջվել, ոլորվել), հուն. κάρταλ(λ)ος «զամբյուղ», κύρτος, κύρτη «վանդակ», ալբ. kjerthull «շրջանակ» (Պոկ., № 945, kert-, kerət-, krāt- «պտտվել, գլորվել, գալար»):

Շախիղ (*շաւեղ*, *շաւիղ*) «արահետ, կաճան, ուղի, ճանապարհ» բառը Հ. Աճառյանը Հյուբշմանի հետևողությամբ համարել է փոխառություն ասոր. šəwīlā «ճանապարհ, հետք» բառից (ՀՄԲ, 3, 506): Գ. Ջահուկյանը համակարծիք է (ՀՄԲ, 584): ՎԲԱ-ն տալիս է ասոր. šəbīlā սկզբնաձև: Հաշվի առնելով հոմանիշությունը *ճամբա* բառի հետ՝ առաջարկում ենք բնիկ հ.-ե. ծագման վարկած՝ ստուգաբանական հետևյալ բանաձևով. *շաւ-իղ* <*skhau- <*(s)k(h.)eu- «ծռել, թեքել; հարթել»¹⁴ (-իղ/-իլ ածանցի համար հմմտ. *խնծ-իղ*,

¹⁴ Ծ <*skh համապատասխանության համար հմմտ. *շեղ*, *շիլ* <*skhel- <*(s)kel- «ծռել, հենել» (ՀՄԲ, էջ 585, 587), *շեղբ* <*skhel-p- «կտրել, անջատել» (ՀՄԲ, էջ 585), *շիթ*

տորմ-իդ, կաթ-իլ, փաթ-իլ, տես-իլ, հմայ-իլ, ոջ-իլ, խաշ-իլ, խանձ-իլ և այլն (տե՛ս նաև ՀՄԲ, 806)): Ճ/շ հերթագայության համար հմատ. ճիւղ – շիւղ, ճիւ «ցողուն» – շիւ, ճեղ – շեղբ, ճորճոր – շորշոր են: Ասորական (սեմական) ձևի հետ նմանությունը կարելի է բացատրել նոստրատիկ առնչությամբ:

Կամար «1. (ճարտ.) միահարթ կորագիծ կառուցվածք, աղեղնաձև հեծան, կոճ (բրբռ.), 2. (գրք.) գոտի, մեջկապ» բառի այս երկու իմաստները Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը, հետևելով Հյուբշմանին, համարել են տարարմատ համանուն բառեր՝ առաջինը փոխառված հուն. καμάρα «կամար» ձևից (սա էլ՝ հ.-ե. *qam-/*qem- «կորացնել, ծռել» արմատից), երկրորդը մ.պարսկ. kamar «գոտի» ձևից՝ առանց նախաձևը նշելու (ՀՄԲ, 2, 501-502, ՀՄԲ, 378): ՎԲԱ-ն, ըստ Պ. Քաուիի, այս երկուսը նույնացրել է՝ համարելով իրանական փոխառություն, որի նախաձևն է հ.-ե. *kh.em- «ծռել, թեքել, հարթել» արմատը: Հունարեն καμάρα «կամար, թաղածածկ սենյակ, սայլ» ձևից փոխառությունը ՎԲԱ-ն մերժել է 4 պատճառաբանությամբ: Նախ՝ *կամար* բառի ճարտարապետական իմաստը վկայված է նաև իրանական լեզուներում: Երկրորդ՝ հուն. καμάρα բառը նույնպես համարվում է իրանական փոխառություն: Երրորդ՝ հունարեն բառի α վերջնահնչյունը հայերենում արտացոլված չէ: Չորրորդ՝ հայ. բառը շատ հին է՝ հունարենից փոխառված լինելու համար (ՎԲԱ, կամար): Այս փաստարկները, սակայն, բավարար հիմք չեն պնդելու, թե հայերեն *կամար* բառը կարող է լինել միայն իրանական փոխառություն: Եթե *կամար* բառի բոլոր իմաստներն էլ հանգեցվում են հ.-ե. նույն նախաձևին, ապա հայերեն բառը կարող է օրինաչափորեն դուրս բերվել այդ նույն նախաձևից՝ առանց իրանական կամ այլ միջնորդության: Այս պնդման ստուգաբանական

<*skheth- «ցայտել, բխել» (ՀՄԲ, էջ 587), շիւ <*skhi-p- «կտրել, անջատել» (ՀՄԲ, էջ 588), շոյտ «փութկոտ, արագ» <*skheud- «նետել, հալածել» (ՀՄԲ, էջ 592) են:

բանաձևը կլինի հետևյալը. *կամ-ար* <*ska-m- <*(s)k(h).eu- «ծռել, թեքել; հարթել»¹⁵ (*m-ն աճական է) (վերջածանց -*ար*-ի մասին տե՛ս վերը՝ *ճամբար* բառի առիթով): Դարձյալ հիշենք հետևյալ կարևոր դրույթը: Եթե հայերեն որևէ բառ օրինաչափորեն և հիմնավորված կարելի է բխեցնել հ.-ե. հայտնի արմատից, ապա կարիք չկա հորինելու փոխառության վարկած կամ կառչած մնալու այդպիսի ավանդական վարկածին: Այլալեզու նույնարմատ զուգահեռներից հիշենք՝ լատ. *camur(us)* «կոր, ծոված, աղեղնաձև» (նախափտալիկ. **kameros*), սանսկ. *kmárati* «ծոված (մարմնով կամ մտքով)», պրսկ. *kīæmæf* «1. գոտի, գոտկատեղ, 2. կամար, գմբեթ, կամուրջ», նախահուն. *κάμινος* «(որմնա)վառարան», լիտվ. *kaĩpas* «անկյուն, կացարան», լատ. *campus* «հովիտ և այլն» (ՎԲԱ, *Reconstruction:Proto-Indo-European/ kh.em-*), հ.հնդկ. *cāpa-* «աղեղ» (Պոկ., № 834, **kam-p-* «կռանալ, թեքություն, անկյուն»), լատ. *curvus* «ծուռ, կոր, կամարակապ», լիտվ. *skriejù, skriėti* «1. պտտվել, շրջանագծել, 2. թռչել կամարաձև» (Պոկ., № 1737, (s)*ker-3* «շրջվել, թեքվել»), գ.բ.գերմ. *himil*, հոլանդ. *hemel* (ՀԱԲ, 2, 501) և այլն: *Կամար* բառի «գոտի» իմաստը, որ վկայված է միայն վաղ միջնադարում, հետագայում մարել է՝ արտահայտվելով *գոտի* հոմանիշով, բարբառներում՝ նաև իրանական *քամար* (*քյամար*) ուշ միջնադարյան փոխառությամբ: *Ճ/կ* (ճամբար-կամար) հերթագայության համար հիմնտ. *ճուռն - կուռն, ճուռճուռ - կուռկուռ, ճուռիկ - կուռիկ* «գինու փոքր աման», *ճայթել* «ցատկոտել» (*Մալխ.*) - *կայթել, ճիճ* (ՀԼԲԲ)- *կիճ* «խայթոց», *լիճ - լիկ* «ավազան, լիճ» և այլն:

¹⁵ Կ<*sk համապատասխանության համար հիմնտ. *կաղ* <*skal- <*(s)kel- «ծռել, հենել» (ՀԱԲ, էջ 375), *կեղ* «ծուռ, թյուր» <*skel- <*(s)kel- «ծռել, հենել» (ՀԱԲ, էջ 397), *կոփ* «տաշում, խփում, ծեծում» <*sko-ph- <*(s)kfp/b(h)- «սուր գործիքով կտրել, ձեղքել» (ՀԱԲ, էջ 430), *կռել* «կեղև» <*ski-t- <*(s)khei-t- «կտրել, անջատել» (ՀԱԲ, էջ 432):

Կամուրջ «ուղանցույց՝ գետի, ձորի, երկաթուղու կամ ճանապարհի վրայով» բառը Հ. Աճառյանը, հետևելով Յակոբսոնին, Մեյեին և այլոց, համարել է բնիկ հայ. բառ՝ որպես զուգաբանություն նշելով հուն. γέφυρα «1. պողոտա, 2. կամուրջ» բառը, սակայն նախաձև չի վերականգնել հնչյունական բարդությունների պատճառով (ՀԱԲ, 2, 502-503): Գ. Ջահուկյանը, կասկածով համաձայնելով այդ կարծիքին, փորձել է վերականգնել նախաձև՝ *g^umbhuriā- (°) (*g^uem- «գնալ, գալ» արմատի¹⁶ g) կամ *g^uobhuriā (*bh>*m հերթագայությամբ) և համեմատել է հուն. γέφυρα, լիտվ. gomorys «քիմք» բառերի հետ (ՀՄԲ, 379): ՎԲԱ-ն, ըստ Թ. Ռասմուսի, կապել է հուն. γέφυρα, իսեթ. ha-am-mu-ru-wa_a «գերան» ձևերի հետ՝ նշելով, որ դրանց միջև հարաբերությունը և ընդհանուր նախաձևը պարզորոշված չեն (ՎԲԱ, կամուրջ): Այլ մասնագետների ստուգաբանական մի շարք փորձերի մասին գրել է Հ. Մարտիրոսյանը՝ նկատելով, որ դրանք բավարար համոզիչ չեն, երբեմն էլ անհիմն են: Ապա համեմատել է հուն. γέφυρα (նախիմաստը՝ «գերան»), իսեթ. hamuru(wa) «գերան», աբխազ. *qwəmbər- «գերան», արմ.վրաց. k'ip'orč'i «գերանակամուրջ» բառերը հայ. *կամուրջ* բառի՝ Խոտորջուրի և Համշենի բարբառներում ունեցած «ձող» իմաստի հետ և ենթադրել, որ դրանք բոլորն ունեն ընդհանուր միջերկրածովյան/պոնտական ծագում, որի աղբյուրը այդ լեզուներից մեկն է կամ մի այլ լեզու¹⁶: Հ.-ե. և քարթվելական լեզուներով բառերի նմանությունը կարող է բացատրվել նաև նոստրատիկ ընդհանրությամբ: Ինչևէ, շատ հեռուն չգնալու, սարուձոր չընկնելու և պատեպատ չխփվելու համար նկատենք, որ կամուրջը փաստորեն ճանապարհի տեսակ է, դրա այն վերգետնյա հատվածը, որն անցնում է որևէ խոչընդոտի (գետի, հեղեղատի, ձորի, կիրճի, ներկայումս՝ նաև երկաթգծի, հատվող

¹⁶ H. Martirosyan, *Etymological dictionary of the Armenian inherited lexicon*, «Leiden Indo-European Etymological Dictionary Series, Volume: 8», Brill, 2008, էջ 351-353:

ճանապարհի) վրայով: Ուստի բնական կլինի ենթադրել, որ *կամուրջ* և *ճանապարհ* բառերը կարող են հ.-ե. նույն արմատից ծագած լինել¹⁷: Պարզագույն դեպքում կամուրջը գերան է կամ գերանակապ հարթակ¹⁸: Բայց առնվազն հայկական իրականության մեջ քիչ թե շատ լուրջ ու հիմնավոր կամուրջները սովորաբար կառուցվել են մեկ կամ ավելի թռիչքով քարե կամար(ներ)ով: Եվ ընդհարապես կամարի կիրառության մի կարևոր դրսևորումը հենց կամուրջն է: Ուրեմն պատահական չէ *կամուրջ* բառի հնչյունական և իմաստային կապը *կամար* բառի հետ: Դա նկատել են դեռևս ՆՀԲ-ն, Կլապրոտը, Լազարդը, Ֆիկը, սակայն հարաբերակցության բանաձևեր և նախաձև չեն առաջարկել: Միանգամայն բնական է, որ այդ երկու բառերն ընդհանուր ծագում ունենան: Դա է վկայում երկուսի էլ *կամ-* սկզբնամասը (արմատը), որ նաև բառակազմական հիմք է: Տարբերությունը դրանց ածանցներն են՝ *-ար* և *-ուրջ*: *-Ար/-իր/-որ/-ուր* ածանցին անդրադարձել ենք վերը (*ճամբար*, *կամար* բառերի առիթով): Ինչ վերաբերում է *-ուրջ*-ին, ապա դա կարելի է մեկնաբանել որպես նույն (*-ուր*) ածանցի և ջ աճականի միավորում¹⁹ (*-արջ/-ուրջ* ածանցի համար հմմտ. *բաղ-արջ*, *հաղ-արջ*, *եղ-ուրջ*, *հակ-ուրջ-ի*):²⁰ Այսպիսով՝ կարող ենք առաջարկել *կամ-ուր-ջ* <*skha-m- <*(s)kh.eu- «ծռել, թեքել; հարթել» ստուգաբանությունը (*m-ն աճական է): «Կամար-կամուրջ» իմաստային

¹⁷ «Կամուրջ – փողոց, ճանապարհ» անցման համար հմմտ. լատ. pons «կամուրջ» (<*póntonhıs- <*pent- «ուղի, ճանապարհ»), ռուս. pod «կամուրջ, փայտամած փողոց» (ՎԲԱ):

¹⁸ Հմմտ. անգլ. bridge «կամուրջ» <հ.-ե. *b^herw-, b^hrēw- «տախտակամած» (ՎԲԱ):

¹⁹ Զ աճականի համար հմմտ. *անուրջ*, *գաղջ*, *ջինջ* (*ջունջ*), *մրջին*, *շուրջ*, *ողջ*, *պղպջակ*, *ստեղջ* ևն (Հ. Աճառյան, *Հիսկատար քերականություն հայոց լեզվի*, հ. 3, Ե., 1957, էջ 62-64):

²⁰ Բուն *-ուր* ածանցի համար կարելի է հիշել նաև *թափ-ուր*, *մր-ուր*, *բլ-ուր*, *բար-ուր*, *կտ-ուր*, *մաք-ուր*, *խանձ-ուր*, *թաք-թաք-ուր*, *կել-ուր-ք*, *սլ-ուր*, *ար-ուր-ք*, *ժոխ-ուր*, *կծոխ-ուր* և այլ կազմություններ:

անցման համար հիմնո. ռուս. мост «1. կամուրջ, 2. (մարզ.) մարմնի կորացած՝ կամարաձև դիրք», պրսկ. kamar, ադղ. ЛЪЭМЫДЖ, կաբար-դին. ЛЪЭМЫЖ, արաբ. qantara, իսպ. bóveda «1. կամար, 2. կամուրջ», իսպ. puente «1. կամուրջ, 2. ոտնաթաթի կամար» են: Այլալեզու նույնարմատ գուգահեռները տե՛ս վերը՝ *կամար* բառի առիթով: Դրանցից հատկանշական է լատ. *camur* «կոր, ծոված, ծուռ» բառը, որ ձևով գրեթե համընկնում է *կամուրջ*-ին: Հայերենի բարբառներում տարածված են դրափոխված *կարմունջ* ձևի տարբերակները (ՀԱԲ, 2, 503):

Կամարտել «սահմանագծել, սահմանել» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 2, 502): Գ. Ջահուկյանը համարել է անհայտ ծագման (ՀԱԲ, 382): Հնարավոր ենք համարում կապը *կամար* բառի հետ՝ *կամարտել* <*կամարատել < կամար-ատ-ել բառակազմական բանաձևով, որի համաձայն՝ *կամար*-ը հնում թերևս ունեցել է նաև «սահման, սահմանագիծ» իմաստը:

Մենեակ «ապրելու խուց, ներքին բնակարան, շտեմարան, մառան, գանձարան, կանանոց» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 4, 201): Գ. Ջահուկյանը, համեմատելով հուն. σκηνή «վրան, բեմ, սրահ», ռուս. сень «հովանի», сени «սրահ, նախասենյակ» բառերի հետ, կասկածով կապել է հ.-ե. <*sk'i- «թույլ փայլել, ստվեր» արմատին՝ նշելով սակայն, որ «հնչյունական հարաբերությունը պարզ չէ» (ՀԱԲ, 675-676): ՎԲԱ-ն, ըստ Օլսենի և Գիպերտի, համարել է փոխառություն միջին իրան. *sēniyak < հին իրան. *sayanīyaka- (բառացի «այն, որի մեջ պետք է քնել, ննջարան») ենթադրյալ ձևերից՝ դրանք կապելով հ.-ե. *key- («պառկել») արմատին: Նկատի ունենալով այս տարակարծությունները՝ առաջարկում ենք այս բառը կապել հ.-ե. վերոհիշյալ *(s)k(h.)eu- «ծռել, թեքել; հարթել» արմատին, որի ածանցյալներից են, ինչպես նշել ենք վերը, լատ. camera «սենյակ, խուց, խցիկ, թաղածածկ սենյակ», անգլ.

chamber «1. սենյակ, 2. ննջարան, 3. դահլիճ, 4. գրասենյակ, 5. բանտախուռ» (< ֆր. chambre «սենյակ»), կատալոն. cambra «սենյակ, ննջարան», հուն. *καμάρα* «կամարավոր սենյակ» բառերը: Ստուգաբանական բանաձևը կլիինի հետևյալը. *սեն-եակ* <*(s)k'en- <*(s)k(h.)eu- «ծռել, թեքել; հարթել»²¹ (*m/n-ն և *sk'-ն աճականներ են) (-եակ ածանցի համար հմմտ. *երկ-եակ, ինն-եակ, հարիւր-եակ, մաշկ-եակ, ինքն-եակ, ջերմն-եակ, օթ-եակ, երկուոր-եակ* ևն (տե՛ս նաև ՀՄԲ, 803)): Ըստ երևույթին ի սկզբանե *սենեակ* են կոչվել թաղածածկ սրահները, քանի որ թաղը (կամարաձև ծածկը) ծագումնաբանորեն կապ ունի կամարի հետ, իսկ *կամար* բառը, սույն ուսումնասիրության համաձայն, փաստորեն նույնարմատ է *սենեակ* -ին: *Կ/ս* (կամար-սենեակ) հերթագայության համար հմմտ. *կորթին -սաթիր* «ծորթին», *կոկորդ-սոսորդ* և այլն: Հայերենում և այլ լեզուներում սովորական է նաև *մ/ն* հերթագայությունը՝ անկախ դիրքային փոխադեցությունից:

Խրճիթ (խրջիթ, խոճիթ, խրճիկ) «հյուղակ, աղքատիկ տնակ, խցիկ» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀՄԲ, 2, 432): Գ. Ջահուկյանը համարել է անհայտ ծագման (ՀՄԲ, 355): Հաշվի առնելով իմաստային առնչությունը *սենեակ* բառի հետ՝ առաջարկում ենք նույն արմատի հետ կապել նաև այս բառը ստուգաբանական հետևյալ բանաձևով. *խրճիթ* <*(s)k'hōr-gʷy- <*(s)k(h.)eu- «ծռել, թեքել; հարթել»²² (*r-ն և *gʷy-ն աճականներ են)

21 Ս <*(s)k' համապատասխանության համար հմմտ. *սալարիլ* «թաքնվել» <*(s)k'al- <*(s)k'el- «ծածկել, թաքցնել, պահել» (ՀՄԲ, էջ 662), *սալ* «կարծր հարթ քար» <*(s)k'el- <*(s)k'ei- «սրել» (ՀՄԲ, 4, էջ 155: ՀՄԲ, էջ 662), *սեղմ* <*(s)k'el- «ծածկել, պատել» (ՀՄԲ, էջ 675), *սեթ* <*(s)k'el- «աճեցնել, սնել» (ՀՄԲ, էջ 676) ևն:

22 Իս <*(s)kh համապատասխանության համար հմմտ. *խլեզ* <*(s)khōleig'h- <*(s)kel- «ծռել» (ՀՄԲ, էջ 333), *խլիքոս* <*(s)khēlidro- <*(s)kel- «քշել, արագ շարժել» (ՀՄԲ, էջ 333), *խնջոյ(ք)* <*(s)khendhi-o- <*(s)khendh- «խնդալ» (ՀՄԲ, էջ 336), *խոյզ* <*(s)kheu-gh- <*(s)keu- «ուշադրություն դարձնել, զննել, դիտել» (ՀՄԲ, էջ 340) ևն:

(-իթ/-աթ/-ոթ/-էթ/-ուիթ ածանցի համար հմմտ. *գալ/-իթ, կնճ/-իթ, կող/-կող/-իթ, փաթ/-աթ/-ել, փոթ/-ոթ, սոռ-ոթ/-այ, փաթ/-էթ, խարխ/-ուիթ, մոռ-ուիթ* և այլն): *Խրջիթ* տարբերակի դեպքում երկրորդ ածականը կլինի *g^wh: Այլալեզու նույնարմատ գոլգահեռներից հիշենք հ.հնդկ. *kuṭi* «խրճիթ, խցիկ, տնակ» (Պոկ., № 945, *kert-*, *kerət-*, *krāt-* «պտտվել, գլորվել, գալար»)՝ *U/խ* (սենեակ-խրճիթ) հերթագայության համար հմմտ. *խոր- սոր, խարխախ- սարխախ, խուն «սակավ» - սուն «քիչ»* (ՀՄԲ, 2, 345), *փխրել - փտրել* ևն:

Եզրակացություն

Այսպիսով՝ ներկայացված հ.-ե. ծագման բնիկ հայերեն մի քանի բառեր (*ճամբար, ճամբարակ* «ճոպան, փոկ, շղթա», *ճանապարհ* (*ճամբայ*), *ճամբրուկ, շավիղ, կամար, կամուրջ, կամարտել, սենեակ, խրճիթ*) մինչ այժմ մեծ մասամբ համարվել են կա՛մ հավաստի ստուգաբանություն չունեցող (անհայտ ծագման), կա՛մ փոխառություն այլ լեզվից: Հնչյունական, ձևությային և իմաստային վերլուծությունների հիման վրա առաջարկվում են այդ բառերի ստուգաբանության նոր վարկածներ, որոնց համաձայն՝ դրանք սերվում են հ.-ե. *(s)k(h.)eu- «ծռել, թեքել; հարթել» արմատից:

23 Իմաստային առումով *սենեակ, տնակ* բառերին առնչվում է նաև *խուց* բառը, որը նույնպես հնարավոր է բխեցնել նույն *(s)k(h.)eu- «ծռել, թեքել; հարթել» արմատից, սակայն հաշվի առնելով *խցել* «ճեղքը մի բանով փակել», *խցան* «փակիչ, կափարիչ» և այլ ածանցյալների առկայությունը՝ կարծում ենք, որ ավելի համոզիչ է հ.-ե. *(s)keu- «ծածկել, փաթաթել» արմատի հետ կապելը, որը և արել են Գ. Ջահուկյանը, Բ. Օլսենը և Յ. Պոկոռնին (ՀՄԲ, էջ 350): Նույն *(s)keu- «ծածկել, փաթաթել» արմատից է *խուղ (հիւղ)* «խրճիթ» բառը (ՀՄԲ, 2, էջ 416: ՀՄԲ, էջ 347): Կարծում ենք՝ *խուց, խուղ*-ին նույնարմատ են *քողտիկ, քոլիկ, հոլիկ*, գուցե նաև *կոկալ, քոնձախ, քցուլակ, ծղաղակ* բառերը, որ հումանիշ են *խրճիթ*-ին:

Օգտագործված գրականություն

- Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 3, Ե., 1977:
- Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. III, Ե., 1957:
- Զաքարյան Հ., Ճ սկզբնահնչյունով մի քանի բառերի ստուգաբանություն.- «Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. Գիտական աշխատություններ», 1-2 (22), 2019 (խմբ.՝ Ս. Հայրապետյան), Գյումրի, էջ 228-238:
- Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Դ, Ե., 2007:
- Մալխասեանց Ս., Հայերեն բացատրական բառարան, հ. 3, Ե., 1944:
- Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010:
- Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987:
- Martirosyan H., Etymological dictionary of the Armenian inherited lexicon, «Leiden Indo-European Etymological Dictionary Series, Volume: 8», Brill, 2008.
- Nikolaev S., Database of Indo-European etymology. - <http://starling.rinet.ru/cgi-bin/response.cgi?root=config&morpho=0&basename=\data\ie\piet&first>
- Pokorny J., Indogermanisches etymologisches Wörterbuch. Bern-München, 1959. - <http://dnghu.org/indoeuropean.html>
- Wiktionary / <https://en.wiktionary.org/wiki>

Zakaryan Hovhannes - The Etymology of Armenian Words Ճամբար, կամար, սենեակ, etc.- Armenian words Ճամբար, կամար, սենեակ, etc are not etymologized or are considered to be borrowings. The article, dwelling upon phonetic, morphemic and semantic analyses, puts forward new etymologies for them as native Armenian words derived from the Indo-European root *(s)k(h).eu- "to bend, to curve; to smooth". They are: Ճամբար «camp» <Ճամբ-ար < *sk'ham-bh- < *kh.e-m- < *(s)k(h).eu-,

ճամբայ (*ճամփայ*) «road, way» <*ճամբ-այ* <*sk'ham-bh- <*kh.e-m- <*(s)k(h).eu-, *ճամբրուկ* (*ճամպրուկ*) «bag made of hair; suitcase» <*ճամբր-ուկ* <*ճամբ-ւր- <*sk'ham-bh- <*kh.e-m- <*(s)k(h).eu-, *շալիղ* «path, way» <*շալ-իղ* <*skhau- <*(s)k(h).eu-, *կամար* «arch, vault; belt» <*կամ-ար* <*ska-m- <*(s)k(h).eu-, *կամուրջ* «bridge» <*կամ-ուր-ջ* <*skha-m- <*(s)kh.eu-, *սենեակ* «chamber, room; cabinet» <*սեն-եակ* <*(s)k'en- <*ske-m- <*(s)k(h).eu-, *կրճիթ* «hut, poor cottage; cabin» <*կրճ-իթ <*կուրճ- <*(s)khōr-g^wy- <*skō-r- <*(s)k(h).eu-, etc.

Keywords: Proto-Indo-European, vowel gradation, root variants, initial sound, s-mobile, determinative, affix.

Zakaryan Hovhannes, Phd in Philology, Associate Professor, the Head of Linguistic Department of "Tatev" Center of Research and Education.

Закарян Оганес - Этимология армянских слов *ճամբար*, *կամար*, *սենեակ* и т. д. - Армянские слова *ճամբար*, *կամար*, *սենեակ* и т. д. считаются заимствованными или же не этимологизированными. В настоящей статье на основе фонетического, словообразовательного и семантического анализов предлагаются их новые этимологии, согласно которым данные слова являются исконно армянскими словами, возникшие от индоевропейского корня *(s)k(h).eu- «сгибать, наклонять; «сглаживать». Эти этимологии: *ճամբար* «лагерь» <*ճամբ-ար* <*sk'ham-bh- <*kh.e-m- <*(s)k(h).eu-, *ճամբայ* (*ճամփայ*) «дорога, путь» <*ճամբ-այ* <*sk'ham-bh- <*kh.e-m- <*(s)k(h).eu-, *ճամբրուկ* (*ճամպրուկ*) «сумка из волос; чемодан» <*ճամբր-ուկ* <*sk'ham-bh- <*kh.e-m- <*(s)k(h).eu-, *շալիղ* «тропинка, путь» <*շալ-իղ* <*skhau- <*(s)k(h).eu-, *կամար* «арка, свод; пояс» <*կամ-ար* <*ska-m- <*(s)k(h).eu-, *կամուրջ* «мост» <*կամ-ուր-ջ* <*skha-m- <*(s)kh.eu-, *սենեակ* «комната, кабинет» <*սեն-եակ* <*(s)k'en- <*ske-m- <*(s)k(h).eu-,

իւրճիթ «хижина, изба; кабина» < **իւրճ-իթ* < **իււրճ-* < *(s)khōr-g^wy- < *skō-r- < *(s)k(h.)eu- и т. д.

Ключевые слова: праиндоевропейский язык, чередование гласных, корневые варианты, начальный звук, s-mobile, детерминатив, аффикс. Закарян Оганес, к.ф.н., доцент, руководитель лингвистического отдела Научно-образовательного комплекса "Татев".

ԼԵԶՎԱԿԱՆ ՆՈՐՄԸ ԵՒ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԸ*

DOI: 10.54503/2738-277X.2025.1(22)-125

Մկրտչյան Գարիկ

բանասիրական գիտությունների թեկնածու,

ԶԺՀ Ֆոշան քաղաքի միջազգային դպրոց,

mkrtchyangarik1983@gmail.com

Խառատյան Մելանյա

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,

ավագ լաբորանտ. kharatyanmelanya@gmail.com)

Բանալի բառեր. լեզվական նորմ, միջին հայերեն, հին հայերեն, նոր հայերեն, բարբառ, գրական լեզու, խոսակցական լեզու:

Նախաբան

Հայտնի է, որ լեզվի նորմավորմամբ կամ նորմերի կանոնակարգմամբ զբաղվում են մասնագետները՝ խնդրո վերաբերյալ հատուկ որոշումներն ամրագրելով լեզվաբանական աշխատություններում: Մեր նպատակն է հատուկ մշակված չափանիշների օգնությամբ ձևավորված լեզվաբանական կաղապարներով ստեղծել այսպես կոչված միջին հայերենի լեզվական նորմի կաղապարը և այն կիրառել միջին հայերենի ուսումնասիրության մեջ: Հաշվի առնելով, որ լեզվական նորմի անհրաժեշտությունը ի հայտ է գալիս հատկապես լեզվի տարբերակային ձևերով պայմանավորված, նրա՝ լեզվաբանական կաղապարներով տարբերակումը պարտադիր է միջին հայերենում: Հայերենի տարբերակային ձևերը հենց այս շրջանում են կերպավորում և կիրառական լայն տարածում ստանում:

* Ներկայացվել է 1.07.2025, գրախոսվել՝ 01.09.2025:

Լեզվաբանական բառարանում լեզվական նորմը (նորմա) կամ չափակարգը ներկայացվում է որպես «Տվյալ լեզվով խոսող հանրության կողմից որպես անհրաժեշտություն ընդունված և պարտադիր ճանաչված լեզվական իրողությունների հարաբերակցության կանոնները»¹: Լեզվական նորմը որևէ ժամանակ տվյալ հասարակության կողմից ընդունված, գործածվող և համընդհանուր ճանաչում ստացած, գործածելի լեզվական միավորների ամբողջությունն է: Այդ ամբողջությունից հասարակության անդամներն օգտվում են գիտակցաբար և հավասարաչափ՝ ապահովելով փոխըմբռնելի հաղորդակցում: Լեզվական նորմը ներկայացվում է «լեզվական միջոցների գործածության համընդունված կանոններ»² բնորոշմամբ ևս:

Լեզվական նորմը կամ նորմերը ձևավորվում են լեզվի զարգացմանը զուգընթաց և հիմնվում պատմականորեն առաջացած լեզվական իրողությունների վրա, հետևապես նրանց գործողության ասպարեզը նկատի ունենալով՝ տարբերակվում են նորմերի հետևյալ տեսակները՝ քերականական (gramatical standart/norm), բառային (lexical norm), ոճական (stylistic norm), ուղղախոսական (orthoeotical norm), հնչյունական (sound/phonetic norm) և այլն: Լեզվական նորմը վերաբերում է լեզվական բոլոր մակարդակներին՝ հնչյունների արտաբերմանը, բառապաշարին, լեզվի քերականական կառուցվածքին և նախադասության համակարգերին: Վերջիններս, ենթադրաբար, տրոհվում են ենթանորմերի: Այդպիսիք կարող են լինել՝ լեզվի տարբերակային ձևերը, գրական և խոսակցական լեզուները, բանավոր և գրավոր խոսքը, կենտրոնական, եզ-

¹ Տե՛ս Հ. Պետրոսյան, Մ. Գալստյան, Թ. Ղաթազուլյան, *Լեզվաբանական բառարան* Ե., 1975, էջ 127:

² Յ. Ավետիսյան, *Լեզվական նորմ, նորմավորման չափանիշները*, ԲԵՀ. Հայագիտություն, 143.1, (№ 2), Ե., 2014, էջ 3:

րային (սահմանային) տարածքները, լեզվական համակարգերն ու ենթահամակարգերը և այլն:

Հարցի պատմություն

Լեզվական նորմը մեծ նշանակություն է ստացել 20-րդ դարի երիտքերականության դպրոցի տեսություններում հատկապես գեղարվեստական խոսքի լեզվաոճական օրինաչափություններն ուսումնասիրելիս: Հատկապես հայտնի են խնդրի վերաբերյալ Ֆ. դը Սոսյուրի, Ն. Խոմսկու, Վ. Լաբովի, Մ. Հալփերնի, Ս. Վալբի, Է. Ազիմովի, Ա. Շուկինի, Դ. Ռոզենտալի, Մ. Տելենկովայի, Ա. Ռադուզինի, ինչպես նաև Պրագայի լեզվաբանական դպրոցի ուսումնասիրությունները: Այս լեզվաբանները մշակել են լեզվական ու լեզվաբանական նորմերի այնպիսի համակարգեր, ինչպիսիք են՝ կայուն լեզվի նորմեր (prescriptive norms), գործող հիմնական նորմեր (descriptive norms), հանրալեզվաբանական նորմեր (sociolinguistic norms), գործնական նորմեր (pragmatic norms), փոփոխվող նորմեր (changing norms):

Մեզանում այն կիրառել ու զարգացրել են ժամանակակից հայ լեզվաբանության ներկայացուցիչները՝ հին սերնդից՝ Մ. Աբեղյանը¹, իսկ նոր սերնդից՝ Լ. Հովսեփյանը², Լ. Եզեկյանը³, Ն. Հովհաննիսյանը⁴, Յ. Ավետիսյանը⁵ և Զ. Աղաջանյանը⁶: Լեզվական նորմը

¹ Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, Ե., 1965, էջ 11-13:

² Լ. Հովսեփյան, *ԺԳ դարի հայերեն ձևազրկների հիշատակարանների լեզուն*, Ե., 1997, էջ 7-14:

³ Լ. Եզեկյան, *Հայոց լեզվի ոճագիտություն*, Ե., 2003, էջ 95-98:

⁴ Ն. Հովհաննիսյան, *Լեզվական նորմերից մի քանի շեղումների մասին. արդի լեզվաբանականության խնդիրներ*, Մայրենիի օրվան նվիրված գիտաժողովի նյութեր, 21-ը փետրվար 2013, Ե., էջ 95-97:

⁵ Յ. Ավետիսյան, *Լեզվական նորմ, նորմավորման չափանիշները*: Յ. Ավետիսյան, Գրական հայերենի զարգացման երկու շրջափուլերը՝ գրաբար և աշխարհաբար, Ե., 2016, էջ 3-21:

⁶ Զ. Աղաջանյան, *Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր*, Ե., 2007, էջ 33:

կարևորվել է հատկապես ժամանակակից հայոց լեզվի առանձնահատկությունները նկարագրելիս: Հայոց լեզվի պատմության նախորդ փուլերն ուսումնասիրելիս լեզվական նորմին կարևորություն չի տրվում, որի պատճառները տարբեր են: Որպես գլխավոր պատճառ կարող ենք նշել լեզվի պատմության միագիծ զարգացման ընթացքի թյուր ընկալումը, իսկ երկրորդական պատճառներ կարող են դիտվել պատմահամեմատական մեթոդի ընձեռած հնարավորությունների սահմանափակվածությունը և լեզվական տարածքների միասնական ընկալման՝ այսօր արդեն ոչ ճիշտ համարվող մոտեցումը: Այս առումով այս հետազոտությունն այդ խնդիրների լուծմանն ուղղված ակնարկային և մեթոդաբանական մի նոր փորձ է՝ հիմնված միջին հայերենի տվյալների վրա:

Հետազոտության մեթոդաբանությունը

Հաշվի առնելով այն, որ այս հետազոտությունը նախ և առաջ վերաբերում է լեզվական նորմի մեթոդաբանությանը, ուստի ընթացիկ հետազոտության մեջ կիրառվել են հիմնականում ընդհանրական մեթոդներ, ինչպիսիք են՝ նկարագրությունը, վերլուծությունը, համադրությունը, համեմատությունը և ընդհանրացումը: Նկարագրական մեթոդով ներկայացվել են լեզվական նորմին վերաբերող տեսական ու գործնական բոլոր օրինաչափությունները, վերլուծական մեթոդով մանրամասնորեն վերլուծվել են մեր առանձնացրած չափանիշները, համադրական և համեմատական մեթոդներով համադրվել են լեզվական նորմերն ու ենթանորմերը, ինչպես նաև՝ համադրելի և համեմատելի հակադիր եզրերը, ընդհանրացման մեթոդով տրվել են հետազոտության եզրակացությունները:

Հետազոտության ընթացքը և արդյունքները

Լեզվական նորմը խորհրդանշում է տվյալ լեզվի կարգավիճակը՝ կայունությունը, համակարգվածությունը որոշակի ժամանակահատվածում, ինչպես նաև՝ անկայունությունը և անհամակարգվածությունը, ուստի միջին հայերենի համար առաջարկում ենք լեզվական նորմի հետևյալ անհրաժեշտ չափանիշները՝

ա) Բացարձակ և հարաբերական

Այս չափանիշի կիրառումը պայմանավորվում է լեզվական իրողությունների գործածության գոյության ժամանակով: Այն լեզվական իրողությունները, որոնց գործածության ի հայտ գալու ժամանակը հստակ է, ընդգրկվում են բացարձակ լեզվական նորմի տիրույթում, իսկ անորոշ ու ոչ հստակ իրողություններինը՝ հարաբերականի: Այդպիսին կարող են լինել, օրինակ, բաղաձայնական տեղաշարժերի հարցը հնչյունական համակարգում: Այս առումով կարևոր է Կիլիկյան հայերենի պայթական բաղաձայնների համակարգից բացի նաև այլ բաղաձայնական համակարգերի առկայությունը միջինհայերենյան լեզվական հուշարձաններում, ինչպիսիք են՝ եռաստիճան անտեղաշարժ, եռաստիճան խլագուրկ համակարգերը և այլն: Լեզվական մյուս մակարդակներում նույնպես բացարձակ և հարաբերական չափանիշն իր արտահայտվածությունն ունի, ինչպիսիք են՝ սահմանական եղանակի *կու/կը* եղանակիչի տարածքային բաշխվածությունը, բառապաշարային շերտերի տարբերակվածությունը, բառիմաստների զարգացման ընթացքը և այլն: 11-րդ դարից սկսած՝ վիմական արձանագրությունների լեզվում բավական շատ են բայական համակարգի նոր ձևերը: Այսպես՝ առաջին դեմքի -*մք* փոխարեն -*նք* ձևը համարյա հաստատուն իրողություն է 11-րդ դ. արձանագրություններում, օր՝

՝ «Չափանիշ» եզրը կարող է համարժեք լինել «մեթոդ» եզրին:

7 Մ. Ղազարյան, *Միջին հայերեն*, Ե., 1960, էջ 91-114:

...ժամ նմա առնենք (Հաղպատ, 156, ԺԱ դար), որչափ մեք կենդանի ենք (ն.տ., 200, ԺԳ դար)»:

Առհասարակ, ինչպես ողջ լեզվի պատմության, այդ թվում միջին հայերենի դեպքում հնարավոր չէ սահմանել բացարձակ լեզվական նորմ: Դրանց վերաբերյալ, պարզ է, չկան լեզվական տվյալներ, որոնք հնարավոր է պարզապես վերականգնել, դասդասել բացարձակ և հարաբերական չափանիշի կիրառմամբ: Ըստ էության, բացարձակ և հարաբերական վերականգնումը համարժեք է լիակատար և մասնակի վերականգնումներին: Լիակատար (բացարձակ) վերականգնման վկայություն կարող ենք համարել 10-րդ դ. կալվածագրերում և վիմական արձանագրություններում *ի* քերականական մասնիկի անկումը *n* հոլովիչից առաջ՝ «Ամենայն ազատ որդոց և արիական զաւրաց մերոց՝ գրեցաւ գիտութեամբ և վկայութեամբ ամենեցուն», «Ի նորոգութիւն սուրբ եկեղեցոյ Քրիստոսի Աստուծոյ մերոյ», «Զայս դաստակերտս գնեցի յԱնապատս և ետու յիշատակ հոգոյ իմոյ» և այլն⁹: Մասնակի (հարաբերական) վերականգնման վկայություն է 15-րդ դ. լեզվական հուշարձաններում բառամիջի և բառավերջի դիրքերում երկու բաղաձայնների մեջ լսվող թույլ *ը*-ի գրային արտահայտություն ստանալը՝ «Վասըն նախնեաց բանս որ պատմի, բարառնաբար մեզ հետ խօսի», «Արե՛կ, զիմ ճամփեկըս օրհնէ» և այլն¹⁰: Մինչդեռ կարող ենք ենթադրել, որ այն կարող էր աննշույթ ձևով գոյություն ունենալ ավելի վաղ ժամանակներից¹¹, բայց միայն նշյալ դարից ունի գրային արտահայտություն:

⁸ Է. Մկրտչյան, *Աշխարհաբարի տարրերը միջնադարի գրական հուշարձաններում*, Ե., 1980, էջ 59:

⁹ Ս. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 216-217:

¹⁰ Ս. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 208:

¹¹ Գ. Մկրտչյան, *Հայերենի Ը հոդի ծագման և գործառնության հարցի շուրջ*, ԲԵՀ, № 2 (17), Ե., 2015, էջ 35-43:

բ) Ընդհանուր (հասարակական) և մասնավոր (անհատական)

Այս չափանիշի կիրառումը պայմանավորվում է լեզվական նյութի ընդգրկման նկատմամբ հետազոտողի ունեցած վերաբերմունքով: Լեզվական նորմի այսպիսի չափանիշը կարող է ենթադրել կա՛մ ընդհանուր (հասարակական) մոտեցում, որը ընդգրկում է միջին հայերենի զարգացման ընթացքի հայախոս բոլոր զանգվածները, կա՛մ հակառակը՝ կիրառվում է մասնավոր (անհատական) մոտեցում, որն ընդգրկում է միայն առանձին տարածքային հատվածների կամ անհատների տվյալներ: Այստեղ կարևորություն են ստանում միջին հայերենի տիրապետման շրջանում հայախոս տարածքների համաչափ կամ անհամաչափ բաշխվածությունը և դրանց նկատմամբ լեզվական նորմի կամ նորմերի սահմանումը: Միջին հայերեն հաղոդակցվող տարածքները կա՛մ պետք է ընդգրկվեն մեկ ամբողջության մեջ, կա՛մ դիտարկվեն առանձին-առանձին՝ ընդգրկելով լեզվական և արտալեզվական բոլոր տվյալները: Օրինակ՝ 13-րդ դ. պատմիչ Վարդան Արևելցու ծննդավայրի և գործունեության տվյալները հիմնավորում են նրա պատմության մեջ *-ոււմ* մասնիկով ներկայի կազմության հետևյալ ձևի պատճառաբանվածությունը՝ «Ասցի, թե զինչ քրիստոնեայ կայ եւ արքաւուն ընդ ծով եւ ընդ ցամաք, ամինոյ սիրտ հետ քեզ լաւ է եւ քեզ աղօթք են առնում....»¹²: Այն ցույց է տալիս հեղինակի ոչ միայն ժողովրդական լեզվից ազդվելու դրսևորումը, այլև այդ իրողության արևելյան բարբառներին բնորոշ լինելը: Ի դեպ, հատկապես այս վերջին հանգամանքն անժխտելի է դառնում նաև ժամանակակից բարբառների արդի տվյալներով: Գ. Ջահուկյանն այս դարերի մասին գրել է. «Բարբառային տարբերություններն այս շրջանում նշանակալից չափով աճում են՝ տերիտորիալ առանձնացման

¹² Է. Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 36:

և աշխարհի տարբեր մասերում հայկական գաղութներ հաստատելու ուժեղացող պրոցեսների հետ կապված: Գծագրվում են Ժամանակակից բարբառային տարբերությունների սաղմերը»¹³: Մենք ընթանալու ենք առանձին տարածքներում լեզվական նորմի և դրանց հիման վրա մեկ ընդհանուր նորմի կամ նորմերի սահմանման ճանապարհով:

Ինչպես գիտենք, որպես բուն տերիտորիալ (տարածքային) միավոր՝ միջին հայերենի ընդհանուր տարածքներից առավել հանգամանորեն ուսումնասիրվել է Կիլիկիայի գրական միջին հայերենը, և այն ունի լեզվական օրինաչափությունների հայտաբերած անկայունությունների մեծ քանակ: Միջին հայերենը մասնավոր տարածքներ ունի նաև Պատմական Հայաստանի տարբեր վայրերում՝ Անի, Շիրակավան, Նիգ, Վարաժնունիք, Վայոց ձոր, Սևան, Երզնկա, Վան, Մոկս և այլն, որոնց վերաբերյալ կան ուշագրավ նյութեր¹⁴: Այդ նյութերի մասնագիտական քննությունը կպարզի նրանց տարբեր կողմերի հարաբերակցությունը՝ լեզվական տարածքների էական և ընդհանուր գծերը, միջին հայերենի գրական տարբերակի կամ տարբերակների մշակվածության աստիճանը, նրանց գրական, բարբառային, խոսակցական հիմքերը և պատկանելությունը, մշակվածության և ազդեցությունների աստիճանը և այլն: Ի վերջո, այս չափանիշի կիրառումը ցույց կտա այն, ինչը լեզվական այս կամ այն տարբերակում համընդհանուր նորմ է կամ կանոն, իսկ այլ տարբերակներում՝ բացառություն կամ եզակի նորմ: Հատկանշական է, որ միջին դարերում հայ բնակչության տեղահանություններն ու գաղթերը ցավալիորեն փոխում են բազմա-

¹³ Գ. Զահուկյան, *Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը*, Ե., 1969, էջ 45:

¹⁴ Մ. Մարգարյան, *Գրական միջին հայերենի տերիտորիալ տարբերակների հարցի շուրջը* (XII-XIV դարեր), Լեզվի և ոճի հարցեր, III, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., Ե., 1975, էջ 212:

թիվ բնակավայրերի բնակկազմը՝ ստեղծելով լեզվական փոխազդեցություններ տարբեր բարբառների միջև, առաջացնելով առանձին համայնքներ՝ մեկուսացած հայ բնաշխարհից¹⁵:

գ) Գրավոր (գրական) և բանավոր (խոսակցական)

Այս չափանիշի կիրառումը միջնադարյան լեզվական հուշարձաններում ընդգրկված լեզվական նյութերի բովանդակային կողմերի և մշակվածության աստիճանի տարբերակումն է: Հատկանշական է, որ վերջին շրջանի մասնագետները եկել են այն կարևոր եզրահանգման, որ բացի պատմագիտական, բժշկագիտական և քնարերգական ստեղծագործություններից միջին հայերեն են գրվել նաև «...գյուղատնտեսական, անասնապահական, փիլիսոփայական, տիեզերագիտական բովանդակության արժեքավոր երկեր՝ ինքնուրույն և թարգմանական հիմքերի վրա»¹⁶, որոնք, ըստ պահանջի, «...ուղղված էին առավելապես աշխարհիկ բնակչության պահանջներին»¹⁷:

Այս ամենը ենթադրում է, որ նախ և առաջ պետք է սահմանել գրավոր լեզվի նորմ՝ հիմնված բոլոր գրավոր տվյալների վրա: Վերականգնված տվյալներով կատարվում են լեզվական նորմի սահմանազատումներ ենթանորմերի տեսքով՝ գրական լեզվի նորմ, խոսակցական լեզվի նորմ: Դրանք կարող են համընկնել կամ չհամընկնել միջին հայերենի ընդգրկման այս կամ այն դարում և տարածքներում: Ըստ էության, նորմավորման նպատակով գրավոր տեքստերից առանձնացվելու են միջին հայերենի գրական և խոսակցական տարբերակները: Բանավոր և խոսակցական լեզվի

¹⁵ Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ.Ա., Ե., 1975, էջ 35:

¹⁶ Ա. Աբաջյան, Ն. Դիլբարյան և այլք, *Միջին հայերենի ուղեցույց-քրեստոմատիա*, Ե., 2019, էջ 8:

¹⁷ Լ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 11:

նորմերը գատորոշելիս դարձյալ կիրառվում է վերականգնման մեթոդը: Միայն այդպես է հնարավոր տալ այդ լեզվավիճակում բանավոր և խոսակցական տարբերակների առանձնահատկությունները, յուրահատկությունները և տարածք առ տարածք ունեցած հարաբերակցությունները՝ ընդհանրությունները և տարբերությունները: Այսպիսի չափանիշը ձևավորում է նաև լեզվական միջոցների օրինակելի կիրառությունը որոշող նորմեր: Այն կոչվում է լեզվի գրական նորմ (literary norm), որից կատարվող ամեն մի շեղում համարվում է սխալ, անընդունելի կամ բանավոր-խոսակցական:

Ընդունված է համարել, որ լեզվական նորմն ամենից առաջ գրական լեզվի նորմն է՝ ներառելով նրա բոլոր լեզվական, քերականական օրինաչափությունները, և գործում է լեզվի բոլոր մակարդակներում՝ սկսած հնչյունական-արտասանականից մինչև շարահյուսության ոլորտը¹⁸: Հատկանշական է, որ գրական նորմը ներառում է գրական լեզվի բոլոր իրողությունները և ներկայանում է բազմաթիվ ենթանորմերով, ինչպիսիք են՝ հնչյունափոխական, ուղղագրական, ուղղախոսական, բառային, բառակազմական, տերմինաբանական, քերականական, կետադրական, ոճական նորմերը և այլն: Այս ենթանորմերն ունեն հստակ արտացոլում միջին հայերենի գրավոր-գրական տարբերակներում:

Ըստ էության, գրավոր-գրական տարբերակների հիման վրա է վերականգնվում միջին հայերենի լեզվական նորմը՝ ներկայացնելով այն որպես համակարգ: Նկատենք, որ միջին հայերենում գրական նորմն ավելի հեշտ է առանձնացնել, վերլուծել, նկարագրել: Մինչդեռ լեզվական նորմի տարբերակմանը հնարավոր է հասնել բազմաթիվ խնդիրների ու խոչընդոտների հաղթահար-

¹⁸ Լ. Եզեկյան, *Հայոց լեզվի ոճագիտություն*, էջ 95:

մամբ: Օրինակ՝ ինչո՞ւ են ժամանակակից գրական հայերենի տարբերակները համարվում հնարավորինս կանոնակարգված, քանի որ լեզվական նորմը հիմնված է կենդանի լեզվի գրականացած օրինաչափությունների վրա, մինչդեռ միջին հայերենի դեպքում դա հնարավոր է անել միայն ճկուն և հետևողական վերականգնումներով: Միջին հայերենում հստակ տարբերակվում է գրական լեզվի նորմը, իսկ լեզվական նորմը երկպալան է: Այն լեզվաբանական կադապարների տեսքով կարող է արտացոլել թե՛ գրական, թե՛ խոսակցական լեզուների օրինաչափությունները և ներկայացնել դրանք որպես վերականգնված լեզվական համակարգեր:

Հիմք ընդունելով այս ամենը՝ նպատակահարմար ենք համարում միջին հայերենի համար ընդունել տարածքային լեզվական հատկանիշը որպես լեզվական նորմի չափանիշ: Սա ենթադրում է բարբառային հատկանիշների տեղայնացումը ըստ առանձին տարածքների բաշխվածության և տարածքային պատկանելության: Այսպիսի մոտեցումը պատճառաբանվում է նրանով, որ միջին հայերենում լեզվական նորմի վերականգնման բազան բացառապես գրավոր և գրական լեզուն է՝ ըստ բացարձակ և հարաբերական վերջնարդյունքի: Միջին հայերենի լեզվական նորմը կամ նորմերը և նրանց ենթանորմերը տարբերակելիս ստեղծվում են համապատասխան լեզվաբանական կադապարներ վիճակագրությունների կամ սխեմաների տեսքով:

Լեզվի նորմավորումը կատարվում է երկու եղանակով՝ բնական և միջնորդավորված: Բնական նորմավորումը հենց ներկայանալի լեզուն է՝ վերցրած իր տարածքային և փուլային դրսևորումներով: Միջնորդավորված նորմավորումը հիմնականում գրավոր կամ գրական լեզվի կանոնակարգման մեջ անհատական միջամտություններն են: Գրավոր լեզվի և նրա տարա-

տեսակների նորմավորումն անհատներն են կատարում: Մրանով է պայմանավորված, որ գրավոր լեզուն հնարավորինս ենթարկվել է մշակման: Հայ գրական լեզուներից հին հայերենը և արդի գրական հայերենի երկու տարբերակները ներկայանում են իբրև կանոնավորված և նորմավորված լեզուներ: Հաշվի առնելով, որ «....միջին հայերենի շրջանի համար խիստ բնորոշ է լեզվական տարբեր համակարգերի փոխներթափանցումը, տարբեր ծագում ունեցող ձևերի զուգահեռ կիրառությունը միննույն բնագրում»¹⁹, հատկանշենք, որ միջին հայերենը որոշակի նորմավորում չունի դեռևս, և այդ ուղղությամբ կատարվել ու կատարվում են մասնակի փորձեր: Լեզվական նորմի ստեղծումը լեզվական կադապարների հիման վրա և նրա կանոնավոր կիրառումը կլուծեն նաև միջին հայերենի կանոնավորման և նորմավորման խնդիրները:

Գրական լեզվի նորմը և խոսակցական լեզվի նորմն ունեն որոշակի սահմանափակվածություն և կիրառական ոլորտներ միջին հայերենում: Այս եզրակացությունը կարողացել ենք տալ՝ հիմնվելով արդի գրական լեզվի և տարածքային խոսակցականների ներկա դրության տվյալների վրա: Ակնհայտ է, որ այսօր գրական լեզուն կատարում է որոշակի, տարատեսակ օրենքներով ամրագրված գործառույթներ, իսկ նրա տարածման և տիրապետման ոլորտները դարձել են անսահմանափակ՝ ռադիո, հեռուստատեսություն, համացանցային իրականություն և այլն: Ապարանի, Աշտարակի, Գորիսի, Թալինի և մյուս շրջաններում ապրողները հստակ տարբերակում ու հասկանում են գրական նորմավորված հայերենը, հարկ եղած դեպքում անգամ հաղորդակցվում՝ այն ընկալելով որպես «քաղցրոց լեզու», «քաղքավարի խոսք»: Այս բնութագիրը չենք կարող վերագրել նախորդ դարերի բարբառախոս-

¹⁹ Լ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 11:

ներին: Անցյալում գրական լեզուն միանգամայն այլ գործառնություններով է ներկայացել: «Քաղքցոց լեզու», «քաղքավարի խոսք» և «գեղավարի», «գեղացոց լեզու» բնորոշումներն ուղիղ համեմատական են հայերենի զարգացման նախամիջին ենթաշրջանում շրջանառության մեջ դրված «քերթողական լեզվի» և «գեղջուկ բարբառի», «գեղջուկ բանի»²⁰, «ըստ քերթողական հրահանգացն» և «քերթողական արուեստի»²¹ եզրույթներին: Ըստ ամենայնի, այսկերպ գատվում են միմյանցից գրական և խոսակցական լեզուները: Հայոց բուն միջնադարում խոսակցական լեզվի համար կիրառական էին «գոեհիկ, մթին լեզու, գեղջուկ բան, գեղջուկ բարբառ, բան գավառի, գեղջուկ բառ» բնորոշումները: Այս համադրությունը վկայությունն է այն բանի, որ լեզվի ընդգրկման ժամանակը և հասարակական դասակարգերը փոխվում են, բայց գրական և խոսակցական լեզուների աշխարհընկալումը և տարբերակումը մնում են նույնը:

Խնդիրն այն է, որ միջին հայերենի տարբեր էտապներում առաջ է մղվել տեղային տարբեր առանձնահատկություններ ունեցող բանավոր լեզվին կարևորություն տալու սկզբունքը: Դրա վկայությունն է տարբեր միջավայրերի ոչ միատարր խոսակցական հայերենի գրավոր-գրային արտահայտություն ստանալը: Այս իրավիճակին նպաստել է նաև միասնական պետության չգոյությունը, որի պատճառով հայ ժողովրդի համաձույլ ընթացքը խաթարվել էր: Այս առումով կարևոր դիտարկում է կատարել միջին-հայերենյան տերիտորիալ տարբերակների առաջին հետազոտող Մ. Մարգարյանը. «Եվ գրականացող միջին հայերենն ընթանում էր ո՛չ այնքան միագլիժ հունով, դեպի միասնական նորմավորում, որքան այս կամ այն վայրի բարբառներից զգալի ազդեցություն կրելով, բարբառներ, որոնք միջին հայերենի փուլում հանդես էին

²⁰ Տե՛ս **Գ. Զահուկյան**, նշվ. աշխ., էջ 43:

²¹ **Է. Մկրտչյան**, նշվ. աշխ., էջ 4:

բերում հնչյունաբանական, բառապաշարային, իմաստաբանական, քերականական որոշակի տարբերություններ»²²:

Միջնադարում ստեղծված քաղաքական անբարենպաստ պայմաններում գրական լեզուն չունեի հնարավոր գործառույթ բանավոր-խոսակցական լեզվի տարբերակներն իր մեջ ձուլելու: Ինչպես նկատում են մասնագետները, այդ մասամբ հնարավոր էր անել մասսայական գրագիտության և գրական երկերի անսահմանափակ հրատարակությունների միջոցով, բայց դա հնարավոր չէր անել այն ժամանակվա տնտեսական և արտադրության միջոցների զարգացման մակարդակի պայմաններում. «Տպագրական արհեստի բացակայության պայմաններում, երբ «գրքերի» բազմացումը կատարվում էր արտագրությունների միջոցով, ինչքան գրական երկեր կարելի էր արտադրել, որ հնարավոր լինեի դրանցով մի ամբողջ ժողովրդի լեզու պահել գրական լեզվի ազդեցության տակ»²³:

դ) Ժամանակի ամբողջական և հատվածական ընդգրկում

Այս չափանիշը ենթադրում է միջին հայերենի ընդգրկած ժամանակն իր ամբողջության մեջ. կա՛մ այն ընդգրկում է վարից վեր՝ որպես մեկ ամբողջություն, կա՛մ ընդգրկում է այդ մեկ ամբողջության այս կամ այն հատվածը, այսինքն՝ առանձին ընթացքը: Մենք հակված ենք կիրառելու ամբողջական ընդգրկումը: Միայն այսպես է հնարավոր որոշակի ժամանակի մեջ տարորոշել միջին հայերենի լեզվական համակարգի բնութագրիչները՝ ընդհանուրն ու մասնավորը, գրականն ու բարբառայինը, լեզվական նորմերն ու ենթանորմերը: Ի վերջո, ժամանակի ամբողջական ընդգրկումը հնարավորություն կտա ցույց տալու փուլ առ փուլ ուժեղացող բարբառային տարբերությունները միջին հայերենում, որոնց հի-

²² Մ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 212:

²³ Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, էջ 33:

ման վրա տեսանելի կդառնան բարբառային, ենթաբարբառային, ենթախոսվածքային տարբերությունները²⁴:

Եզրակացություններ

ա) Դիտարկված չափանիշների հիման վրա ստեղծվելիք լեզվական նորմը կամ նորմերը կարտացոլեն միջինհայերենյան համակարգերի դասավորությունը, համակարգվածությունը և կանոնավորությունը, կորոշեն գրական և խոսակցական լեզուների միջև եղած սահմանները, ինչպես նաև՝ դրանց ճշգրտման մոտավոր ուղիները:

բ) Միջին հայերենի համար հնարավոր չէ սահմանել մեկ միասնական լեզվական նորմ: Մեկ լեզվական նորմը ենթադրում է բազմաձևությունների և անմիօրինակությունների առատություն, դար առ դար ունեցող տարբեր դրսևորումներ:

գ) Խառը տիպի լեզվական նորմի գաղափարը շրջանառելու դեպքում գերիշխող կդառնան անմիօրինակություններն ու բազմաձևությունները, որոնք կդիտվեն որպես ոչ թե շեղումներ, այլ համակարգեր:

դ) Փորձ է արվում ընթանալու առանձին տարածքներում լեզվական նորմի և դրանց հիման վրա մեկ ընդհանուր նորմի և ենթանորմերի սահմանման ճանապարհով՝ հիմնվելով վերականգնված տվյալների վրա: Ըստ այդմ՝ լեզվական նորմերը կարտացոլեն լեզվական բոլոր տարածքները մեկ ամբողջության մեջ՝ համապատասխան ներքին բաժանումներով:

ե) Լեզվական կաղապարների հիման վրա ստեղծված լեզվական նորմը կամ նորմերը և նրանց կանոնավոր կիրառումը կլու-

²⁴ Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, էջ 42-43:

ծեն նաև միջին հայերենի կանոնավորման և նորմավորման մի շարք խնդիրներ:

զ) Առաջարկվում է միջին հայերենի համար ընդունել տարածքային լեզվական հատկանիշը որպես լեզվական նորմի չափանիշ, որը կհստակեցնի բարբառային հատկանիշների տեղայնացումը ըստ առանձին տարածքների:

է) Միջին հայերենի համար ստեղծվելիք լեզվական նորմը կհիմնավորի՝ միջին հայերենը գրական լեզո՞ւ է, թե՞ գրականացող ըստ տարբեր դարերի տվյալների:

ը) Միջին հայերենի լեզվական նորմը կամ նորմերը և նրանց ենթանորմերը տարբերակելիս նախընտրելի է ստեղծել և լայնորեն կիրառել լեզվաբանական կադապարներ վիճակագրությունների կամ սխեմաների տեսքով:

Օգտագործված գրականություն

Աբաջյան Ա., Դիլբարյան Ն. և այլք, Միջին հայերենի ուղեցույց-քրեստոմատիա, Ե., 2019:

Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965:

Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Ե., 1975:
Աղաջանյան Զ., Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Ե., 2007:

Ավետիսյան Յ., Լեզվական նորմ, նորմավորման չափանիշները, ԲԵՀ. Հայագիտություն, 143.1, (№ 2), Ե., 2014:

Ավետիսյան Յ., Գրական հայերենի զարգացման երկու շրջափուլերը՝ գրաբար և աշխարհաբար, Ե., 2016:

Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, Ե., 2003:

Հովհաննիսյան Ն., Լեզվական նորմերից մի քանի շեղումների մասին. արդի լեզվաքաղաքականության խնդիրներ, Մայրենիի օրվան նվիրված գիտաժողովի նյութեր, Ե., 2013:

Հովսեփյան Լ., ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն, Ե., 1997:

Ղազարյան Ս., Միջին հայերեն, Ե., 1960:

Մարգարյան Մ., Գրական միջին հայերենի տերիտորիալ տարբերակների հարցի շուրջը (XII-XIV դարեր), Լեզվի և ոճի հարցեր, III, Ե., 1975:

Սկրտչյան Գ., Հայերենի Ը հոդի ծագման և գործառության հարցի շուրջ, ԲԵՀ, № 2 (17), Ե., 2015:

Սկրտչյան Է., Աշխարհաբարի տարրերը միջնադարի գրական հուշարձաններում, Ե., 1980:

Պետրոսյան Հ., Գալստյան Ս., Ղարազուլյան Թ., Լեզվաբանական բառարան, Ե., 1975:

Ջահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969:

Mkrtchyan Garik-The Linguistic Norm and Middle Armenian. -The author's aim is to define the so-called linguistic norm of Middle Armenian using specially developed criteria and linguistic models, and to apply this framework to the study of Middle Armenian. This research presents a methodological and preliminary attempt to address this issue. The linguistic norm is considered essential for the Middle Armenian period, as this is the era in which various forms of Armenian emerge and gain broad usage. A linguistic norm represents the status of a language during a certain time – whether it is stable and systematic or unstable and disorganized. For this reason, the author proposes the following necessary criteria for defining the linguistic norm in Middle Armenian: a) absolute and relative, b) general (societal) and individual (private), c) written (literary) and oral (colloquial), d) comprehensive and segmented in time.

The author concludes that it is impossible to define a single unified linguistic norm for the entire Middle Armenian period as one coherent system of rules. One must take into account its diversity and irregularities across centuries. Thus, it may be more appropriate to speak of a mixed type of linguistic norm - dominated by variations and inconsistencies - or to distinguish between multiple linguistic norms that together encompass all linguistic areas as a whole.

The author also suggests adopting the regional linguistic feature as a criterion for the linguistic norm of Middle Armenian, which would clarify the localization of dialectal features according to specific regions.

Keywords: lingual norm, Middle Armenian, Classical Armenian, Modern Armenian, dialect, literary language, colloquial language.

Garik Mkrtchyan, PhD in Philology, Associate Professor at Yerevan State University, teacher in International School of Foshan, PRC.

Melanya Kharatyan, Senior laborant, Institute of Language named after H. Acharyan of NAS RA.

Մկրտչյան Գարիկ- Лингвистическая норма и среднеармянский язык. -Цель автора -с помощью специально разработанных критериев и языковых моделей определить так называемую языковую норму среднеармянского периода и применить её в исследовании этого этапа развития армянского языка. Данное исследование представляет собой методологическую попытку обозначить и подойти к решению этой задачи. Языковая норма, как считает автор, необходима для периода среднеармянского, поскольку именно в это время формируются и широко распространяются различные варианты армянского языка. Языковая норма отражает статус языка в определённый период -его устойчивость или, наоборот, нестабильность и несистемность. В связи с этим предлагаются следующие критерии языковой нормы для сред-

неармянского языка: а) абсолютная и относительная, б) общественная (общая) и индивидуальная (частная), в) письменная (литературная) и устная (разговорная), г) охватывающая весь период или его отдельные отрезки.

Автор приходит к выводу, что невозможно установить единую языковую норму для всего периода среднеармянского языка как целостную систему правил. Следует учитывать многообразие и неоднородность языковых проявлений в разные века. В этом случае возможно говорить либо о смешанном типе языковой нормы, где преобладают вариативность и неоднородность, либо о множественных нормах, объединяющих различные языковые области в единое целое.

Автор также предлагает принять региональную языковую особенность в качестве критерия языковой нормы среднеармянского языка, что позволит уточнить локализацию диалектных черт по отдельным регионам.

Ключевые слова: языковая норма, среднеармянский язык, древнеармянский язык, новоармянский язык, диалект, литературный язык, разговорный язык.

Гарик Мкртчян, кандидат филологических наук, доцент Ереванского государственного университета, Учитель в международной школе г. Фошань, КНР.

Меланя Харатян, старший лаборант, Институт языка имени Р. Ачаряна НАН РА.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սուրբիասյան Հենրիետա - Գևորգ Զահուկյանը՝ գիտնականի ճշմարիտ կերպար.....	5
---	---

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Խաչատրյան Հասմիկ - Դիտարկումներ Կոզենի բարբառի բառապաշարի շուրջ.....	13
Կատվալյան Վիկտոր - Լոռու խոսվածքի և Արարատյան բարբառի առնչությունների շուրջ.....	29
Ղարիբջան Ալինա - Արևմտահայերեն բժշկագիտական տերմինները Նազարեթ Տաղավարյանի «Բառացուցակ ախտանուանց»-ում.....	49
Մանվելյան Սերգեյ - Էդվարդ Գովանի հայերեն-թուրքերեն և թուրքերեն-հայերեն բառարանները.....	65
Վարդանյան Արտակ - Պարսկերենից փոխառյալ բառակապակցություններ Ճահուկ-Վայքի միջբարբառում.....	81
Ֆիշենկյան Անի - Ներգործական բայերու խնդրառութեան հիմնահարցերը հայերենի մէջ (Արևելահայերեն- արևմտահայերեն).....	93
Զաքարյան Հովհաննես - <i>Ճամբար, կամար, սենեակ</i> և մի քանի այլ բառերի ստուգաբանության շուրջ	107

ՀԱՂՈՐԴՈՒՄ

Մկրտչյան Գարիկ, Խառատյան Մելանյա - Լեզվական նորմը և միջին հայերենը.....	125
--	-----

CONTENTS

Sukiasyan Henrieta -Gevorg Jaukyan: the True Figure of a Scientist.....	5
--	---

ARTICLES

Khachatryan Hasmik - Observations on the Vocabulary of the Krzen Dialect.....	13
Katvalyan Victor - On the Relationships between Lori Speech and the Ararat Dialect.....	29
Gariabyan Alina -Western Armenian Medical Therms in the "Dictionary of Disease Names" by Nazareth Taghavarian.....	49
Manvelyan Sergey -Edward Govan's Armenian-Turkish and Turkish-Armenian dictionaries.....	65
Vardanyan Artak - Word Collocations Borrowed from Persian in the Jahuk-Vayk interdialect.....	81
Fishenkjian Ani - The Basic Issues of the Problem of Intergrative Verbs in Armenian (Eastern Armenian-Western Armenian).....	93
Zakaryan Hovhannes - The Etymology of Armenian Words <i>ճամփար, կամփար, սենեակ</i> , etc.....	107

REPORT

Mkrtchyan Garik -The Linguistic Norm and Middle Armenian.....	125
--	-----

СОДЕРЖАНИЕ

Сукиасян Генриета - Геворг Джаукян: истинная фигура ученого.....	5
---	---

СТАТЬИ

Хачатрян Асмик - Наблюдения над словарным составом крзенского диалекта.....	13
Катвалян Виктор - О взаимоотношениях Лорийского говора и Арагатского диалекта.....	29

Гарибян Алина -Западноармянские медицинские темины в "Словаре имен заболеваний" Назарете Тагаваряна.....	49
Манвелян Сергей - Армяно-турецкий и турецко-армянский словари Эдварда Гована.....	65
Варданян Артак - Словосочетания, заимствованные из персидского языка в Джаук-Вайкском междиалекте.....	81
Фишенкчян Ани - К вопросу об управлении действительного залога в армянском языке (восточноармянский и западно-армянский).....	93
Закарян Оганес - Этимология армянских слов <i>ծիրիր</i> , <i>լիւլիւր</i> , <i>սկսկիւլ</i> и т. д.....	107

СООБЩЕНИЕ

Мкртчян Гарик - Лингвистическая норма и среднеармянский язык.....	125
--	-----

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՋԱՀՈՒԿՅԱՆԱԿԱՆ
ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

1 (22)

Ձևավորումը և էջադրումը՝
Մ. Խառատյանի

Կազմը՝ Ս. Արևշատյանի

Խմբագրության հասցեն՝ 0015, Երևան 15, Գրիգոր Լուսավորչի 15, հեռ. (010)565337
Address: Grigor Lusavorich str. 15, 0015, Yerevan, Armenia, tel. (010)565337
Адрес редакции: 0015, Ереван-15, ул. Григора Лусаворича 15, tel. (010)565337

Հանդեսի պաշտոնական կայքը՝ <http://language.sci.am>
Official site of the journal: <http://language.sci.am>
Официальный сайт журнала: <http://language.sci.am>

Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ instlingv@sci.am, inslang@sci.am
E-mail of the journal: instlingv@sci.am, inslang@sci.am
Электронная почта журнал: instlingv@sci.am, inslang@sci.am

ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ